

D. Papageno

Greif aus der  
Welt

b. II

München - 1930

891.99

12-89



19 NOV 2011

EFOS

Հ. Արմ.

13-4601/Հա. Մ. ԹՈՐԳՈՎՅԱՆ

# ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ


ՀԱՅԱ ՍԵՐԿՐԱԲԻ

ԽՆՎԱ/27189.



ՍԱԼԵԼԳԱՄԻ

ԹՐԻՖԼԻՆ-1930



22.04.2013

31669


## ՍՈԼԿԱՐ ՄԻՆԱՍԸ

Ամուսնության նախորդ գիշերը սովորութիւնները լինասը յիրկնցել ճռճռան թախտին՝ նայում եր մի անորոշ կետի : Յերկհարկանի շինության տակ չողած նրա կիսամութ նկուղը նման եր մի քարայրի և մասյլ խորշերի պես լուսամուտները հազիվ եյին կարողանում գետնահարկից լույս աշխարհը տեսնել : Պատին կպցրած փոքրիկ, սեացած լամպից վախճենով գուրս եյին ցայտում լույսի դալուկ ցոլքեր, մոխրագույն գաճով ծեփած պատերն իվեր սողսոկում և գեռ նկուղի անկյունները չհասած՝ խամարից հազթահարմելով՝ մընում եյին կիսաճամբին :

Թաղիքի վրա ննջել եր վորդին, վրբի չնչառությունը թույլ, խորմղող ձայներ եր հայտնում, իսկ կողքին կծկվել, կծիկ եր գառել թաշամազ կատուն, նրա մարմնին հաղորդելով ջերմություն և ախորժելի շոյանք :

Մինասի թուխ, ճաքճաքած դեմքը մասյլվել, թըթվել եր, ճակատը կնճիռներով՝ ակոսվել, դարձել դարու փոս :

\*) Զուստ կարող :



4869-87

Ա. Ա. Բյանիկյանի ան. հրատարակութ. Զարյա Վասոնկանի  
Պատվեր № 1505 Քանակ 2009 Գլամելիս 1698

«Պոսակիւնը կողսակիվեմ, բավական և ոֆախս փարիշան մնաց, մեղք եմ, երեխի տեր: Բայց յիթե Գյուլնազը վորտեղից վոր և վերադառնա»...»

Մոայլ մտքերը գրկեցին նրան և տարան հեռու-հեռու տեղ, դեպ այն ահայի ձորը, յերբ նրանք փախի տարին, մի սարսափելի գիշեր, տուն ու տեղը թողած, բնավեր թռչունների պես փախչում եյին...»

Դարձանակալ թշնամին հանկարծակի հարժածով կիսեց փախստականների շղթան, հայրը վորդու, կինն սոմուսնու, յեղբայրը քրոջ վրա մուլուից ու գայլահաւած հոտի պես ցիրուցան յեղավ, ամեն մեկն իր զլիի ճարին:

Մինասը շալակեց վեց տարեկան վորդուն՝ Վաղ-դենին ու փախավ խելակորույն, բայց կինը մնաց թրշ-նամու ողակի մեջ...».

Եյնուհետև Մինասը շատ գես ու գեն բնկավ, հարց ու փորձեց, փնտուեց, իդո՞ւր. իր կինը չկար, Գյուլ-նա՞զը...»

Հինգ տարի անցավ:

Հինգ տարի ծանր դրկանքների մեջ ապրեց Մինասը: Առավոտից մինչև իրիկուն մեջքը ծուած աշխատում եր, չուստ կարում կամ որանիրա մաշված կոշիկները կարկատում: Տունը հավաքող, մաքրող, կեր-կերակուր յիմող ձեսք չկար: Ինքն ու տղան անխնանմ եյին, կեզտոտ: Վորդին, մանավանդ, հողացող ձեռքից և ուշազիր աչքից զուրկ՝ թափառում եր փողոցից-փողոց, անապատան յերեխաններին բնեկը դառել, հաւ ու մաշ եր լինում:

«Տունն առանց կնկա ավերակ ե, Մինաս ախազեր, պակիվիր ու չնորբով մարդ գարձիր, յերեխաւ ունես, բավական և քաղցած ու տկլոր որանը դռանը քաշ կաշ...»:

Այսպես եյին խորհուրդ տալիս ծանոթնեցը, վո-րոնց տեսնում եյին դրկանքով լի նրա կյանքը, խրդ-ճում:

Աւ Մինասը վորոշեց ամուսնանալ:

Եյն կնոջը, վորի հետ պիտի ամուսնանար, վաղուց եր ճանաչում, իրենց թաղումն եր բնակվում: Մի քա-նի անդամ պատաստոված կոշիկներ եր տվել իրեն կար-կատելու: Սյրի կին եր: Ծանոթները մեջ ընկած, յեր-ճուստեք խոսեցին և զործը գլուխ բերին:

«Բայց Գյուլնապն ուրիշ բան եր, ուրիշ»...».

«Ե՞իս, Ե՞իս նայաթ չար սատանին, ինչ որեր տեսավ Մինասը...»:

\*\*\*

Ամուսնությունը շատ համեստ անցավ: Մի քանի ծանոթ հայրենակիցներ՝ փինաչի, սոլիկար, չխառիչի, նալթակաճառ հավաքվեցին, զինի խմեցին, ուրախա-ցան, ու այլպես պակիվեց սոլիկար Մինասը:

Այժմ տանը կին ուներ — Յեղսանը, մի բարձրա-հասակ, թիսպեմ, չըթունքները հաստ և աղվամա-ղավ պատած կին: Գյուլնազի պես զբավիչ չեր (Գյուլ-նազի զեղեցկությունը Մինասի հոգում մնաց վորդերին հմտու եր, բլացող, մաքրազ, կարկատող: Սկզբի որե-րին վաղենը խեթ նայեց խորթ մորը, ծաղկանիշ զըլ-խաշորով, ծիրանեղույն զաղունով իր սիրելի մայրիկը

չեր... Յայց այս նորեկը տունը կարդի բերեց, նոր շուրջը հաղցրեց յերեխին և վերջինս հետզհետեւ վարժվեց նրան :

Շուտով Յեղսանն ամբողջ տունն ձեռքը հավաքեց, կարգադրողն ու դեկալարը դարձավ : Մինասը բարեհ համբուլյը մարդ եր, յերեսկապ, ամեն բանի համակերտող . նրան հետ եր գործի գնել, թելադրել :

Հարեանները լսում եյին, թե ինչպես Յեղսանը, յերբ առավոտ վաղ ճամբու յեր դնում մարդուն, բարձրը, տպամարդային ձայնով կանչում եր .

— Մինա՛ս, այսոր ճաշի համար միս բեր, ինձ համար մի պսպղուն կոշիկ առ հաղնեմ, կանաչ ու հայրեր, լողկը չմուանաս, Մինա՛ս :

Մանսթները հարցնում եյին, թե արդյոք Մինասը դո՞ւ ե Յեղսանից :

— Փառոք մնաք, յուա կերթանք, ի՞նչ ունենք բաժանելու, վոր կովտենք; ինձի հարմար կին ե, իշու...

\*\*\*

Հետզհետեւ կյանքը կանոնավոր հունի մեջ մտավ : Մինասի գետնահարկ նկուղն այժմ կարդի յեր բերված, ճաճուն թախտեր կային շարված աջ ու ձախ, սեղան կար, աթոռներ, հավեր ել ունեյին, ու հաճախ լսվում եր Յեղսանի բարձր, ազգու ձայնը, յերբ հավերը քրչ-քաղով գալիս մտնում եյին ներսը .

— Քա՛, քը՛շ, անտեր մնաք, կորեք ե՛...

Կրակարանի վրա տաք կերակուր եր պատրաստվում . սեղանին քլթքլթում եր վոքրիկ ինքնայեսը: Յուրա յերեկոները վառարանի շուրջն եր հավաքվում :

ամբողջ լնտանիքն ու տաքանալով զրուցում : Մինասը շա՛տ գոհ եր .

«Ե՛ս, կյանք ե, իշու, կապրինք, որ մը լավ, որ մը վատ, յուա կերթանք, իշու...»

Մինասն այժմ ավելի կարգին եր հաղնվում : Ա-սաշվա զզզզված, հազար ու մի տեղ կարկատան շարած հակուստը չկար վրան :

— Տեսա՞ր, ինչպես Յեղսանը քեզ կարդի բերեց, առաջ ինչի եյիր նման . հիմի մարդավարի մարդ ես, չենք-չնորդովով :

Յեվ Մինասը միանգամայն համաձայն եր ծանոթ-ների այս գիտողությանը: Պակասություն յեթե կար, այդ Յեղսանի գյուրագրգիռ, թարս բնավորությունն եր, կամակոր եր, իր ասածին: Ամուսինը չեր կարող հակառակիվել: Հաճախ հարեանների հետ լեզվակովի յեր բոնվում հավիկ կամ այլ մանր-մունը հաշիվների համար: Հարեանները գանգատվում եյին Մինասին, թե՝ «Կինդ լեզվանի յե, կավարար, սահճի՛ր, վոր լավ պահե իրեն...»

— Զանը՛մ, յուա գնացեք, կովելու վա՞խտ գտաք, կիսելու ի՞նչ ունիք վոր, բոլորս ել մեր քրտինքով ապ-քող մարդ ենք, — հանգստացնում եր դրացիներին Մի-նասը հեղահամբույր ժպիտով :

Յերբեմն լեզվակովին այնքան եր բոլորքովում, վոր փոխվամ եր բոնցքամարտի, և գաղաղած, մոլե-գնած կամայք մի պահ գործերնին թողած, սկսում եյին իրար հրշմտկել, մաղերից քաշչել: Բանն այնտեղ եր հասնում, վոր տղամարդիկն անդամ ստիպված ելին մինում միջամտել: Սակայն հաղթանակը միշտ ել Յեղ-

սահման եր մնում, վորովհետեւ վոչ միայն նրա ձայնն եր ամենից ուժգին ու բարձր հնչում, այլ Փիղիքոսկ շատ ուժեղ եր: Բացի այդ, ով ել ինչ ել վոր խոսեր, Յեղաստել կպատասխաներ այնքան, մինչև վոր հակառակորդը հոգնելով լոեր և վերջին խոսքը մնար իրեն.

— Դե՛, հիմի գնա, ձենդ փորդ քաշի ու տանդ նստի, քալթա՛ս, եւ հավերդ ու խոզերդ մեր կողմը չդան...

Աւրիշի հայլը կամ խոզն իրավունք չուներ իր տան սահմաններին մոտենալ, իսկ իր հավերը կարող ելին ուրիշների սահմաններն աղտոտեն անցնել, վորովհետեւ նրանք Յեղսանին ելին պատկանում:

Մինասն ամոթ եր համարում այդ ըոլորը:

«Ախըր, ինչի՞ դատարկ բաների համար կովուէլ դրայինների հետ, բարեկամի փոխարեն թշնամի՞ վաստակենք, ամոթ չե՞...

Բայց նա չեց կարող աղդել կնոջ վրա, և յերբ վեճի ժամանակ մյուս կանանց ամուսինները միջամտում ելին, Մինասը տիկից դուրս չեր դալիս, քաշվում եր:

— Ե՛խ, դու խոմ տպամարդ չե՞ս, լոչակս փաթաթեցիր գլուխդ նստալ տուն, կինդ պաշտպանել չղիտես, — բացականչում եր Յեղսանը և բարկառայթ աչքերն ամուսնու վրա վորորում:

Վաղենի հետն եւ հաճախ լեզվակովի յեր բոնվում Յեղսանը, չեր հավանում նրա նիստ ու կացին. «Կեդտոտ ե, ասում եր, շատակեր, փնթի յե, փնթի՛, հայրն ու վորդին մի սանրի կտալ են...

— Զանը՛մ, յոլա զնացեք, ասուծու սիրուն, կոխվալմազալ չեմ սիրեր, ախրախս, չեմ սիրեր, — իրնորում եր Մինասն աղերսող ձայնով:

Նման դեպքերում նրա դեմքի մկաններն ամփոփվում ելին, հոնքերը կիտվում, աչքերն այնպիսի արտահայտություն ստանում, վոր կարծես արցունքի բազմաթիվ կաթիլներ դուրս պիտի ցայտեն:

ՀՀՀ

Յերկրորդ տարին նրանք ունեցան մի աղջիկ, Յեղսանը ծանրգուրք դարձավ, յերեխայի ինտմքով տարվեց: Վեճերն ու լեզվամարտերը սակավագենի դարձան: Թեհ այժմ ընտանիքը բազկացած եր չորս հոգուց, բայց մի կերպ ապրում ելին: Մինասն որն ի բուն աշխատում եր հին կոչիկների ու կարկառանների մեջ թաղված, ձեռները կոչկուված, ճակատին բազմաթիվ կնճիռ, կոնակին նստել եր մի փոքրիկ բլուր, իսկ աշխերը խորն ելին ընկել, զառել փոքրիկ, զեղնավուն զունտ: Յեղսանի մոտ այնպես եր, ինչպես մի խոնարհ զինվոր: Իր առնական, կոպիտ ձայնով և դեմքի պղղնձային արտահայտությամբ կինը գերել եր նրան, բուն մեջ հայւաքել:

— Մինա՛ս, դու տան գործերին մի խառնվի, ուրիշների մոտ մի խոսի, ծտի շափ խելք չունես, թող չես խոսեմ ու կարգազրեմ ինչ վոր պետքն ե:

Բայց Մինասին սիրում եր Յեղսանը, գիշերներն այնպես եր պինդ գրկում, համբույրներ տեղում մտպատ գեմքին, վոր նրա գրկում Մինասը հարվում եր, անուշ յերազներով որորիում:

— Ա՛յ ժարդ, մի չթխաչլե՞ս, տե՛ս, վորքան մազ ե բուսէլ յերեսիդ:

ՅԵՎ ի հաստատություն իր խռովերի՝ ապահովելի թեթև հարվածներ եր հրամցնում նրա այտերին, ժեջըն ու կոնակը չարաձձիորեն խտառւմ :

«Թեև կինս կովարար ե, կծան ու ճշան, բայց լավ սիրո ունի, լավ սիրո», — մտմտում եր ինքն իրեն Մինասը և միկթարլում :

\*\*\*

Աւրիշ յերկրների հետ հաղորդակցությունը վերականգնվեց և Պարսկաստան ու Միջազգեաց ապաստանած գաղթականներն սկսեցին վերադառնալ :

Մինասի հայրենակիցներից մեկը պատահարար հանդիսական նրան փողոցում հայտնեց, վոր Գյուլնար վողջ ե և ասլրում և Բաղդադում . . .

Այս լուրը չիկացած յերկաթի պես խոցեց նրա սիրութը և նրա մաքերի կենորոնական լարը դարձավ :

«Յեթէ Գյուլնարն իր տեղն իմանա և վերադառնամ» . . . :

Մտածում եր Մինասն իր փոքրիկ խանութում աշխատելիս, յերր կանեփից հյուսված ամրապինդ թելով կոչիկ մոր կարկատում կամ կրունկները մեխերով ամբացնում : Մի պահ ձեռները կանդ եյին առնում, միտքը ուրանում, սրանում եր ինչ վոր տեղ ու աչքերը բեկեռվում եյին ինչ վոր կետի : Յել նրա հոգում մեկը, մի անծանոթ, չարագուշակ մեկը վկայում եր, թե շուտով վորոտեղից վոր ե Գյուլնարը պիտի զա . . . Այդ չարագուշակ մեկը վերջերս շարունակ հետապնդում եր նրան, գլուխին քրքիչներով աղմկում, շուրջ - բոլորը պատում մեղ ու մառախուզ, ու, յերբ նա ուշքի յեր

կալիս ու նորից խրիվում աշխատանքի մեջ, նորից պատեհերվում եյին փոքրիկ, տախտակաշեն խանութը, հազար ու մի կարկատաններն ու մեխերը, կաշու մեծ ու փոքր կտորները, իր մրաթաթախ գոկնոցը, փողոցն իր սայլերի ճիչ ու ճոխնչով և մարդկանց տաղտկարի դուռըներով :

Գիշերները Մինասն ընկնում եր մտորումների գիրն կը : Բյուրավոր մտքիր պաշարում եյին նրա ուղեղը, չարչարում, և յերբ Յեղսանն զդում եր, վոր մարդն ինչ վոր պատճառով չի քնում, ջլայնանում եր :

— Այ մարդ, ինչի՞ չես քնում, մտածելուց վոսկոր դարձար, նախորդ կինդ խոմ միտքդ չի՞ ընկել, հը’ . . .

Մինասը կծկում էր վերմտկի տակ, կոլումում ինչպես կծիկ, բարձրածայն շնչում, խոխում և այնպես ցույց տալիս, թե քնում ե, թող չանհպատանա Յեղսանը . . .

\*\*\*

Մի մտախլապատ յերեկո Մինասը նոր վերալատնով աշխատանքից, կոչիկներն եր տեղավորում նկուղի անկյունում : Յեղսանը թեյի բաժակներն եր դարսում սեղանին, խեկ վաղենը թափսի վրա խաղում եր փոքրիկ աղջկա թաթիկների հետ : Դրսից լավեց ինչ վոր կանացի ձայն : Հարեանի շունը հաջեց մի քանի անգամ և լսեց : Մեկը, մի անծանոթ կին, բակում սոլկար Մինասին եր հարցնում : Հարեանուհին ցույց տվեց Մինասի բնակարանը :

Յերբ անծանոթ կինը մոտեցավ իրենց դռանը և կրկին հարցրեց, նկուղի խորքում գտնվող Մինասի

կրծքից առես մի բան պոկեցին, կոշիկները զցեց ձևու-  
թից և վախուկ հայացքն ուղղեց գեղի դուռը: Վաղ-  
պեսը ներքեւ թսավ թափուից և վաղեց ընդառաջ, նրա  
տէքերը տարակուսորեն նայում ելին անծանոթուան,  
վորքը վողջագուրեց նրան սրտաղին, ուրախ հնչյուննե-  
րով.

— Ա՛ն, բալիկս, այդ վորքա՞ն ձևացել ես, բոյ  
քաշել...

Յեվ պինդ-պինդ համբուրեց վարդենին:

Մինասը մի ծույլ, վարանսու շարժում դործեց առ-  
պաջ զնալու, բայց Յեղսանն իր ահավոր հայացքով  
մենուեց նրան տեղն ու տեղը և ինքն սուաջ անցամ:

— Ո՞ւմ կհարցնես, ա՞յ կին, մի զարծիդ անունն  
ասա և ապա ներս խծկվիր, — բացականչեց Յեղսանը,  
ահազին մարմնովը կանոնեց պարսպի պես և պահեց  
անծանոթուան դռան մոտ:

— Մինաս, ե՛ւ Մինաս, ի՞նչ ես քար կտրել կանդ-  
նել, կինդ և յեկողը, Գյուրիսպը, — ասաց նորեկ կինը  
կերկերուն ձայնով:

— Ի՞նչ Մինաս, ի՞նչ Գյուրիսպ, այսոնդ ուրիշի  
առն ե, սիալ տեղ ես ընկել, յիտ դարձիր, հայդ'ա, —  
ասաց Յեղսանն ուժդին շեշտով:

— Յես իմ տունն եմ յեկել, երկանու մոտ, զարի-  
բությունից եմ քառնում, — պատասխանեց Գյուրիսպը  
և զառնալով գեղի Մինասը կանչեց. — Ա՛յ մարդ, քեզ  
չետ չեմ, ընչի՞ չես շարժվում, կինդ յեկել ե, չու-  
րախանա՞ս, չվարե՞ս:

— Կե՞ս, հա՞ս, հա՞ս, մեկ եղ եր պակաս, մի մարդ  
կարո՞ղ ե յերկու կինդ ունենալ: Կինը յես եմ, սասանի

հուս, Մինասը մի կին ունի միսայն և մի աղջիկ, յերկու-  
րորդ կինդ չի կարող տուն բերել:

Յեղսանի խոսքերը շշմեցրին Գյուրիսպին, ի՞նչ:  
Մինասը կրկին պսակվել ե, աղջի՞կ ել ունի, վա՞ճ  
անաստված, վա՞ճ...

— Ա՛յ գոյ անաստված, խիղճ չունե՞ս, կնոջդ կեռ  
ճամբին թողիր, թշնամու հրի ու որի բերանը, նա-  
պատակի պես վախար ու դլուխող ազատեցիր, հիմի  
կինդ ել ունե՞ս, անսիրտ, անհոգի... բացականչեց  
Գյուրիսպը մոլեզին: Նրա նիհար դեմքը, վոր նախորդ  
սրերի գեղեցկությունն եր մատնում, սպրդնել եր,  
այլայլվել:

Ոչախին, մարդուն ու վորդուն անհունորն տեխ-  
չացող կինը, տարիներ շարունակ հարավի կիղիչ առ-  
բեի տակ թափառելով, վերջապես ծանոթներից խմա-  
ցել եր առուսնու հասցեն, հուզար նեղություններով  
վերագրձել ու այսպես դուրս եր շպրտվում իր ա-  
մուսնու տնից...

— Բաս դու չեյլ՞ր ասում, վոր կինս վաղուց մե-  
նել, զնացել ե, չկա, — ասաց Յեղսանը դառնալով դե-  
պի ամուսինը, վոր քաթանի պես զունատ դեմքով կըծ-  
կըլել, մեխովել եր պատի մուտ:

— Սաղ-սաղ սպանո՞ւմ ելիր կինդ, — կանչեց  
Գյուրիսպը լացակամած, — սիրտ սպողպատի՞ց և չին-  
ված, անխուզած:

— Տո՛, իշխ մռութ, քեզ չասի՞ն, վոր քու մարդն  
ուրիշ տեղ ե ապրում: Մոլիար Մինաս ուրիշ տեղ ել  
կա, զնա և զտիր, ի՞նչ ես զեի պես ցցվել և աներես-  
աներիս կանոնել, — զուաց Յեղսանը կրկին դառնալով  
զեպի Գյուրիսպը:

— Մինա՞ս . . . — ՀՃՃԵց Գյուլնաղը դառնազին, — կլսե՞ս ինչ կըսեն, կուգես երթամ ջո՞ւրն ընկնեմ, խիղճ ունեցիր, Մինա՞ս . . .

Մինասը յերկու քայլ առաջ յեկալ, բայց դեմ առ դեմ պատնիչի պես կանգնած զտավ Յեղսանի հաղթմարժինը: Մթնշաղի մէջ կայծկլսող Յեղսանի հուր աչքերից նրա վոսկրները սարսում ելին:

— Հը՛, ուր կերթաս, ո՞ւր, հարամզաղա: Տեղդ կանգնիր ու կա՛ց, յես ես քավթասին ճամբու կղնեմ:

Իսկ Վաղդենը պինդ բանած Գյուլնաղի վեչերից՝ ասում եր.

— Մայրիկ, եղ ո՞ւր եյիր եսքան ժամտնակ, քեզ միշտ հիշում ելինք . . .

— Դու հիշում եյիր բարա չան, բայց քո հերը մասցել եր . . .

— Հիմի դու չար սատունի պես կանգնել, չես ու զում հեռանալ, հա՞ , — բացականչեց Յեղսանը համբերությունը հասում:

— Իսկ դու չար սատանի պես ցցվել ճամբիս չես թողնում ամուսնուս մոտ զնամ, հա՞ , — պատասխանեց Գյուլնաղը և ճարպիկ վոստյունով ցատկեց դեպի Մինասը, բայց գաղաղած Յեղսանը վրա հասավ և ձեռներով պինդ բոնեց նրան:

— Ես քո կաշին կքերթեմ, մաղերդ թել-թել գրի-խիցդ կպոկեմ, — մոլուց ատամների արանքից Յեղսանը, իր սուր յեղունզներով քաշքեց Գյուլնաղին և մի ուժգին հարված ատազ յետ մղեց: Գյուլնաղն իւ վախտ, բայց չարքաշ կյանքում պնդացած ձեռներով սկսեց պաշտպանվել:

Նկուղում տիրեց սոսկալի աղմուկ, ճիչ, իրարանց ցում: Իրար հրմչոկելուց դիպան սեղանին և մի քանի բաժակ ջարդ ու փշուր արին: Թախտին պատկած յերեխան սուր ճիչ արձակեց և սկսալ աղիողորմ լաց լինել: Մինչ Վաղգենը ձեռներով պաշտպանում եր Գյուլնաղին, վահան հանդիսանում և չեր թողնում, վոր Յեղսանը հարլածի:

«Վա՛յ, վա՛յ, ինչ ու յեկալ դիմիս, ինչ սպատուհաս, վա՛յ, վա՛յ, վա՛յ . . .», վշվշում եր Մինասը, ծնկները կոծում, զլուխը հուսահատորին թափահարում: Նա կծկվել, կուչ եր յեկել պատի մոտ, վախենում եր, վոր ահա կբռնեն, հավի պես թափի կտան իրեն, կճղմեն, կտրուեն . . . Յեկ վիճառում եր մի տեղ, մի առաջու անկյուն, վոր կուչ գա, թագնիի և այս ամոթ-խայտառակությունից զլուխն աղատի:

Տան մեջ փրթած աղաղակ — իրարանցումից հարեվանները հավաքվել զարմանում ելին, թե եղ ինչ բան է: Նրանք գիտեյին Յեղսանի կովարար բնավորությունը, բայց վեճի պատճառը պարզ չեր նրանց: Մինչև անդ վաճ վեճի պատճառը պարզ չեր նրանց: Մինչև անդ վաճ վիղոցից մարդիկ յեկան: Սակայն դժվար եր կըս-վողներին իրարից բաժանելը: Յերկու կանայք պինդ բանել ելին իրար, քաշքում ելին, ճվճվում:

— Ես իմ տունն ե, իմ տունը, Մինասն իմ երիկն ե:

— Դու ո՞վ ես, անառակ, յես եմ տան տերը, — ճչում եր Յեղսանն ամբողջ կոկորդով:

— Դու ո՞ւր եյիր, վոր յես ու Մինասը մի բարձի վրա ելինք գլուխ զնում, անառակը դուն ես, — պատասխանում եր Գյուլնաղը հեկեկալով:

— Անառակ չէինելիր, տունս չելիր խուժի և ո-  
չափու չելիր կեղտութի, լի՛րբ:

— Լիրբը դուն ես, դուն...

— Դե՛...

Նկուղում լցված բաղմությունը չնկատեց, թե ինչ-  
պես մի փոքրիկ մարդ քաջքաված, կոլուլված, ինչպես  
վողնի, մարդկանց արանքից կամացուկ անցով և ճռա-  
թած, ահարեկ աչքելով գնաց բակը:

Վոչ վոք չնկատեց, բացի մշեցի ծերուկ գոնսպա-  
նից, վոր արդեն ըմբոնել եր բանի եյությունը, տես-  
նելով կուչ յեկած և արագորեն հեռացով մարդուն, յե-  
տելցը կանչեց.

— Մինա՛ս, սա ո՞ւր կերթաս, կնիկներդ չխաղա-  
զեցնէ՞ս, յերկու կնիկ ես ունեցել, Մինա՛ս...

Բայց Մինասն առանց ծպառւնի, քամու արագու-  
թյամբ անցավ լնդարձակ՝ բակից: Աչքերին պատել եր  
մեզ ու մլար, ամեն ինչ շարժվում եր չուրջը,  
խառնակվել, չպիտիր, թե զնո՞ւմ ե, ինչ և անում: Փո-  
ղոցի գուան մոտ վերջին անգամ ականջին զարնից  
Գյուղակի լացաթաթախ կանչը.

— Ա՛խ, ես ի՞նչ արիր, տունս քանդեցիր, Մի-  
նա՛ս...

Յեկ Յեղանի բարձրականչ պատասխանը.

— Սո՛ւս, սատանի ձագ...

Այսուհետեւ ել բան չլովեց: Յեկ վոլոցի հատու-  
կառը անցորդները նկատեցին, թե ինչպես զլխաբաց,  
անվերարկու, չփոթված հայացքով մի մարդ՝ արագո-  
րեն քայլում և ցեխուու փազոցի յերկայնքն ի վար:  
Քայլում և ու կանդ չի անում...

Ահաղին ճիգերից հետո դրացիները հաղիվ կարո-  
ղացան Գյուղապղին ազատել Յեղանի ճանկերից և  
նրան ու Վաղգենին դիշերը մի կերպ պատապարեցին  
իրենց մոտ:

Այժմ Յեղանը դարձյալ ապրում է իր տանը, մե-  
ծացնում աղջկան, լեզվակովի յե բանվում հարեաննե-  
րի հետ, աղջկա հետ խոսելիս՝ ցույց տալով հոր կար-  
կատանները՝ ասում:

— Ես քո հարամզագա հայրիկի կարկատաններն  
են, յերբ վերադառնա, քեզ մի լա՛վ չուստ կարի...

Իսկ Գյուղապղը Վաղգենի հետ բնակվում է քաղա-  
քի ծայրամասում, ուրիշներին լիմացք – աղախու-  
թյուն և անում և մի կերպ ապրում ե: Նրա յերեսին  
գեռմնացել ե Յեղանի յեղունդներից գոյացած սպին:  
Հաճախ և հիշում Մինասին և, յերբ Վաղգենի կոչիկ-  
ները մաշվում են, դլուխն որպում ե և հառաչելով ա-  
սում.

— Ա՛խ, ո՞ւր և, ո՞ւր և հայրդ, վոր զար նորը կա-  
րեր քեզ համար:

Գյուղապղն ու Յեղանը վոխերիմ թշնամի են իրար  
և յեթե իրար հանդիպեն, գուցե մեկն ու մեկը նրան-  
ցից կենդանի չըլրծնի:

Յեկ ամեն մեկն իր տանը սպասում է Մինասին,  
վոր, սակայն, ահա անցնում են յերկա՛ր, յերկար տա-  
րիներ, չի վերադառնում...

1923 թ.



## ՄԻԼԻՏՈՆԻ ԴԱՒԼԸ

Տիկին Հայկանուշը շա՞տ գոհ էր, վոր ամուսնացով Միլիտոնի հետ։ Առաջին ամուսնու մահից հետո, մի քանի տարի այրի մնաց, սրահնրա տանն աշխատելով գլուխ պահեց, հին ու մին շոր ծախելով։ Թեև գեղեցիկ էր, խոսք չկա, բայց տղամարդիկ նրա գեղեցկությանը նայում էյին ուրիշ աչքով, վոր չեյին նայում, հենց են ե, ուզում եյին կուլ տալ… Բայց Հայկանուշը ձգտում էր ընտանիք կազմել, ընտանեկան հարկ ունենալ, «նամուսով» կին դառնալ, ինչպես ասում են։ Ու բախտը ժպտաց նրան։ Պատահարար հանդիպեց Միլիտոնին, սա մեջ ընկալ, նա, իրար հավանեցին, ու մի որ ել, ահա, Հայկանուշը յեկալ Միլիտոնի տունը։

Բարեբախտ էր զգում իրեն Հայկանուշը։ մի ընդունակ սենյակ ձեռքն ընկալ, համեստորեն կահավորված, լուսավոր, ողավետ սենյակ։ Առաջ տեղ չուներ գլուխ դնելու, աղդականների տանն էր ապրում, ներքնահարկ նկուղներում, այն ել ինչ ապրուստ։ Այժմ տեսեք, թե վորտեղ ե թառել, յերկրորդ հարկի վրա…

Ո՛, մի չլսված բան էր նրա համար այս անակնկալ հաջողությունը։ Իսկ ամուսինը, Միլիտոնը, մոտ յերեսունհինգ տարեկան, նիհար, վոսկրաքիթ մի մարդ,

վոր վաղ առավոտից մինչև յերեկո փոան մեջ ալյուրի ու խմորի մեջ թաթախված՝ աշխատում էր շարունակ։

Թեև Միլիտոնի փուռը գտնվում էր քաղաքի մի յետ ընկած փողոցում, բայց բանում էր, առետուրը շատ։ Մուշտարիները հեռաներից գալիս իր հացն եյին գնում, մաքուր ու համով էր թիսում հացը, մանավանդ բոքոնը. վարպետ էր թե խմոր հունցելու և թե հաց թիսելու մեջ։ Հապա ի՞նչ բերկրալից արտահայտություն էր ստանում նրա դեմքը, յերբ ալրաթաթախ գոզնոցը կապած, գետնի փոշին լիզելու չափ յերկար ծայրերով շալվարը հագին, մինչև արմունկները մերկ թևերով, սպիտակ արախչի գլխին կանգնում էր խմորի տաշտի մոտ, ու արտգ-արագ, ինչպես մեքենա, խըմորից գնտեր էր պատրաստում, վոլորում ձեռքի մեջ, տփտփում, հացի ձև տալիս ու շարում հացատախտակի վրա, կամ թե չե գեմքը բոցավառ, փուան այրող գոլի զիմաց, կրակի հրեղեն լեզվակների տարափի տակ, մի կողմից խմորի գնտերն էր ուղարկում ներսը, կրակի մոտ, քարաշեն սալի վրա, ու հետո զուրս հանում արգեն յեփված հացը, տաք տաք, թազա-թազա, վորի անուշ հոտը և բարակ, դյուրալի դոլորչին բարձրանում էր նրա թուխ դեմքն իվեր, ըյում, վոգեռում նրան… Կամ թե չե, առետուրի ժամանակ, յերբ Միլիտոնը հանդիսավոր դեմք ընդունելով կանգնում էր դախուլի մոտ, հացեց վաճառում ու դրամը բարձրաձայն հաշվում (նա բոլորովին անգրագետ էր և համիլն անում էր բանավոր), արծաթյա փողերը՝ զընդպնդ գցում դախուլի մեջ…

Հենց յեկած որից Հայկանուշը դառավ տան տերն ու անորենը։ Միլիտոնը թուլակամ, համեստ ու աղ-

նիվ մարդ եր : Ամենից ավելի ուրիշների խորհուրդներին եր լսում, քան ինքն եր խորհուրդ տալիս : Հաճախ եյթ տեսնում նրան ալբափոշով պատած, փոան խորդում աշխատելիս, իսկ կինը գախլի մոտ առ ու ծախս եր անում : Յեկ Հայկանուշը հաց վաճառելու դործում ճացպիկ գուբա յեկալ . նախկին անողնական կյանքը, գոյության գեմ մզած դաժան պայքարը նրան տվել եր Համարձակություն և տոկունություն : Ամուսինը լսում եր նրան, հավատում :

Միւլտոնի կյանքն այժմ ավելի կարգի յեր բերված, սենյակը սարքված, տաք կերակուր եր ուտում, առաջ հաց ու պանրով եր կերակորվում միայն : Բայց Միւլտոնը Փիզիկապիս ավելի թուց եր, քան կինը, մենամարտության յեթե դուրս դային, կինը անպայման կհաղթեր նրան, կդեմներ . . . Հաճախ եր պատահում, յերբ Հայկանուշն ուզում եր կատակել ամուսնու հետ, բռնում եր նրա շլեշից կամ մեջքի փափուկ տեղերն եր խոտում ու դլորում թախտի վրա, փոքրիկ մանուկների պես, վորոնք չարաձձի խաղեր սարքերով, բոթրոթում են իրար, քաշքվում ճովողուն ձայներով :

Միւլտոնի դրսի գործերը կինն եր վարում, խանութի վարձը, հարկերը նա յեր վճարում, առնելիքտարիքի հաշիվը կնոջ ձեռքումն եր :

Խանութի պատենտը կնոջ անոնավ սարքեց Միւլտոնը, վորպեսզի հետ լինի պետական հիմնարկների հետ ունեցած անոնությունը :

— Ինչու չե, մարդուդ գարձրել ես կին, հեծել վըրեն, քեֆ ես քաշում, ամուսնուդ գգակը պլիսիդ ես դըրել, Հայկանուշ . . .

Ասում եյին ծանոթ կանայք և Հայկանուշն իհարկե հակածառում եր նրանց, ապացուցում, վոր նրանք սընալ են իրենց կարծիքի մեջ, բայց ներքուստ հրձվում եր, ինքնարապականությամբ լցվում, վոր ինքն այդուղիս զոշախ կին և յեղել, և յեթե ուրիշ կանայք ալբու այլին իրենց ամուսնական կյանքից, բողոքում ամուսինների գեմ, վորոնք իրենց ձեռն ու վոտը կապել, չեյին թողնում, վոր ապատ շարժվեն, Հայկանուշը հպարտությամբ շփելով ձեռները հայտուրում եր .

— Այդ կողմից իմ մարդը հատը չունի, ինչ ուզեմ կանեմ, ամեն ինչ ձեռքիս ե, առնել-ծախել, կարուգրել, անորինել, իմ մարդը հոգի յե, հողի . . .

Հացի տուետուրն սկսեց կրկնապատկվել, մուշտարիները հետզհետե ավելանում եյին, մենակ այլնս դըժվար եր աշխատել, ողնական ձեռք եր պետք, խմոր հունցող կամ հաց թքոտ : Այս մտահոգության մեջն եր Միւլտոնը, յերբ պատկառելի հայլենակիցներից մեկը խնդրեց նրան իր քով վերցնել մի յերիտասարդ հայրենակցի, վոր յեկել և արտասահմանից, անդործ և և ծայր աստիճան կարիքի մեջ :

— Շատ լավ, թող զա խմոր հունցե ու ապրե, — համաձայնվեց Միւլտոնը ժպտալով :

Նորեկ յերիտասարդի անոնջը Գուրգեն եր, մոտ քսանյոթ տարեկան, միջահասակ, համակրելի գեմքով, ու կառվուն աչքերով : Հայկանուշը, վոր դախլի մոտ կանգնած հաց եր վաճառում, մանրակրիտ-սուր հայցքով նայեց յերիտասարդին և հրավիրեց նստել : Միւլտոնը ձեռքի խմորները մաքրելով, գեմքին և ուսե-

թին ալբակուշի, ներսից դուքս դալով, ծանոթացավ և տաց.

— Ա՛, ամբով յեկար, հաղար բարով, մեղ մոռ լնալ ե, չենք կովտի, աշխատենք, մեկմեկի ողնենք ու ապրենք... .

Տիկին Հայկանուշի շրթունքների արտնքումնկարվեց մի բարյացակամ ժպիտ:

Այսուհետեւ խմորը Գուրգենն եր հունցում, սպիտակ գոզնոցով, ներս ուղուրս եր անում շարունակ: Միլիտոնը չա'տ լազ եր նրա հւա, այնպես եր վարդում, կարծես հարազատ յեղբայրը լիներ, աշխատում եր ամեն կերպ, վոր յերիտասարդ հայրենակիցը զոհ մնա, չվշտանա վորեն բանից:

«Հայրենակից մարդ ե, մամտում եր Միլիտոնը ինքնիրեն, —պարապ-սարապ, ջահել տղա, պրտյուճ մը հաց և գտել, թող ուտի...» :

Գուրգենը վոչ վոք չուներ, գիշերելու տեղ ել չուներ. դրա համար ել փանումն եր քնում:

Հետզհետեւ Միլիտոնի առեւտուրն ավելացավ: Միլիտոնն որնիբուն չարաչար աշխատում եր: Յերեկոյան խիստ հոգնած լինելով՝ շուտ եր պառկում քնելու, վորպեսզի առավոտը վազ աշխատանքի զնա: Թեհ փոնումն այժմ ուբիշ աշխատավոր ձեռք ել կար, բայց իր գործը չթեթեացավ, Գուրգենին շատ չեր ծանրաբեռնում:

«Ինչքան չինի ոտար մարդ ե, ավելին բեռնելու իրավունք չունեմ, —մտածում եր Միլիտոնը:

Գարնանային տաք ու պայծառ յերեկոներ եյին: Քաղաքի բնակիչները գուրս եյին թափել զբոսանքի:

Հայկանուշը մենակ ձանձրանում եր տանը, ամոռ սինը քնում եր, իսկ ինքը ձանձրույթից ու տոթից նեղված գուրս եր գալիս անցնում գեպի մոտակա կայարանը կամ նստում փուան դիմաց գտնվող փոքրիկ սպարեն զում և զրուցում Գուրգենի հետ: Լուսնյակ գիշերներին հարկանները նկատում եյին, թե ինչպես Հայկանուշն ու Գուրգենը բարձրանում եյին մոտակա բլուրը, նըստում քարերի կամ կանաչների վրա ու յերկա՞ր, յերկար զրուցում...

Միլիտոնը մի անգամ հետաքրքրվեց, թե ինչո՞ւ կինն առհասարակ ուշ և վերադառնում տուն և ո՞ւր և գնում զբոսնելու, ո՞ւմ հետ:

— Հե՛չ, Միլիտոն, մեր Գուրգենի հետն եյի, նըստել պարտեզում խսում եյինք, ինչ անեմ հապա, գուք քնում ես չուտ, իսկ իմ գունը չի տանում, գնամ Քուսն ընկնե՞մ, ինչ ե...

Միլիտոնը վոչինչ չեր ասում, ինչ կա վոր, Գուրգենը պատվական տղա յե, թող ման գան, ինչո՞ւ չե...

Ամառվա սկզբներին Միլիտոնն իրեն վատ զդաց, ընդհանուր թուլություն և ջղայնություն, բժիշկները խորհուրդ տիին նրան գնալ ամառանց կազդուրմելու:

— Վա՛, ինչպես զնամ, հապա փո՞ւս, գործե՞րս, —մըթմըթում եր նա գլուխը թափահարելով:

— Դու միամիտ յեղիք, Միլիտոն, յես ու Գուրգենը հիանալի կերպով կտանենք զործերը, —միամտացնում եր կինը և Գուրգենի հետ միասին խորհուրդ եյին տալիս, վոր Միլիտոնն անպայման ամառանց գնա:

Ամառանոցում Միլիտոնն անհանգիստ եր, իսկըն ու միտքը չարունակ գեպի տուն, կինը, մուշտարինե-

թը, իր սիրելի դախում... Անտառում, խշխան ջրերի ալիքն, թե բլուրն ի վեր բարձրանալիս՝ առաջն եւին պատկերվում խմորով լիքը տաշտը և թեժ կրակով այրվող հնոցը, զգում եր նոր թխած հացի ախորժելի դուրշին և կարոտով լցվում: Վատ եր ասլում, աշխատում եր քիչ ծախսել դրամը:

«Վատ ժամանակներ ենք ապրում, քիչ ծախսեմ, վոր գրամ ավելանա ալյուրի համար...»

Կինը կանոնավոր կերպով նամակ եր գրում և խորհուրդ տալիս Միլիտոնին, վոր յերկար մնա ամսաւնոցում, փոան գործերը լավ են դնում, թող չժմտածի ամուսինը, ինքն ու Գուրգենը ցանկանում են միայն, վոր նա լավ ուտի, ման գա ու կազդուրված վերադառնառուն, միայն այդ են ցանկանում, ուրիշ վոչին:

Կնոջ նամակներն ուրիշներին եր տալիս, վոր կարդան, մեծ բավականությամբ եր լսում Միլիտոնը, ուր սում եր ու ընկնում զմայլանքի մեջ:

Իր տունն ու փուրը զտավ նույն վիճակում, յերբ նա վերադարձավ ամառանոցից: Հայկանուշը հագել եր բոլորովին նոր չորեր, պապուն կոչիկներ, շրթունքներն անդամ ներկել եր վարդագույն ներկով:

Գուրգենն ել նոր հագուստ եր հագել, վոր շատ եր սալում նրան: Կնոջն առաջարկով Գուրգենն սկսեց նըրանց հետ ճաշել:

— Թող մեղ հետ ճաշի, մենակ մարդ ե, ընկերոջի այլելի ուրախ կանցնի ժամանակը... .

Միլիտոնը չառարկեց կնոջ կարդագուստյանը: Առնք նրա համար մեկ եր, վորովհետեւ ժամանակներ չեղանակում:

Ճաշում, գործերի պատճառով ավելի ուշ եր ճաշում մյուսներից:

Նորից նրա ձեռները թաթախվեցին խմորի մեջ, գլխին և ուսերին նստեց մի մատ ալրափոշի, նորից սկսվեց ծանր ու միորինակ աշխատանքի շրջանը:

Զմրան սկզբներին Հայկանուշն ամուսնուն առաջարկեց, վոր Գուրգենն իրենց սենյակում գիշերի:

— Փոնումը գիշերը ցուրտ և լինում և խոնավ, իսկ մենք ընդարձակ ու տաք սենյակ ունենք, մի անկյունում վարագույրով կանջատենք նրա թախտը, մենակ տղա յե, մեր հարազատը, ինչ կա վոր...

«Ե՞ր հարազատն ե, ինչ կա վոր...» կրկնեց Միլիտոնն իր մտքում և լուս մնաց: Յեկ Գուրգենն իր թախտով տեղափոխվեց և սկսեց ապրել նրանց սենյակում:

Յուավույան Միլիտոնը շատ վաղ եր գնում գործի, զեռ բոլորովին մութն եր, յերբ նա մտնում եր փուռը, մոմը վառում ու կպչում աշխատանքի: Յերկար ժամանակ եր անցնում, մինչեւ Գուրգենի գալը:

Առետրի շատանալով կարիք զգացվեց, վոր մեկը չարունակ զախլի ու կշեռքի մոտ կանգնի: Կինը մեծ մասամբ զբաղված լինելով տան գործերով, հնարավորություն չուներ շարունակ զախլի մոտ կանգնելու, և Միլիտոնը չորս ձեռք եր զարձել, մեքենայի արագությամբ գործում եր թե ներսումը և թե զախլի մոտ. Քրտինքը պատռում եր ամբողջ մարմինը և ճակատիցը ծոր-ծոր ներքեւ թափվում: Մինչ Գուրգենը խմորը հունցիլուց հետո փողոցն եր յելնում ու նստում փոան մոտ, սրա-նրա համար մեկ եր, վորովհետեւ ժամանակներ չեղանակում:

— Միլիտոնին, թող Գուրգենն ել կանդնի դախողի մոտ, ինչ ես տասը կտոր լինում, զու հացին մտիկ տուր, վոր չայրվեն, առանց են ել մուշտարիքը տրտնջում են, վոր վերջերս այրված հաց ենք ծախում: Կարծում ես, թե Գուրգենն առեւտուր անել չգիտի՞...

Միլիտոնին շատ ծանր թվաց կնոջ առաջարկը, գժվարացավ համաձայնվել և ընկալ յերկմտանքի մեջ: Ինչպես՝ ուրիշին հանձնել իր սիրելի դախողը, վորի մոտ մեծ բավականությամբ եր կանգնել յերկար, յերկա՞ր տարիներ... Այո՛, Միլիտոնին շատ ծանր թվաց այդ առաջարկը, բայց կինը, վոր լավ եր ուսումնասիրել նրա բնակլորության թույլ կողմերը, ուզեց փաստի առաջ կանգնեցնել նրան և ասաց Գուրգենին.

— Գուրգենին, զնա դախողի մոտ, Միլիտոնս խեղճ ե, հոգնում ե, խոմ տասը կտոր չի՞ լինելու, թող քիչ հանդստանա կամ ներսը զնա հացին մտիկ տա... .

Գուրգենն ել կարծես հենց գրան եր սպասում, առաջ վագեց ու ինքն սկսեց վաճառել հացը: Տեղը նեղ-կածք լինելով, Միլիտոնը մի կողմ հրվեց, գլուխը քե-քեց, նիհար գեմքն արտահայտեց անբավականություն և գժկամություն:

— Տեսա՞ր, այ մարդ, վսնց աշխուժ-աշխույժ ծա-լում ե, հենց Գուրգենի գործն ե զա... բացականչեց Հայկանուշն ուրախության ժպիտով ե, յերբ նկատեց, վոր ամուսինը դեռ համառում ե դիրքերը զիջել և ընկել տատանման մեջ, ամելացրեց.

— Միլիտոնին, կանգնելու վա՞խս գտար, ներս զնա, հայերն երվեցին...

Ցեվ Միլիտոնը գլխահակ, առանց ծպտունի հեռա-ցավ հնոցի մոտ:

Միլիտոնի զանձարկղն այնուհետև անցավ Գուրգե-նի ձեռքը: Սկզբի որերին, ամեն յերեկո, Միլիտոնը հաշվում եր զրամը և վերցնում: Յերբեմն ել հաշկվնե-րի պատճառով թեթև խոսվառուք եր լինում նրանց մեջ: Եթէ, դուք ել գահլա եք տանում, հաշվարահ ել

ովետք և բերենք, վոր ամեն որ ձեր հաշկվները պահի: Այ մարդ, փողերը խոմ չեն կորչում, Գուրգենին չե՞ս վստահում, ինչ ե...

Միջամտեց նրանց խոսվառուքին մի անգամ Հայկա-նուշը և այդպիսով կամաց-կամաց հաշվետվությունն ել փերացավ, և Գուրգենն ամբողջովին տերն ու տնո-րենը դարձավ զանձարկղի:

Ցերեկոները Հայկանուշն ու Գուրգենը հաճախ գը-նում եյին թատրոն կամ ուրիշ տեղ: Միլիտոնը հոգնած լինելով պատկում եր կամ փուան մեջ ինչ վոր աշխա-տանք կատարում: Պատահում եր, վոր նրանք յերեքով եյին թատրոն զնում, և անծանոթ մարդիկ նրանց նա-յելով, ավելի չուտ կարծում եյին, թե Գուրգենն ե Հայկանուշի մարդը, վորովհետեւ Հայկանուշն ու Գու-րգենն այլելի լավ եյին հագնվում: Միլիտոնը չեր սի-շում կոկելի հազնվել, իր հին բաճկոնով յոլա եր զը-նում, ինչի՞ լավ հագներ, ում դուր զար, նոր պիտի ամուսնանար, աղջիկներին դյուր զալու միտք չուներ Միլիտոնը: Գուրգենը ջահել եր, չպահկված, Հայկա-նուշն ել, դե՛ կանայք սիրում են լավ հազնվել, նրանց ել ել ե պետք...

Մի անգամ, մի մոտիկ ազգական, վորին շատ եր հարզում ու լսում Միլիտոնը, գործով յեկավ փուռը և շա՞տ զարմացավ, յերբ Գուրգենին տեսավ դախուի գը-

ինն, իսկ Միլիտոնին աւրաթաթախ շորերի մեջ փոան խորքում : Մեկնելու պահում ազգականը Միլիտոնին մի կողմ տարալ և առաց :

— Ես ի՞նչ եմ աեսնում, Միլիտոն, զոր խաղելի՞ն ես բերել ու նստեցրել դլիիդ, կինդ ել ամէն յերեկո դուրսն ե . զախլիդ ու շք դարձրու, Միլիտոն...

Յեվ իսկապէս Միլիտոնի զանձարկը կամաց-կամաց պարզիում եր, զբաժը բոլ-բոլ ծախսվում ո՞ւժ և ի՞նչի՞ համար, հայոնի չեր: Առաջ Միլիտոնի յեկամուտը վոչ միամն ծախսվում եր, այլ և կուտակվում: Կարսպանում եր մեծ քանակությամբ այլուր զնել և ամբարել նույնիսկ գրամ յետ ցցել: Իսկ այժմ ծախսի համար ել գրամ չեր ճարվում և մինչև անդամ պատճում եր, զոր Միլիտոնի զբանը մնում եր առանց կուտեկիւ...

«Վայ, աման աստված, ես ինչ արի,»—մտմտում եր Միլիտոնը, հիշում ազգականի խոսքերը, գլխին վայ տալիս: Բայց ինչ աներ խեղձը, ինչպես խոսք բանար այդ մասին: Վորոշեց նախ և առաջ խոսել կնոջ հետ: Բայց կինը ծիծաղեց և ամուսնու ուսերը պինդ թափ առլով բացականչեց.

— Ետ ինչ թազա քամի յե փչում, Միլիտոն, զործներս կարգին են զնում, զես խոսո՞ւմ ես: Իսկի եսպես մուլի ապել՝ ելինք, միտք ունես կոիդ, զալմաղալ ցցել տահը...

Միլիտոնն ընկալ խորը մտածմունքի մեջ և սկսեց ներքուստ կակծալ: Ամեն անդամ, զոր անցնում եր զախլի մատից ու Գուրգենին տեսնում այնակ, սիրալ լըցվում եր բուռն ատելությամբ: Բարկությունն ու հա-

կակտանքն ավելի ու ավելի խորացալ նրա մեջ դեպի այդ մաքուր հաղնված, ուղացած շաղիկով, անուշաբույր յուզերով ոճված յերեսասարգը... Ետ ո՞ւմ փողերովն եր այլպես զուզվում, ինքն իր փոնումը որն ի բուն քրաինք թափի, զրախնում և կոպեկ չունենա, ուբիշները վայելե՞ն, աչքու բաց Միլիտոն, վրեդ հեծել, տրորում են քեզ, Միլիտոն...

Մուշտարիներն անկում հարցնում եյին Միլիտոնին, թե ինչու նա այլիս հաց չի վաճառում, ուրիշ մարդ և կանգնել կշեռքի մոտ, իամ՝ մարդ, վոր գնորդների հետ վարժել չի խմանում, չզային ե, թարս. ակսոս չե՞ր Միլիտոնը, քաղցրաւելու, համբերասար Միլիտոնը...

Յեվ Միլիտոնը վնրուեց զախլը նորից ձեռքն առնել: Առավոս զես Գուրգենը չեկած՝ Միլիտոնը կանգնել եր կշեռքի մոտ: Թեև զախլի բանալին գտնվում եր Գուրգենի ձեռքին, բայց Միլիտոնը՝ նոր ույժ ու յեռանդ առած՝ սկսեց հաց վաճառել: Յերբ Գուրգենը պապիրոսը բերնին Փրանտ հաղնված ներս մտավ, չափ զարմացավ, զոր Միլիտոնն իր տեղիցը չշարժվեց:

— Միլիտոն: զու զնա հացերին մտիկ տուր, յես արգեն յեկա...

— Սրանից հետո զու հնոցի մոտ կաշխատես, իսկ զախլի մոտ յես կկանգնեմ, — հայտարարեց Միլիտոնն առանց նրա վրա ուշագրություն դարձնելու:

— Ի՞նչ, հանաք իսոմ չես անում, Միլիտոն, — առաց Գուրգենն ել ավելի զարմացած:

— Հանաք անելու ժամանակ չունեմ, փուռն իմս չե՞ն, ինչպես ուզեմ կլարտիմ:

Աւանց ծպտուն հանելու Գուրգենը հեռացավ և քիչ  
հետո վերադարձավ Հայկանուշի հետ:

— Միլիսո՞ն, ի՞նչո՞ւ մարդուն չես թողնում, վոր  
անցնի իր դործին, —ասաց կինը մեղմ ձայնով:

— Եղ իմ բանն ե, սրանից հետո յես եմ կանգնելու  
դախիս մոտ:

— Միլիսո՞ն, ի՞նչ ե ընկել միտքդ, ուղում ես  
գործներս խանդարե՞լ, ի՞նչ ե, —ձայնեց կինը հուզված:

— Եղ իմ բանն ե, խանդարո՞ւմ եմ, թե՞ շինում,  
Գուրգենը խօսող հունցող ե, թող իր դործը կատարե,  
ուրիշ վոչինչ:

— Այ մարդ, լավ մտածիր, թե ի՞նչ ես ասում. մի  
խայտառակի մեզ խալիսի մոտ:

— Դու մի խառնվի իմ դործերին: Դու կինարմատ  
ես, լավ չես հասկանում մեր դործը: Յես դիտեմ, ի՞նչ  
եմ անում:

— Գուրգե՞ն, դու Միլիսոնին մի լսի, նրա խելքն  
եսոր մի քիչ տեղիցը խախտվել ե, զնա՛ ու կանգնիր քո  
տեղը:

Ցերխասարդը լուս կատարեց Հայկանուշի կար-  
գարդությունը, փորձեց կանգնել կշեռքի մոտ, բայց  
Միլիսոնը հրեց նրան և վճռական տոնով ասաց.

— Ցեթե ինձ չլսես, են ժամանակ դու այլևս իմ  
փոնումը գործ չես ունենա:

— Ես փուռն իմն ե, Միլիսո՞ն, դու իրավունք չու-  
նես կարգադրություն անել այստեղ, —բացականչեց  
կինը ջղային ձայնով:

— Ի՞նչ, —ճշաց Միլիսոնը խիստ վրդովված, —  
փուռը քո՞նն ե, եղ ի՞նչեր եմ լսում:

— Այսուհետեւ իմն ե փուռը, յե՞ս պետք ե կարդադրու-  
թյուններ անեմ այստեղ:

Միլիսոնը մի պահ մնաց շմած, քարացած, չեր-  
իմանում ինչ անի, կնոջ խոսքերը նրան թվում ելին ան-  
իմանալի, աներեակայելի բան: Բայց չուտով ուշա-  
դրությունն ամփոփեց և ինչ վոր արտակարդ ուժով  
լցված՝ Գուրգենին կրկին հրեց գոռալով.

— Դո՞ւրս իմ խանութից, յես քեզ քաղցից փրկեցի,  
աշխատանք տվի, չիմի ուղում ես գլխիս նստե՞լ,  
դո՞ւրս...

Սակայն Գուրգենն ավելի ուժեղ լինելով՝ Միլիսո-  
նին քցեց մինչև սեղանի ծայրը: Փոնումը տիրեց աղ-  
մուկ, իրարանցում, քաշքուք: Դրաից բավական թվով  
մարդիկ հավաքվեցին, յեկավ նաև թաղամասի վոս-  
տիկանը: Նրանց միջամտությունը չոգնեց, վորովհե-  
տե վիճող կողմերից և վոչ մեկը չեր գիշում: Նրանց  
տարան վոստիկանատուն, վորտեղ Հայկանուշը վոր-  
ուես ավելի լեզվանի և ոռւսախոս, կարողացավ իր  
խոսքն առաջ տանել, պատենտը ցույց տալով համոզեց,  
վոր փուռը պատկանում է իրեն և Գուրգենին, իսկ Մի-  
լիսոնն աշխատում ե վորպես բանվոր... Միլիսոնը  
կոտրտված ուռւսերենով վորքան աշխատեց պաշտպա-  
նել իր իրավունքները, չեղավ, վոստիկանապետը տես-  
նելով ինդրի անորոշությունը՝ արձանագրություն-  
կազմեց, գործն ուղարկեց գատարան և արավ ժամա-  
նակավոր կարգադրություն, վոր Միլիսոնը պետք ե  
փոան մեջ աշխատի վորպես վարձու մարդ, հակառակ  
դեպքում պետք ե հեռանա, վորպեսի կոիվ, դալմա-  
դալ չլինի, մինչև վոր դատարանը քննի գործը:

Յել Միլիտոնը դուրս յեկալ վստիկանատնից գլխիկոր, ճնշված. զայրութից ատամները կրծտացնելով զնաց աղջականի մոտ խորհրդակցելու: Լսելով ամբողջ անցուղաձը, աղջականը դուխը չարժելով ասաց.

— Յես վաղուց ելի զգում, վոր քո կինն ու եղ անհամուս լակոտը մի ոյին պիտի հանեն դլխիլ...՝ Ապա մի փոքր լուելուց հետո ավելացրեց, —խեղճ Միլիտոն, փուռդ, փողերդ, կինդ ձեռքիցդ առի՞ն...

Բումբի պես այդ խոսքերը պայթեցին Միլիտոնի դլխին, կարծես նա նոր ըմբանեց իրերի խսկական ընթացքը: Աչքերը լայն-լայն բացած մի պահ մնաց լուռ, քարտացած, ապա տեղիցը ցատկելով յերկու ձեռքով ըռնեց գլուխը և հուսահատորեն կանչեց.

— Անաստվածներ, տունս քանդեցին, տունս...

Այս աղեխարը բացականչության մեջ ամեն ինչ՝ կար—հուսահատություն, տառապանք, ցասում...

Աղջականը չեր իմանում ինչով միմիթարեր նրան. նա յել եր ջղայնացել ու ընկճվել:

— Հապա ինչ անեմ, հա՞ գնամ ջո՞ւրն ընկնեմ, — մըթմբթաց Միլիտոնը հուսահատված:

— Լա՛վ կիմնի գնաս փուռդ և առաջվա նման սուսուվուս աշխատես մինչև զատի որը: Մենք վկաներով և փաստերով կլերականզնենք արդարությունը, —խորհուրդ տվեց աղջականը:

Միլիտոնը նրա մոտից հեռացավ խորը մտքերի մեջ սուզված. ճանապարհին մի վարկյան կանդնեց և մըտմըտաց ինքնիրեն.

«Զե՞, յես ել եղ փուռը վոտք չեմ դնի, մինչեւ վոր են անիծած չունը չհեռանա...»

Այսպես մտմտաց Միլիտոնը և սկսեց թափառել քաղաքի փողոցներում: Քայլելով՝ շարժական պատկերաների պես նրա մտքից անցնում էյին որվա գեղքերը, վորոնք նրա համար միանգամբայն անսպասելի լինելով, թվում էյին նրան վորպես ծանր մզձավանջ: Այդ բոլորն այնքան զարմանալի ու տարորինակ չեյին, վորքան իր կնոջ վերաբերմունքը. զարհուրանքով եր վերչիշում կնոջ սպառնական խոսքերը՝ փոնում և արհամարհանքն ու հեղնանքը՝ վոստիկանատան... Միթենա իր հարազատ կինը չեր, խոմ յերազի մեջ չի՞ գլունվում Միլիտոնը...

Գրպանումը մի քանի որվա ապրուստի դրամ կար միայն, ո՞ւր պիտի զնար և ի՞նչպես պիտի ապրեր... իրիկնակեմին փողոցում պատահաբար հանդիպեց մի ծանոթ փոապանի, վորն արգեն լսել եր նրա հետ պատահած փորձանքը: Միլիտոնն ավելի մանրամասն պատմեց յեղելությունը և խնդրեց ծանոթին ժամանակալոր տեղ և աշխատանք տալ իրեն: Ծանոթ փոապանը սերով համաձայնեց և Միլիտոնը տեղավորվեց նրա մոտ:

Մի քանի որ հայրենակիցների և ծանոթների խոսակցության առարկան Միլիտոնի հետ պատահած դըքբախտությունն եր: Բոլորը մեղքնում էյին նրան, պարսավում կնոջն ու Գուրգենին և յեռանդով պատրաստվում դատարանում պաշտպանելու նրա զատը:

Հետեւյալ որը կինը վորտեղից վոր և իմանալով Միլիտոնի տեղը, մարդ ուղարկեց նրա մոտ առաջարկելով վերաբանալ և հաշտվել նրանց հետ:

Բայց Միլիտոնը չվերադարձավ:

Մութն ընկավ, յերբ Միլիտոնը դուրս յեկավ և սկսեց թափառել քաղաքի փողոցներում: Այդ մի քանի որմա ընթացքում նա սաստիկ մաշվել եր, գեմքը դեղնելու ու մարմնին պատել ընդհանուր թուլություն: Աւզեղը չեր դործում, ժանդոտ մեքենայի նման ծանրացել եր: Պատահած դեպքն այնքան եր ազգել նրա վրա, վորչեր կարողանում հաշիվ տալ, սառնորեն վերլուծել իրերը, վորոշ յեզրակացության հանգել. փոթորկից տարված նավի նման քչքչվում եր դես ու գեն առանց կայանի ու հենակետի: Յերկա՞ր, յերկա՞ր քայլեց անհպատակ ու մոլոր. կես գիշերին հոգնած յետ դարձավ, փոան դուռը բացավ (ծանոթի փուռն եր գիշերում) և ներս մտավ քնելու: Անկյունում փոած անկողնու վրա նստեց, քունը չեր տանում, զլուխը հենեց ծնկանը, յերկար մնաց այդպիս նստած: Յերբեմն, յերբեմն փոան մեջ տիրող խորին լուռթյան և խավարի դրկում լովում ելին ախ ու վախի հասուկասոր ձայներ: Հանկարծ նա դլուխը բարձրացրեց և մի նոր միտք դուսծ մարդք, պես՝ փայլկտող աչքերը հառեց մի կետի, նրա ուղեղում թեավորվեց ինչ վոր հանդուղն, ահավոր միտք... Վեր յելավ տեղիցը, աշխայժ ու կայտառ, թարմ ուժերով զինավառ, մթան մեջ առաջ գնալով վերցրեց պատին հենած յերկաթյա ծանր շիշը և փողոց յելավ սառանց գլխարկի, բաճկոնակի ոճիքը դեն հրված, ձեռներում անորինակ ուժ: Դուռը կամացուկ կողմեց և քայլերն ուղղեց դեպի իր տունը...

Կես գիշերից շատ եր անց: Փողոցներն ամայացել ելին. ամառվատ տոթը տակապին համառում եր ճնշել ամենքին: Յերբ Միլիտոնը հասավ իր բնակարանի մո-

տերքը, քայլերը դանդաղեցրեց և սկսեց կամացուկ, վոսների ծայրերին զնալ. նրան թվում եր, թե հետեւ վում են, կարծես ամեն տեղից անհայտ աչքեր դիտում են իր չարժուաները: Զգուշությամբ իրենց բակը մըտավ, անդուխով բարձրացավ մինչև յերկրորդ հարկը, դրանցած մնացած բանալիով բաց արավ գուռը և կանգնեց բալկոնում: Վոչ վոք չկար, բոլոր կենողները ընկել ելին խոր քնի մեջ: Զգուշությամբ, գողգող քայլ տուաջ գնաց: Շոգ լինելու պատճառով իր սենյակի դուռը կիսաբաց ելին թողել: Մի ըստե տատանվելուց հետո, յերկաթյա շիշը պինդ սեղմելով ձեռքում, սենյակը մտավ, վառվող ճրագի աղոտ լույսերի տակ նշմարեց իր անկողինը, ուր կինն եր պառկել, իսկ կողքին Գուրգենը, գլուխ-գլուխի...

Կնոջ մերկ թերը վերմակից դուրս եր ընկել ու փաթթվել Գուրգենի վզին: Արյունը խուժեց Միլիտոնի յերակներում, աչքերը մթնեցին, շշմեց: Բայց մի հըզոր ձայն հնչեց նրա ուղեղում, թե՝ «Միլիտոն, արադ չարժիքիր, թե չե, յեթե Գուրգենը դարթեց, կտորկանը կանի քեզ»: Այդ ձայնը նրան գերմարդկային ույժովեց ու մթնշաղի մեջ Միլիտոնի ձեռները բարձրացան և յերկաթյա շի ծանր ծայլը իջավ Գուրգենի ձակատին, հարվածը կրկնվեց մի քանի անգամ: Միայն հայկանուշը չարժվեց, աչքերը զարհութանքով մի վարկայան բաց արավ, ծղբաց, բայց նրա գլուխն ել ջախ-ջախվեց յերկաթի ծանր հարվածների տակ...

Եւ այնուհետև Միլիտոնը չխացավ, թե ինչ կատարվեց սենյակում...

Առավոտյան հարևանները բալկոնից անցնելիս, բաց պատուհանից ու դոնից նայելով մահճակալի վրա արյուն տեսան և արյունաշղախ գլուխները : Այդ մասին իսկույն տեղեկացրին վոստիկանության, վորը ներկայացավ և սենյակում, մահճակալի վրա զտավ իրարհետ պառկած յերկու դիմոկ՝ ջախջախած զլուխներով :

Մահճակալի մոտ, գետնին ընկած եր արյունաթաթախ չիշը, իսկ սենյակի մյուս անկյունում, թախտի վրա քարացած—նստած եր Միլիտոնը, սպրթնած, գեղնած գեմքով, կողի աչքերով ուր վոր նայելիս . . .

Միլիտոնին ձերբակալեցին : Քննիչը յերկար-բարակ արձանագրություն կազմեց, կատարվեց բժշկական քննություն և զործը հանձնվեց դատարան :

Յերկու ամսից հետո զատարանի ընդարձակ դահնի լիքն եր հոծ բարձրությամբ, Միլիտոնի դաստ եր : Հայրենակիցներից, փուազաններից շատերը, հարևանները և նույնիսկ մուշտարիններից մի քանիսը յեկել նոտել ելին հանդիսականների և վկաների շարքերում :

Բացվեց գտուաստանական նիստը : Դատավորը կարդաց թե՛ փոստն և թե սպանության արձանագրությունները : Մեղադրյալի աթոռին նստել եր Միլիտոնը խորշոմներով լի տանջված գեմքով : Դատավորի հարցերին զցկառուք պատասխաններ եր տալիս : Այն հարցին, թե ո՞վ կատարեց սպանությունը, Միլիտոնը հայտնեց վորինքն ե կատարել, իսկ թե ինչո՞ւ յե սպանել, նա կերկերուն ձայնով տոսաց :

— Վորովհետեւ նրանք ինձ սպանել ելին արդեն . . . Տիրեց քար լուռթյուն : Այնուհետեւ ել վոչինչ չկարողացավ խոսել Միլիտոնը : Ակսվեց բաղմաթիվ վկաների հարցուփորձը, վորոնք միաբերան պատկերացրին Միլիտոնի զրական կողմերը, նկարագրեցին նրա չարշաշ կյանքը, պարսալեցին կնոջն ու Գուրգենի արարք-ները :

Վոչ վոք դրական խոսք չարտասանեց հոգուտ ըստ պահվածների :

Միլիտոնը լուռ նստած զարմանում եր, վոր իր հարեաններն ու ծանոթներն ավելի լավ տեղյակ են յեղել եր կյանքին ու պայմաններին, քան ինքը . . .

Ամեն ինչ մանրամասն պարզելուց հետո, դատաստանական մարմինը նիստն ընդհատելով, զնաց խորհրդակցելու : Հասարակության մեջ վլուց ընկապ, կարծիքների տաք փոխանակություն, բոլորն եւ սրտառը սպասում ելին, թե ինչ պիտի վճռի դատարանը : Մինչ մեղադրյալը հանդիսաւ նստած՝ կողի աչքերով նայում եր ինչ վոր տեղ . . .

Մի ժամվա խորհրդակցությունից հետո, դատավորն ատենականների հետ ներս յեկամ և ծանր, սպասողական լուռթյան մեջ կարդաց բաղմաթիվ կետերից կաղմած դատավճիռը :

Միլիտոնն արդարացված եր . . .

Դահլիճում տիրեց իրարանցում, հանդիսականների  
գեմքին փայլեց ժպիտ և այս ու այն կողմից լովեցին  
ուրախության ձիչեր:

Բայց մեղադրյալի գեմքին մի մկան անդամ չչարժ-  
վեց...

## ԿԱՅԱՐԱՆՈՒՄ

Քաղաքում հայտարարվեց մաքրության շաբաթ,  
վորակեսղի քաղաքացիական կոփների հետևանքով գո-  
յացած աղբակույտերը մաքրվեն և տարափոխիկ հի-  
վանդությունների առաջն առնվի:

Մի խումբ պատկառելի քաղաքացիներ կայալանն  
ելին մաքրում: Մեկն ավլում եր, մյուսը թիակով հա-  
վաքում ավլուցքը, յերբորդը ձեռնասայլով աղբն եր  
տանում թափելու վորոշված վայրը:

Փոշին մոխրագույն ամսի պես պատել եր չորս  
կողմ, ու այդ ամսի մեջ պատկերվում ելին դեմքեր  
մուայլ ու թթու՝ սպանդանոց առաջնորդվող անասուն-  
ների պես ահաբեկ:

Յերեսին դեռ մազ չըռւսած յերիտասարդ կալվա-  
ծատեր Գորչակովը մի յերկարակոթ ավել ձեռքին՝  
համբամոլոր մարդու պես չալված, վախուկ հայաց-  
քով չուրջն եր նայում: Խեղճն իր ամբողջ կյանքում ա-  
վել չեր վերցրել ձեռքին, վորովհետեւ միշտ քնած և  
անուշ յերազներով վողովված եր լինում, յերբ սպա-  
սավորները մաքրում ելին իր դահլիճները:

Նախկին քաղաքագլուխ Դուբրովկին, վոր շատ  
մոտիկ եր աշխատում, նկատեց յերիտասարդի հուզ-  
մունքը:

— Յերեսում ե, վոր չեք իմահում ավելու կերպը,  
իշխան, ոյ այսպէս պիտի բռնել ավելը:

— O! տօն շէր ամի, c'est très difficile.

(Ո՛, սիրելի բարեկամս, չա՞ս դժվար ե), — մրմնջաց  
յերիտասարդը և հետեւց քաղաքադլիս ցուցմունքնե-  
րին:

— Կարո՞ղ ելիք յերբեք յերեակայել, իշխան,  
վոր մի որ պիտի ավենք, ինչպէս անում ելին մեր լա-  
քեյները:

Կալվածատեր իշխանը թեհ չպատասխանեց, բայց  
արձակեց խուլ, ախրազին համաչ:

— Հը՞մ, տեսէք Խլեբնիկովը վոնց և ավլում, մար-  
մին այնպէս և ծռել, վոր հակա փորը քիչ և մնում  
դեռնին քալի, — սրախոսոց մի քաղաքացի:

Մի քանիսը նայեցին հայտի մանուֆակտուրիստ  
Խլեբնիկովին, կարձահասակ, աշխարհի բոլոր յուղերը  
փորի մեջ հավաքած մարդ, վոր յերկաթագծերի ա-  
րանքներն եր մաքրում ճոճելով քառակուսի մարմինը  
և կարմիրների վախից հաղած հնամաշ սյուրտուկի  
կլորածն փեշերը:

— Խեղճն առաջին անդամն և այսպիսի անպատշաճ  
գործի լժփում, մինչև հիմա չիմա չիթ ու բյաղ եր չափում,

— Ցեթե մի քանի որ իրար վրա այսպէս աշխատի,  
վստահ յեղեք նրա փորին այնքան պիտի հալի, վոր նա-  
մնդիշտ պիտի ազատվի այդ անիծյալ բեռից:

Այս սուր խայթովը կոչկալամա Մուխինն եր, վո-  
րին Խլեբնիկովը վաղուց եր գաղարել կոչիներ պատ-  
գիրելուց, վորովհետեւ մի անդամ այնպիսի նեղքիթ

կոչիկ եր ծափել վաճառականին, վոր ինկանի վոտքը մի  
քանի սմիս շարունակ ծանր տանջանքներ եր կրել:

Վոմանք Մուխինի սրախոսությունը համով հա-  
մարելով ժպացին, ուրիշները ոհաճորեն շարժեցին  
կուխիները՝ իվան Պետրովիչին այլպէս անսիրտ խե-  
թելու համար:

— Ոչո՛, սակոնի գործարանատեր Ավետովը կար-  
դին սայլազան և դառել:

— Մի նայեք վոնց և ճոճվում, վոտները թփթը-  
փում, հենց իմանաս կառքին նոր լծած անփորձ ձի  
լինի...

— Հա՛, հա՛, հա՛...

Քրքջացին մի քանի քաղաքացիներ և հետաքրքրու-  
թյամբ դիտեցին բարձրահասակ, չորացած ծառի պես  
ծուռ ու մուռ Ավետովին, վոր աղբով լի ձեռնասայլն  
եր հեալով քըում: Սայլակի քիթը հանկարծ դիպակ  
յերկաթագծին ու շուռ յեկավ, միջի աղբը թափվեց գե-  
տին: Քիչ մնաց քըողն ել տապալվեր հետը:

— Խ՛ե, խ՛ե, խ՛ե, ... Հրհնացին քաղաքացիները  
չորս կողմից և համատարած քրքիջի մեջ՝ Ավետովը  
կրկին աղբը լցրեց սայլակի մեջ:

— Մի ամիս առաջ պարոն Ավետովը կարո՞ղ եր  
յերեակայել, վոր այսոր աղբ զցող կդառնա. Հը՞մ,  
աշխարհը վո՞նց և փոխվում...

— Ա՛խ, ի՞նչ լավ կիմներ, վոր եդ անհողին յերեսն  
ի վար չուռ զար դիտին ու քիթ-պոռւնգը մի լա՛վ  
ջարդվեր, — կծեց մի սապատավոր մարդ, Ավետովի  
նախկին գործակատարը, վոր հակառակ բաղմամյա

ծառայությանը՝ դուրս եր արվել գործարանից մի  
զույն սապոն թագուն տուն տանելու համար...  
— իսկ դու, չորացած ագռավ, հարմար տեղ ես  
էտել կոկուալու, — նկատեց խստորեն մի ակնոցավոր  
մարդ :

Նրա քթի գեղնավուն ծայրը մատնում եր, վոր նա  
յել Ավետովի սապոնից զուրկ չի մնացել:

— Զանըմ, զդո՞ւշ, ի՞նչ ժամանակ դուք վեճի,  
ուզում եք կարմիրների ուշաղրությունը դրավե՞լ,  
ինչ ե :

Ակնավաճառ Շալաթը, մի կուպիկ, բոյը թիզ ու  
կես մարդ, այնպես եր քրտնել, վոր հաղիվ եր չնչում,  
մոտենալով իր մտերիմ բարեկամ փաստաբան Ռուպեն-  
սկուն՝ սկսեց դառնորեն զանդառվել:

— Ո՞Փ, Սե՞րժ, խիստ ծանր ե, ել չեմ կարող դի-  
մանալ, խեղդվում եմ...

— Ե՞իս, սիրելիս, իս ինչ կարող եմ անել, կար-  
չիրների հրամանն ե, պիտի աշխատենք, ուրիշ յելք  
չկա, — պատասխանեց փաստաբանը սփոփիչ ձայնով:  
— Չե՛, այլևս չեմ կարող, Սե՞րժ, դլուխս պայ-  
թում ե, խելքս կարող եմ թոցնել, Սե՞րժ...

Սերժի սիրոն ել դալարվում եր, ձեռները ջղայ-  
նությունից գողում, իսկ հուսահատորեն նայող աչ-  
քերն ասում ելին.

«Ո՞, սիրելի բարեկամս, տակալին խելքը մի  
թոցնի, համբերինք, զուցե շուտով այս մղձալանջն  
ըլլ...»:

— Ե՞իս, փուչ, անիծյալ աշխարհ...

Լովեց մոտիկից քաղաքաղլուխ Դուրսովսկու տրք-  
ուունջը : Յեկ նրանց հայացքները մի պահ հանդիպեցին  
իրար :

Կիսամերկ ու վոտաբորիկ, մեռելային գեմքով մի  
մարդ, վորուեղից վոր ե, հայտնից կայրաբանում և  
ակսեց վոլորմություն աղերսել աշխատող քաղաքա-  
ցիներից :

Կեղտոտ, վոսկրացած թեր յերկարեց և մոտեցալ  
Խերնիկովին: Վերջինս փոշոտ ավելը թոթափեց զայ-  
րագին, փորը գեմ տվեց և հրամայեց աղքատին՝ հե-  
ռանալ: Բայց տեսնելով, վոր նա համառորեն կանգնել  
ե, սաստիկ հայույանքներով յետ-յետ նահանջեց վո-  
ւորելով բարկաճայթ աչքերը :

Մուրացկանը դիմեց իշխան Գորչակովին: Վերջինս  
սպասնական հայացք նետեց և արագորեն անցավ ուրիշ  
կողմ :

Հայտնի հողատեր իշխան Դոլկոպալովը, վոր զը-  
րուիր ծոած աշխատում եր և մտքում հազար անգամ  
հայույում յուրայիններին, վորոնք ուշանում ելին և  
չելին զալիս աղատելու նրան վայրենիների ճանկեց,  
տեսնելով խիստ մոտ կանգնած մուրացկանի այլան-  
դակ պատկերը, թակարդն ընկած թուչունի պես վախ-  
րուկ ճիշեր արձակեց :

— Ֆո՞ւ, զի՞ - էս - էս ու տու մես յես  
վիլյու այլան, լուսական գուշակը անապահ պատկեր  
պատկեր անաստուն, խո՞զ...

Մուրացկանը վոչ միայն չեռացավ, ընդհակա-  
ռակն, ավելի ու ավելի առաջ գալով, կեղտոտ ձեռքն  
յերկարեց մինչև իշխանի քիթը :

— Ô! mon dieu, mon dieu (Ո՞Շ, ասոված ի՞՛, ասոված ի՞մ), — բացականչեց իշխանը և ձեռներով ծածկեց դէքը:

Փաստաբան Ուսպենսկին փոշոս ավելույի զինված առաջ անցավ և սկսեց մուրացկանին ավել աղբակոյ-տի պես :

— Յեղբա՛յլ, մեր ի՞նչ զործն է կայարան քաքրել  
և այսպիսի զզվելի անասուններին հանդիպել: Համա-  
ձարակի առաջն են ուղում առնել, մեղ ինչ, մարդ չկա՞,  
վոր մենք ենք աղտոտությունները սրբում, — քրթմա-  
չոց փաստաբանն աղքատին հալածելուց վերադառնա-  
լով:

— Ա՛լու, ինչ տոեմ մերսոնց, վոր ուշանում են ու չեն կարող ես անիծած կարմիրների համիցը գտի, — մրմուաց Դոլկոպալովի քիչ հանգստազած:

— Շատ դարձ մի անի, իշխան, աշխարհն եսպես  
չի մնա՞ , մի որ ել սրանց քիթ-պառանդը լա՞վ կջար-  
դենք, — ասաց նախկին գատախազը սպառնական դեմք  
բնողունելով:

— Սըս' , պարսնայք , սիլա՞նս , այժմ քարերն անդամ ականջ ունեն , — զգուշացրեց քաղաքակլուխը չորս կողմրնայելով :

Յերբ մուլացկանը մոտեցավ կոչկավաճառ Մուխին, վերջինս բերանը զբած հացի խոչոր պատառն խսկույն կուլ ավեց, նախաճաշը պահեց գրպանում և դռաց .

— Հըմ, ագռալի ճուտ, մենք աշխատենք դու ու-  
տե՞ս, լս'կ, թէ ձրի ազբ ցցենք և թէ սրան-նրան ձրի

վազորմություն տանք. չե՞լ, ախաղեր, մէր գավթաբուժ  
եց տեսակ բան չկա զբած:

Մուրացկանը թողեց նրան և մստեցավ ակնավա-  
ճռ Շալաթին, չուլով աչքերը լայնապիշ, վորտեղ  
իշխում եր քաղցը մահասարսուռ ու ահուելի։ Մինչ  
կուզիկ մարմնով և փոքրիկ, փայփլուն աչքերով ակ-  
նավաճռը պատրաստվում եր ոձիքն աղասել, յերր  
իր խոպոտ ձայնով մեջ ընկալ նախկին պրիստավ Կիոդ-  
կալով։

— կորի՞ր, լսկույն, քաղցած չուն, թէ չէ դլուխէ  
չուրին կեր կդարձնեմ :

Յեվ իր սպառնալիքը հաստատելու համար, վոս-  
քով ուժգնորեն հարվածեց աղքատին: Վերջինս գեմքը  
ծովոեց, յերեքաց ինչպես արմատահան յեղող ծառ և  
յիտ ու յետ գնալով՝ տապալվեց գետին: Մի վայրկյան  
թվաց, թէ նրա կմախքացած մարմինը փշրվեց, սա-  
կայն մի փոքր անշարժվելուց հետո, վեր յելակ և  
ձեռքն յերկարելով կրկին վողորմություն խնդրեց:

— Մեր ցավը քիչ է, սրանց հոգմն ել պլրտի քա-  
շենք, թու, — քրթմնջաց քթի տակ ու թքեց մի հին-  
չինովնիկ, ապելը ցասումով չպրտեց մի կողմ և ծխա-  
խոսոր վառերով սկսեց ծխել:

Ամենքն ել հայոցիցին, վնասիցին մոռացկանին,  
թեև բոլորն ել հետերնին նախաձաշ ունելին:

Յնցոտիների մեջ կոլորված մուրացկամբ արա-  
հատ՝ գնաց նստեց պատի տակ, յերկու ձեռների մեջ  
պահելով գլուխիլ: Քիչ հետո, ոճից խայթվածի պեր  
վեր յելավ, վոսկրոս թերը ճոճեց, իշտավ մայթից և  
քայլեց յերկաթաղերի ուղղությամբ: Այլևս վոչ վոքի

ձեռք չերկարեց : Դեմքի բաղմաձև կծկումները , բութի մահաշունչ հայացքը ներքին ծանր տաղնապէ ելին արտահայտում : Յերկաթաղծից անցնելիս ուժերն սպառվեցին , կանգնեց , մարմինն ամբողջ դողպողաց հողման կոծ տերեկի պես , դեմքի մկանները ձգվեցին , մեջքը թիքլեց և ընկալ դժի վրա , ձեռներով մի վայրկյան չափեց հողը , հետո անշարժված՝ աչքերը հառեցին :

— Սոված ե խեղճը , ով գիտե քանի որ ե , վոր հաց չի մտել բերանը , — ասաց մի քաղաքացի :

— Սոված ե՝ թող սատկի , ով ե մեղալոր , — պատասխանեց կոճակները պոկած հին չինովնիկը :

— Բայց կարող ե գնացքի տակ մնալ , պետք ե հեռացնել զծից :

— Թո՞ղ գնացքի տակ մնա , ի՞նչ կա վոր , մի հարվածով կազառվի այս անիծյալ աշխարհից :

— Կաղասովի և մի հաց ուտող կպակսի :

— Ճիշտ վոր , ստանց այն ել չորս կողմ սով ե , իսկ ուտողների թիվը չափազանց շատ :

Հեռվեց լսվեց վարժություններ կատարող չողեակառքի զիլ ձայնը :

Ահա՛ շողեկառքը , կարծես այս զծի վրա յե անցանում :

— Յեթե այդքան մտահոգվել եք այդ անհասունի մտախն , համեցե՛ք , կարող եք գնալ և հեռացնել զծից :

— Մի հոգով չի կարելի հեռացնել նրան , — ասաց տառչին քաղաքացին նայելով մուրացկանի կողմը :

— Խերնիկովին ողնական վերցրու , արջի չափ ույժ ունի , փետուրի պես կարող ե վերցնել նրան :

— Խերնիկով , Խերնիկով , — կանչեցին այս ու այն կողմից :

Վաճառականը , վոր կոչկի արձակված թերերն երամբացնում , լսելով իր անունը , դժողոհ ու խիստ հայցք զցեց ձայնողների կողմը :

— Պարոն Խերնիկովը բարկացավ , զգուշ , թե չե . . .

— Վա՛յ , վա՛յ , ես ինչ վատ որերի հասանք , ել մեծ ու պկալիկ ճանաչող չկա , — վշշաց հաջի իսակը , փոքրիկ «Վամպիլը» սրճարանի մշտական այցելուն , փոքրիկ մողեսի նման խլրացաղ մարդ , վոր ամբողջ կյանքը մողեսի նման խլրացաղ մարդ եր անցկացրել և այդ խաղի մեջ ամենաբղի խաղալով եր սրճարանում : Սակայն , չգիտեն նատաղանդավորն եր սրճարանուն , ինչո՞ւ , հակառակ քաղաքացիական պարտականություններն ամենայն բարեխղճությունը կատարելուն , թյուններն ամենայն բարեխղճությունը կատարելուն , ելի ծուռ աչքով ելին նայում նրան . . .

«Յեղբա՛յր , յես չեզոք մարդ եմ , վոչ վատին եմ խասնվում , վոչ լավին , վոչ սպիտակին , վոչ կարմիկին , ինձ ի՞նչ : Թող հանգիստ թողնեն , գնամ քիչ նարբին , ինձ ի՞նչ : Թող հանգիստ թողնեն , գնամ քիչ իսակը գմբղմբացդի խաղում» , — մտմտում եր հաջի իսակը գմբղմբացդի խաղով իր ճաղատ գլուխը :

— Հըմ , ալելի լավ չե՞ս Ավետովին հրավիրենք , վոր իր աղբասայլով հեռացնի այս մարդուն :

— Այո՛ , այո՛ , լավ ասաց , կանչեցեք Ավետովին :

— Ե՛յ , Ավետովի , ձերդ պայծառափայլություն , այսուղ համեցեք , զցելու աղը կա :

Բայց սասլոնի գործարանատերը ձեռնասայլի քիթը չուռ ավեց և քչեց հակառակ ուղղությամբ :

— ԱԵՇ, իսկ, իսկ, ձերդ պայծառափայլությունը  
լավ կծիկ զրեց, — քրքջացին քաղաքացիները:  
իսկ սապատավոր գործակատարը վոչ միայն ա-  
խորժակով հռհռաց, այլ անառամ բերանը ճռթած,  
աչքիրը ովիշպիշ, մեծ բավականությամբ դիտեց սայ-  
նակին խաղելինին:

Փոշին բանել եր չորս կողմ: Արև չկար: Մթամած  
ամպերը պղնձացել ելին յերկնքում ու մասակուղով  
պատել ամենուրեք:

Հեռուներից լավեց գնացքի խուլ ձայնը:  
— Ե՛յ, մարդու վեր կաց, թէ չե վիշտով հում-  
հում կուլ կտա քեզ, — ձայնեց մի քաղաքացի:  
Մուրացկանն իր մարմինը մեծ ճիկով քիչ շարժեց,  
զլուխը բարձրացրեց յավից ծամոելով դեմքը, բութ,  
մահապիյուն հայացքով շուրջը դիտեց և մնաց ան-

— Տո, ասում են վեր կաց, դմբո, ուզում ես հա-  
զար կտօնը դառնալ. աեսեք ինչ ասկուշապուշ նայում  
ե զմբոն:

— Ախըր, ուժ չունի, վոր վեր կենա:  
— Զանըմ, ինչու անհանդստացնում եք մարդուն,  
դոցե վճռել և գնացքի տակ մնալ փորձելու համար՝  
վո՞զ կպրծնի, թէ մեռած:  
Պահեստի վաղոնների ներքեւ մաքրելիս՝ նպարա-  
վածառ Ժուկովն ալբավաճառ Սուխովին ասաց.  
— Կյանքը բավական թանդեց, ասլրանքների դր-  
չպիտեմ:

— Ե՛, ախպեր ջան, ի՞նչ ես զարդ անում, թող  
չոննեցողները մտածեն, վոսկին ավելի յե թանգել, կը-  
ծախինք ու փառավորապես կապրենք, — Հայուարեց  
ալրավաճառը և մի պահ ուշադիր չորս կողմը նայեց  
սոսուղելու, թե կարմիր կամ կարմրանման մարդիկ  
չկա՞ն, արդյոք ուրիշները չլսեցի՞ն իր անզգույշ խոս-  
քերը, և յերբ համոզվեց, վոր միայն նպարավաճառը  
լուց, միամտեց և շարունակեց գործը:

— Յեղբա՛յր, յես ազբ զցո՞ղ եմ, վոր ինձ այս-  
պիսի աշխատանքի յեն լծել, ձեռներս արյունովեցին  
սայլի կոթը բռնելուց, — արտնջաց վճռաբեկ ատյանի  
անզամ Լազրեր, վորի հինայի գույն մորուքի ամեն մի  
թելը մի ափ փոչի յեր հյուրընկալել:

— Դոնապանիս՝ կուզմինին թողին, վոր ազայի  
պես վոսները ձգի, ինձ քշեցին այստեղ ազբ դցելու,  
թո՞ւ, — ակրաների միջից մոմուաց տնատեր թրան-  
դափելով:

— Հը՛մ, Միխայիլ Կարպիչ, դրամի վերջին յեկե-  
լչների ընթացքում մի բան մնա՞ց, — Հարցը ակ-  
նալաճառը հին բիբժիկի Սամույլիլովին:

Վերջինիս փոքրիկ, շարժուն աչքերը պսպղացին  
և մաղոտ գունչը մոտիկ բերելով, մի բան  
չչնջաց ակնավաճառի ականջին, և ապա յերկուսը միա-  
սին ժայռացին խորհրդավոր հայացքներ փոխանակե-  
լով:

Լավեց մի յերկարատե սուլոց և ալրավաճառ Սու-  
խովը կանչեց.

— Ե՛յ, իվան Պետրովիչ, գծից հեռացեք, զնացք  
և գալիս:

Իվան Պետրովիչ Խլեբնիկովն աշխատում էր յերկաթաղծերի մոտ, և մի յեր հավաքում ավլված կերտուությունները:

— Պարոնայք, իվան Պետրովիչի ականջները քիչ ծանը են, մոտ գնացեք, — բացականչեց քաղաքաւուիսը խիստ մտահոգված:

Ալրավաճառը, փաստաբանը, դատավոր Մալինովսկին և մի քանի քաղաքացիներ վաղեցին և Խլեբնիկովին հեռացրին զծից:

Իվան Պետրովիչը ճարպագումով մարմինը հնդկանի պես որորելով փախավ ահարեկ:

Նորից լավեց զիլ, ականջ խլացնող սուլոց և հետևով ու փնչալով յեկալ գնացքը: Մեքենավարը նկատեց զծի վրա ընկած մարմինը, յենթաղրեց, վոր կհեռացնեն նրան, մի քանի անդամ սուլոց և փորձեց զնացքը կանգնեցնել, բայց վերջինս իներցիայի ուժով առաջագալ:

Եերկաթուղային մի աշխատավոր հեռավեց աղաղակեց մի քանի անդամ և յերբ նկատեց, վոր վոչ վոք չի մոտենում զծի վրա ընկած մարդուն, վաղեց զեկի այն կողմը: Սակայն արդեն ուշ եր:

Գնացքը կանգնեց: Ծառայողներից և ճամբորդներից հետաքրքրողները ներքեւ իջան: Աշխատող քաղաքացիներից շատերը գործերնին թողած շատպեցին դեպքի վայրը: Մուրացկանի մարմինը մնացել եր առջին վագոնի անիվների տակ...

Մեքենավարը յետ մղեց գնացքը և ծառայողները զծից հեռացրին քրքրված, բղկաված մարմինը, ցընցուիների մեջ պլված, արյունաթաթավ մի ու մսա-

— Ու՞ի, յեթե մի քանի ըստե չուտ հասնելի՞ւ, պաշտում եր յերկաթուղային աշխատավորը և զառնաւուն զեկի կայարանը մաքրող քաղաքացիները, ծանր չէ չտով ասաց.

— Բնկերներ, մի՞թե ձեր մեջ չգտնվեց մեկը, ի՞որ ունենար մարդկային սիրտ և ժամանակին զծից հեռացներ սրան:

Տիրեց ձնչող լուություն:

— Դուք բոլորդ լուո՞ւմ եք...

— Մենք... մենք մեր աշխատանքովն եյինք զբաղված, չնկատեցինք, — ասաց գատավոր Մալինովսկին:

— Հըմ, զարմանալի յե, վոր հենց ձեր քթի տակ դուք չնկատեցիք, — զիտեց գնացքի ծառայողներից մեկը:

— Յեթե նկատեյինք, կթողնելի՞նք, վոր մնար գնացքի տակ, մենք մարդ չե՞նք, մարդու սիրտ չունե՞նք, ինչ ե, — հայտարարեց նպարավաճառ Փուկովը, մաքրելով փոչեպատ գլխարկը:

— Իհարկե, ջանի՞մ, ինչո՞վ պահոս ենք վոր, — կոկորդի մեջ իրխոսաց կոչկապաճառ Մուխինը և այնպես անձունի կծկեց գեմքը, վոր կողքին կանգնածները հազիվ կարողացան իրենց ինդուքը զսպել:

— Մեքենավարի պարտականությունն եր ուշադրությամբ հետեւել զծին և ժամանակին կանգնեցնել զնացքը, — առարկեց փաստաբան Ռւսպենսկին և իրավաբանական մի մեծ գյուտ անողի պես ինքնազոհ հայցքով նայեց լուռ հավանություն տվող քաղաքացիներին:

Կայարանի ծառայողները մուլացիանի զգդպլած դիմակը փոխադրեցին, իսկ քաղաքացիները վերադարձան իրենց աշխատանքին:

Հաջի իսակը բուռնութին քաշեց քիթը և մի քանի անդամ ուժգնորեն փոնդտաց, աջ ու ձախ տնձրեւելով լորձունքի բազմաթիվ կաթիլներ, ասպա մեծ ցանկություն դրաց մի անդամ նարդու քարերը շրմելաւին դցել, կարծես վազուց, չտո վաղուց և, ինչ չեր խաղել:

Կալվածառեր իշխան Գորչակովը շարունակ ժամցույցին եր նայում, յերեկոյան ժամադրություն ուներ, զեղանի Նաստաշյալին պիտի հանդիպեր:

Դառնալոր Մալինվակին սկսեց մտարել զատասանական կողեկսի բոլոր որենքները, նման պատրահների իրավաբանական հիմունքները վորոշելու համար:

Տնառեր Թրանդաֆիլովը կրկին բարկացավ և հայհոյեց, վոր դռնապանի փոխարեն իրեն ևն բերել և ծել այդպիսի ստոր, անպատշաճ գործի:

Ակնավաճառն աքլորի պես թերերը փքած վերէիւմ եր, թե վորքան ակամանդ, ալմաղ ու մարդարիս ունի պահած իրեն միայն հայտնի ծածկաբանում:

Իշխան Դոլկոպալովը իիստ կայրացել եր մուրտցիսնի վրա, վոր համարձակվել եր գնացքի տակն ընկել և նման սոսկալի պատկերի ականատես դարձնել իշխանին:

«Օ! les hommes! les hommes sals et sauvages...  
(Ո՛, մարդիկ, կեղտոս, վայրենի մարդիկ)...

Մինչ փաստաբան Աւստենսկին նախակին քաղաքագլուխի և դատավորի մոտ շարունակում եր յեռանդով

պաշտպանել իրավաբանական իր թեզը; թե իրենք կարող ելին չնկատել, մեղավորը մեքենավարն եր, վոր անփույթ գտնվեց և ժամանակին չկանգնեցրեց զըսնացքը:

Այդ վայրկյանին մի քաղաքացի կայարանի անկյունից ձեռնասայլն ուժգնորեն քշելով վազում եր մայթի յերկարությամբ: Հանկարծ, վոտքը ուղաց թե ինչպես, սայլը չուռ յեկավ և քշող քաղաքացին ել նրա հետ միասին տապալվեց գետին:

Բոլորն ել դարձան իսկույն և նայելով փաշիների ժեղ թափագլոր մարդուն՝ սկսեցին հոգուալ:

Յեվ մի պահ կայարանում աշխատով քաղաքացիների շրջանում տիրեց ուրախ քրքիչ և սրախոսություն:

1921թ. Կրամնեղար

# ԱՄԵՆԱՅԱՐՄԱՐԸ

Իսմայիլ աղան մոայլ մտքերի մեջ թաղված վերապահում եր տուն :

Խունացած պատեր և մութ աչքեր ունեցող հնամյա մզկիթի մոտ հանդիպեց մոլլա Դուրսունին և աղիողորմ ձայնով պատմեց, թե ինչպես անիծյալ բուշեկները զրայիցին Շեյթան բազարի կենտրոնում գտնող իր գորդերի մեծ վաճառաշահ խանութը :

Մոլլա Դուրսունը — սև, ցանցառ մորուքով, հափի աչքերով, կորաքամակ մարդ — տիսուր հայացքով նայ կործանվող հարուստ հավատացյալին և ասաց .

— Ալլահը թող քեզ ողնություն հասնի, Իսմայիլ աղա, չար սատանաների ձանկից աղատի . . .

Ճամբամոլոր ու շնկված՝ իսմայիլ աղան յեկավ տուն : Խոհանոցի գունը մի պահ կանգնեց և անհսոման չափ ուսերը շարժելով գոռաց .

— Ասիա, այ կըզ, վո՞ր ջար ու ջհանդամն ես, գնա մի՞ն մտած, յեկ այստեղ, հայլա՞ն . . .

Խոհանոցից ափալթափալ գուրս վազեց սև շալի մեջ կոլորված, ձեռները ջրաթաթախ, դեմքին հաղար ու մի դար ու փոս, հիսնամյա մի կին, դլուխը խոնարհեց և կանգնեց անխոս :

— Ախչի՛, սոված եմ ե՛, աղաղ ուսեղ և ուղում, դեկ' թեղ արա, հայլանի առջիկ . . .

Կարծես ամպրոսպ ճայթեց Ասիայի գլխին, ձեռ ու վոս ընկապ, վաղեց գես ու դեն, վորագեսղի աղին վորա չափ կարելի յե շուտ ճաշ մատուցանի ու նրա սիրտը բեղամալ չմնա :

Տան բոլոր գործերն Ասիայի ուսերին եր — սենյակներ մաքրելը, լլացքը, ճաշ պատրաստելն ու մատուցանելը : Իսմայիլ աղան յերեք կին ուներ, ու ամեն մեկը նրանցից քաշվում եր իր սենյակը և յերեմն միայն իջնում խոհանոց կարգադրություններ անում :

Անդրանիկ կինը՝ Նաջիրե խանում, մոտ յերեսուն տարեկան, սև, փայլուն աչքերով կին՝ Իսմայիլ աղան բերել եր Բագվից : Նա իրեն համարում եղ տան խկական հարսը ու այդ առթիվ շարունակ լեղվակովի բոնը վում մյուս կանանց հետ :

Միջնակը՝ Վալիդե խանումը՝ ավելի թարմ եր, լլքը կրծքով, աչքերը սաթի նման սև, դեմքը հասած ինձորի պես կայտառ : Նա սրճարանատեր Ոմար ողլու աղջիկն եր, վորին իսմայիլ աղան ձեռք եր բերել փողով : Բայց Վալիդեն սիրում եր մսավաճառի տղա Ասաղին : Մանկությունից գաղտնորեն ուռճացած սերն անզոր մնաց, ու Վալիդեն ստիսլիած յեղալ ապրել իրենից յերկու անդամ մեծ, հիսունհինգամյա, խլեղի պես փոքրիկ ու շարժուն, մոայլ մարդու հետ, վորին ատեց սկզբից և յեթ ու մնաց մինչեւ վերջ ոտար . . .

Ամենից գեղեցիկը, սակայն, կրտսերն եր՝ Ֆիրուզեն : Աղան Վաղախից բերել տվեց նրան, մի վորք դաւար աղջիկ, հաղիվ քան գարուն համբած : Յերբ Ֆիրուզեն տուն յեկավ, մյուս կանայք վրդովկեցին սաստիկ և մէսեցին դուզուալ .

— Առանց այն ել յուլա չելինք դնում, հիմի մեկն  
ել արելացավ, մի սպասի ճուտ, վոր զլիներս կոկը-  
ռա, — սուր ճէռով կանչեց Վալիդե խանումը:

— Գլխներիս կոկում, հըմ, եռ անտուն, անտեղ  
քա՞ծը, ոեխին ո՞վ մտիկ կտա վոր, թող չնթոկի նստի  
սի անկյուն, — խեթեց նաջիրի խանումը ցա սկսա շեշ-

Ռւ յերկուքն ել թշնամաբար ընդունելով Թիրուղե-  
յին, մինչեւ վերջն ել մնացին թշնամի:

\* \*

Իսմայիլ աղի վոչ միայն առևտրական, այլ և տան  
զործելն ել թարսվեցին, մի բան, վոր բոլորովին խան-  
գարեց նրա հանդիսաւը: Գայթակղության առաջին քա-  
րորդեց Վալիդե խանումը, վոր վերջերս հաճախ  
բացակայում եր տնից, պատճառաբանելով, իբր հո-  
րանցն ե գնում: Մի որ ել լուր բերին, թե ինչպես փո-  
ղոցում Վալիդեյին նկատել են Ասաղի հետ խոսելիս...

— Ես ի՞նչ ե, այ կին, ի՞նչ թաղա խարար, եսպես  
ամեն որ հորանց կդնա՞ն, բայ առաջ ինչի՞ չելիր դր  
նում — հարցրեց ամուսինը:

— Տանը նստեմ, ո՞ւմ ոեխին մտիկ տամ, դնում  
կմ, ելի պատասխանեց հաղիվ լսելի ձայնով Վալիդե  
խանումը:

«Ծը, ծը, ծը... սատանաները տունս ել են մտել»  
— մտմտաց ինքնիրեն Իսմայիլ աղան ատամները կըրձ-  
տացնելով և խիստ պատվիրեց կնկան, վոր նստի տա-  
նը, բայց Վալիդե խանումը վոչ միայն չնստեց, այլ  
մի գիշեր ել անհայտացավ. լուր տարածվեց թաղի մեջ,  
թե Ասաղը փախցրել ե նրան...

«Ծո՛, մի մսավաճառի գյաղա փախցնի իսմայիլ  
աղի կնոջը, լսվա՞ծ բան ե, յես քո եսենցն, ենենցը...»  
դոսդոսաց Իսմայիլ աղան և վորոշեց վրեժինդիր լի-  
նել, բայց ի՞նչպես... Ասաղը մի հաղթանդամ, հուժ-  
կու տղամարդ եր, արծաթակուռ դանարկը զոտկում  
խրած, մի ձեռքով կարող եր տաշեղի պես նրան թոց-  
նել ողի մեջ: Իսմայիլ աղան դիմեց որենքին: Դատա-  
րանում ինքն ու կինը կանգնել ելին դեմ առ դեմ. ա-  
ռանց յերկար-բարակ պահելու, դատավորը Վալիդեյին  
հարցրեց, թե արդյոք իր կամքո՞վն ե զնացել Ասաղի  
մոտ, թե վերջինս փախցրել ե նրան: Մանիշակագույն  
քողով զղարշված Վալիդեն դողդով ձայնով չննջաց,  
վոր իր կամքովն ե զնացել և սիրում ե Ասաղին:

Դատավորը նիստը փակեց հայտարարելով, թե  
սակետական որենքով Վալիդեյի արարքն ընդունելի յէ:  
Ու Իսմայիլ աղան ամոթահար ու գլխիկոր վերադար-  
ձավ տուն մտաբերելով մոլլա Դուրսունի դառը խոս-  
քերը...

\* \* \*

Անդործ մնալով, Իսմայիլ աղան փեշերը հավա-  
քեց ու սկսեց ինայողաբար ապրել: Անդրամնիկ կինը՝  
Նաջիրե խանումն ուզում եր, վոր ամուսինը մի կին  
պահի և անպայման իրեն պահի: Այդ առթիվ վաղուց  
նրանց մեջ վեճ կար: Մի անգամ Նաջիրեն ալելի կըտ-  
րուկ դրեց հարցը: Յերբ ամուսինը չղայնացավ ու գոռ-  
զուաց, Նաջիրեն ասաց.

— Հըմ, ուրեմն դու Ֆիրուզեյին ավելի յես սի-  
րում, հա՞, դեհ առաջուց ասա, վոր յես իմանամ իմ  
գործը:

— Նրան ել եմ սիրում, քեզ ել, յերկուքդ ել իմ  
հարազատ կիներն եք, միայն թե, աստծու սիրուն,  
կոիվ-ղալմաղալ մի գցեք տանը...

— Զե, դու պետք ե պարզ ասես, — պնդեց Նաջիւ-  
բեն անսովոր համառությամբ, — ի՞նձ ես ավելի սի-  
րում, թե նրան. առանց այն ել գործերը թարսվել են,  
հաղիվ ենք յոլա գնում. ել չեմ ուզում, վոր այդ աղ-  
ջիկն իմ տանը մնա, ո՞վ ե նա, փողոցում մեծացած,  
անանոն այդ քածը...

Ամուսինը ճարճատող ձայնով կրկին գոռաց և թե-  
շերն անհամաշափ ճոճելով անից դուրս գնաց :

Մեկը մյուսի որինակին հետեւելով կամ իրար ջիղ-  
ում՝ կանայք ավելի ու ավելի պահանջուս ելին դառ-  
նում. մեկին չոր գնելիս, մյուսն եր մեջ ընկնում և  
սկսվում եր մի սուր լեզվակախիւ :

— Ախչի, յոլա գնացեք, խեղճ չէ՞մ, ի՞նչ եք առանց  
այն ել պղտորված կյանքս ավելի պղտորում, — աղա-  
չում եր իսմայիլ աղան :

Յեվ փաղաքող, լալկան ձայնով աղերսում եր,  
վոր հաշտ ապրեն իրար հետ : Սակայն նաջիրեն հա-  
մառորեն պահանջում եր, վոր իսմայիլ աղան թիրու-  
ղելին արտաքի :

— Զես քչի, կթողնեմ ու կդնամ հորանցս տուն,  
այսպես ել չեմ կարող ապրել...

Հաճախ եր պատահում, յերբ մի չնչին պատճա-  
ռով, յերկու կանայք, իրար մաղերից բոնած, քաշ-  
քըշում, ծեծկումում ելին : Նաջիրեն ավելի ուժեղ  
եր և ճարպիկ, ձեռքի մեջ վոլորելով թիրուղեյի մաղե-  
րը զոռում եր.

— Հայդե, դնա, ես տունն իմն ե, դու խալխի դռա-  
նը մեծացած աղջիկ, ի՞նչ բան ունես այստեղ...

— Իմն ե, իմը... կանչում եր ֆիրուղեն աչքերն  
արտասուքով լցված, փոխաղարձ հարվածներ տալով  
մյուսին :

— Աման, աստծու սիրուն, յոլա գնացեք, — պա-  
ղառտում եր ամուսինը դեղնավուն դեմքը ծոմուելով,  
ճակտին գոյացնելով հազար ու մի կնճիռ, ընկնում եր  
կուլով կանանց միջե նրանց բաժանելու նպատակով,  
բայց կանայք բոնում ելին նրսն, քաշքում, հրմլչա-  
կում...

— Ասա, ո՞ւմն ես պահելու, ի՞նձ, թե՞ որան, —  
պահանջում եր նաջիբե խանումը :

— Յերկուսիդ ել, յեկուսդ ել իմն եք, իմ հալալ  
ապրանքը...

— Կամ յես, կամ սա, յերկուսիցս մեկը, ջոկի՛ր...

— Յամա՞ն...

Իսմայիլ աղան գլուխին առնում եր ձեռների մեջ,  
ըթունքները կրծուսում և ահարեկ՝ չեր իմանում ինչ  
անի :

Իսկ խոհարարուհի Ասիան, լուս ականատես լինե-  
լով այդ բոլորին, սրտանց ցալում եր, վոր աղան այդ-  
պես չարչարիում ե...

«Ե՞ս, ինչ թարս ժամանակների հանդիպեցինք,  
աղան ել հանգիստ չունի...» մտածում եր նա գլուխիը  
թափահարելով :

\*\*\*

Նաջիրեյի յեղբայրը կոմմունիստ եր և բավական  
պատասխանատու պաշտոն եր վարուժ Բարվում : Մի

անդամ՝ կուսակցական գործերով թիֆլիս յեկալ և այցելեց քրոջը։ Վերջինս արտասուրքն աչքերին նկարադեց իր գանձ վիճակը և խնդրեց, վոր յեղբայրը ունի իրեն Բագու ծնողների մոտ։

— Թե չե՞ , վալլահ , բիլլահ , կյանքիս վերջ կտամ . . . Լսելով քրոջ կտամուկ առաջարկը , յեղբայրը նաջիւելին իր հետ տարափ։

Իսմայիլ աղան ծնկները կոծելով , աղիսպորմ ձայնով բացականչեց .

— Յամա՞ն , տունս քանդվեց , տունս . . . Մինչ Ֆիրուզեն շատ ուրախացավ , վոր իր սոսկուի ախոյանը դնաց , և ինքը մնաց մեհակ։

\*\*\*

Ֆիրուզե իսանումի մոտիկ ընկերուհին՝ Գյուլբեհատը շարունակ այցելում եր թաղի նորաբաց ակումբը և գալս վողերությում պատմում , թե վորքան լավ և այնուղ , ներկայացնում կա , յերեկույթ , յերաժշտություն։ Ֆիրուզեի հատաքրքրությունը բանկվեց և Գյուլբեհարի հետ մի քանի անդամ դնաց ակումբ։ Ամուսինը խիստ բարկացավ .

— Ետ ո՞ւր ես դնում , այ կնիկ . Են սատանաների տեղը ել չես դնա . . .

Ֆիրուզեն վախեցավ և վորոշեց չգնալ , բայց ընկերուհին համոզեց նրան . բացի այդ , տանը խիստ ձանձրուի յեր , և կրկին հաճախեց ակումբ։

— Քեզ չասի՞ , վոր եղ չելթանի վորջից վոտքը հեռու պահես , չասի՞ , — զոոզոոաց ամուսինը .

— Զեմ կարող չգնալ , — պատասխանեց Ֆիրուզեն

եր անուչիկ , մեղմ ձայնով , — ինձ գործ են ովել այն-ուղ։

— Ի՞նչ գործ , այ կնիկ :

— Յես պետք և ակումբի ընթերցարանին հետեւմ , թերթելը պիտի ստանամ ու դասավորեմ :

— Զեմ ուզում , չե , վալլահ , բիլլահ կապանեմ քեզ , յեթե մեկ ել զնաս , — բացականչեց ամուսինն անսահման զայրույթով լցված։

Կինը թեև չհակածառեց , բայց շարունակեց հաճախել ակումբ։

Իսմայիլ աղան գոռզուսում , հայհոյում եր շարունակ : Մի յերեկո յել զարհուրանքով նկատեց , թե ինչպիս ակումբի դռանն իր կինը մի ջահել թուրքի հետ խոսում եր . . .

— Վա՞յ աման . . . վա՞յ . . . կանչեց ինքն իրեն և դիվահարի պես վաղեց տուն : Ենյակի դռանը պատահելով Ասիային՝ ամբողջ ուժով դռաց նրա վրա .

— Ե՞յ , չելթանի աղջիկ , աչքերիցս հեռացիր , յես քո հսենցն , ենկնցը . . .

Ասիան շալի մեջ կոլումից , կծկվեց և սարսափահար վազեց խոհանոց :

Գիշերն իսմայիլ աղան փրփուրը բերանին , բոռնցքներն սպառնագին շարժելով , Ֆիրուզեյից պահանջում եր հայտնել , թե ով եր նրա հետ զրուցող տղեն :

— Ուայկոմիցն եր , գիրք ու լրագիր եր բերել ընթերցարանի համար :

— Զար ու զահրումար եր բերել , զար ու զըխկում . . .

Ամուսինների մեջ ծագած անախորժություններն

ավելի ու ավելի սաստկացան։ Մի զիշեր ել ֆիրուզին  
ամուսնու ձեռքին նկատեց մի փոքրիկ դաշույն։ սար-  
սափից սուր ճիչ արձակեց։

— Տես, այ, կապանեմ հա՛։ դե՛մ, խոսք տուր,  
վոր ել չես գնա են սատանի տունը . . .

Կինը լաց յեղավ ու յերդվեց, վոր ել խակի չի գնա։

— Եղաւս, հա՛, խելոք կաց։ բավական և տունս  
քանդեն, յես նրանց եսենցն, ենենցը . . .

Գիշերն ամբողջ ֆիրուզին չքնեց, վախից կուչ յե-  
կավ անկողնի մի անկյունում և սրբադող սպառեց մին-  
չև առավոտ։

Մյուս որն ակումբ գնաց և պատմեց գիշերվա-  
շեպքը։ Խսմայիլ աղին ձերբակալեցին, խակ ֆիրուզին  
փոխադրվելով ընկերուհու մոտ, սկսեց այստեղ աղ-  
րել։

Խսմայիլ աղան նստել կալանատանը թիզբէհ եր  
քաշում, մտքում աշխարհիս ամենաթունդ հայհոյանք-  
ներով հայհոյում եր բոլորին, խակ յերեսանց խեղձա-  
ցել, աղաշում, պազատում եր, թե ինքը խեղճ ու կըակ  
մարդ ե, թող թողնեն գնա իր գործին։

Միայն Ասիան եր մտածում նրա մասին, ամեն որ  
այցելում, ուստելիք տանում։

\*\*\*

Խսմայիլ աղի սենյակներից յերեքը գրավեցին և թո-  
ղին միայն մեկը։ Կալանատնից դուրս գալով իրեն շատ  
նեղ զգաց մի սենյակում։ Գիշերներն անքուն շարունակ  
վշշում եր ու մտաքերում անցյալը, գորգերով լիքը  
մեծ խանութը, գեղաչվի կանայքը, անուշիկ ֆիրու-

զին . . . բոլորը, բոլորը ձեռքիցը գնացին, և նա մնաց  
վորը, մենակ։

«Եալաթ չար սատանին, մենակ» . . .

Մեյլանում ել վոչ վոք նախկին խոնարհ ժպիտով  
չեր բարեռում նրան, ու այդ պատկառելի, մեծահա-  
շուստ մարդը այժմ, ձեռը մազու դնչին, ցերեկները  
գնում, պազում եր մի փակ խանութի սուաջ, հնամաշ  
գնում, աշքերը մամուլ-մամուլ մի անորոշ կետի,  
հազուստով, աշքերը մամուլ-մամուլ մի անորոշ կետի,  
կծկվում եր ու միաք անում, միտք անելուց չորացել  
եր, վոսկոր գարձել . . .

«Վայ աման, աշխարք, աշխարք» . . . մտմտում եր  
խմայիլ աղան, ու խելքը գլխիցը գնում եր։

Այսպես անցան շաբաթներ, ամիսներ, նրան տի-  
շեց մի անասելի ձահձրույթ, մենակությունը վորդի  
պես ուստում, մաշում եր նրան։ Սենյակում շարունակ  
պես ուստում, մաշում եր գալիս  
յետ ու առաջ գնալ-գալուց հոգնելով, գուրս եր գալիս  
նեղ միջանցքը, կանգնում խոհանոցի դռանը, թիզբէհ  
քաշում, ուղում եր ինչ վոր ասել աշխատելուց հան-  
գըտացող Ասիային, բայց փոշմանում եր ու նորից  
յետ դառնում սենյակը։

Գիշերը նստել անկողնում, աչքերը չուած խալա-  
րին, ուղեկում մեխի պես մի միտք ցցված, մազու-  
րին, սպասում եր . . . Անցան յերկար, համբիտե-  
դուք բաց, սպասում եր . . . Անցան յերկար, համբիտե-  
նականության չափ ժամեր։ Ապա վեր յելավ, սենյակի  
կամացուկ բացավ, մի պահ միջանցքում սպա-  
սուուը կամացուկ բացավ, մի պահ միջանցքում սպա-  
սուուը յերկմատանքի մեջ և ապա անշուկ շարժվեց դեպի  
խոհանոց . . .

Թախթի վրա կուչ յեկած Ասիան զգաց, վոր մեկն  
իրեն խստում ե. օարսափից վեր թուավ և մութի մեջ  
նշմարեց աղին գիշերված հազուստով։

— Ասիա՛, այ կըդ, մհնակ եմ, յել դնանք ինձ  
մոտ...

— Աղա՛, ինայիր ինձ, յես վորտեղ, դու վորտեղ,  
— ասաց Ասիան կերկերում ձայնով :

— Զե, այ կը՛զ, հիմի ժամանակն ինձ աղայությու-  
նից գցել ե, դե, յել, բալա ջան...

Ու բանելով նրա թևիցը տարավ իր սենյակը:  
Ասիան աչքերին չեր հալատում, ու տեսիլքի պես բան  
թվաց նրան այդ ամենը...

Հաջորդ որվանից հարեանները նկատեցին, թե  
ինչպես Ասիան այլևս խոհանոցում չի քնում, այլ աղի  
սենյակում ու իրար մեջ խռուելիս՝ այն կարծիքը հայտ-  
նեցին, թե իսմայիլ աղան վերջապես դատավ իր հար-  
մարը...

Յեկ այդ նրանց զարմանալի չթվաց :

---

## ԲԻՐՃԵՎԻԿԸ

Ծիփց և մեծ ինքնայեռի գոլորշուց անոսը մշուշ  
եր կանգնել սրճարանում: Լալում եյին գոմինոյի և  
յեռանդով զարկվող նարդու քարերի չխկչխկոցը, մեկ  
ել սուրճ ու թեյ խմող հաճախորդների աղմկալից խո-  
սակցությունը:

Սրճարանատեր թորոս աղան կեղտոտ սրբիչով  
սուրճի բաժակներն եր մաքրում շտապ, իսկ նրա թուխ,  
անթրաշ գեմքը միշտ դեպի դուռն եր, թե ո՞վ պիտի  
զա և քանի՞ հաճախորդ: Ահա դուռը բացվում է և նրա  
վեմքին խաղում մի ինքնապոհ ժպիտ, իսկույն դառ-  
նում է գեպի ներս մտնող ծանոթ հաճախորդը և մտեր-  
մորեն, խիստ մտերմորեն հարցնում:

— Բարով, Հայրապետ աղա, աս ո՞ւր ես, ջանըմ,  
վաղուց ե, վոր չես յերեկիր, գործերդ ի՞նչպես են, ա-  
ջո՞ղ կերթան, ինտո՞ր ես:

— Ե՛ս, թորոս աղա, ել մի Հարցնի, յերեկ ուժ  
տարեկան միակ մանչս գերեզման դըի, — պատասխա-  
նում և Հայրապետ աղան մտախոհ ու տիսուր:

— Զանըդ սաղ ըլլա, աղա՛ս, մեր ճամբան ալ տո  
չե՞, կնոջդ նո՞ր մանչ մալ ապսպը դալ տարվան հա-  
մար, ել ինչ գարդ կընես, նստիր սուրճ մը խմե, սիր-  
ութ հովանա թող...

Թորոս աղան ծաղկանկար փոքրիկ ափսեյով թուրքական սուրճ և մի բաժակ ջուր զրեց Հայրապետ աղի սեղանին։ Հայրապետ աղան՝ կարճոյ, վառվոռուն աչքերով, շրթունքներին մի մատ բեխ վաճառականը՝ ոկսեց սուրճ խմել Փռոացնելով և թշերն ուսեցնելով։

Թորոս աղան ամենքի հետ լավ եր, բոլորին քաղցր, վաղաքական խոսքեր եր շայլում։ Հաճախորդների նախասիրությունները լավ ճանաչելով, յուրաքանչյուրին առաջարկում եր Հաճապատախան ծառայությունը։

«Հայրապետ աղան սուրճ շատ կսիրե, ինգնատիու աղան նարդի խաղալ, Հաջի Ակորը գոմինայի համար հոգի կուտա», — մտմտում եր Թորոս աղան՝ կանգնելով բուֆետի լայն, մարմարապատ սեղանի մոտ։ Միջահասակ եր, նիհար, ուսերն անհամաշափ, աջուսը՝ խոռվելով չպիտես ինչից՝ ավելի յեր բարձրացել, մարմնի ծանրությունը հրելով դետի ձախ։ Պըսպըսուն սյուրոտուկի կլոր փեշերը շարունակ յետ ու յետ եյին մղվում, վարի վրա ցուցադրելով վոսկյահաստ շղթան։ Սպիտակ գծերով նախշած սե շարվարը տարիներով համատարմորեն ծառայել եր նրան և դեռ յերկար, շատ յերկար պիտի ծառայեր։ Գանգի վրա մացառի պես բարձրանում եյին մաղերի ցից փնջեր, մէջտեղը թողնելով մի փոքրիկ, լերկ բացատ։

Տասը տարուց ավելի կլիներ, վոր Թորոս աղան Պոլից գալով, կրտսեր յեղբայր Կարապետի հետ հիմնել եր այդ սրճարանը քաղաքի կենտրոնում։

Պատերազմի ժամանակ, բացի սովորական առեւտրից, ավելացել եր մի ուրիշ, ընդհատակյա առեւ-

տուր, դրամափոխություն, վորից բավական ողավում եր Թորոս աղան։ Եկրս եր մտնում լավ հագնված մի մակեր կամ հնաբմաշ շորերով, խորամանկ աչքերով մի հույն, փափսում ինչ վոր նրա ականջին։

— Իսկ ինձի՞՝ ինձի մաս կհասնի՞՝ կուտ մը, — չշնչում եր Թորոս աղան աչքերը կիսախուփ, ինչպես վորսի սպասող դապան, — ամեն մի վոսկուն տաս կոպեկ, շատ չե, խորհ ունեցեք, յես ալ խեղճ եմ, սպարտքով կտապիմ . . .

Դրամ վոխողները նստում եյին սրճարանի մի անկյունը, զգուշությամբ վախում և յեղրակացության հանգելով, անցնում բուֆետի յետեկ ներքնասենյակը, Թորոս աղի կացարանը։ Այնուեղ զրնգում եր ոռւսական վոսկին, վոխում թղթապղբամի կամ արտասահմանյան վալյուտայի։ Թորոս աղան ամեն մի գործառքին ուշադիր հսկում եր ու իր բաժին կուտը ճանկում։

Յեկ սուրճ խմելու կամ նարդիլե ծխելու անխանտակ՝ սրճարանում տարվում եր գլամի աշխույժ առեւտուր։

«Ի՞նչ ընեմ հապա, — ասում եր Թորոս աղան մոտիկ ծանրթներին, — սուրճ վաճառելով միայն տունը չուահվիր, աս ալ ե պետք, թե չե շատ դժվար ե, աղբարս, դժվար ե գլուխ պահելլ, չալըշան աղամա հեր իշ բիր (աշխատող մարդուն ամեն գործ մեկ ե) . . .

Քաջասունն անց մարդ եր, բայց տակալին ամուսնության մասին չեր մտածում Թորոս աղան։

— Ի՞նչպես պսակվեմ, աղբարս, չոր գլուխս կրցապահել, կնիկ ալ բերի՞մ, ո՞վ դիտե ինչ կնիկ . . .

Աղա սկսում եր ժամանակների մասին խոսել։ Երահամբար ժամանակներն ել դժվար եյին, յեթե քա-

Ղաքում մարդ սպանվեր, գողություն լիներ կամ ա-  
մուսնալուծություն, թորոս ազան հայտարարում եր  
իսկույն.

«Այսոր գողության դեպք պատահեց, Մարտիրոս  
աղայի կինն ամուսնուն էքց, հեռացավ, ա՛խ, ի՞նչ  
վատ ժամանակներ կապրինք»...

«Միրիջան աղան ուշիր կինը սիրով կապրին, թո-  
ժառ բիծայի կինն ուրիշն չի՝ սիրեր, Շաքարյանն իր  
կինը չթողուց, վասնի շարունակ դալմաղալ կըներ  
տանը, ասոր-անոր հետ լեզվակալի կրոնվեր... ալ ին-  
տո՞ր պակվիմ, հե՞, ասանկ թարս ժամանակ կարելի՝  
յե ամուսնանալ»:

Կրոսեր յեղբայր կարսութև խեղճ մարդ եր, սուս  
ու փուս, աշխատանքի մեջ խրված, թեկերը քշտած,  
ժոխարտույն գոգնոցով, շարունակ սուրճ, թեյ կամ  
շաքարյաց պատրաստելով եր զրազվում: Մեծ յեղ-  
տորն այնպես եր լսում, ինչպես զինվորը հրամանա-  
կարգադրողը, զասավորողը, առ ու ծախս անողը:

Պատահում եր, յերեմն, յերը լվացարուհի  
ուս կինը գալիս եր չորեկը տանելու կամ լվացածնե-  
հետ, կոտրաված ուսւերենով բացարություններ տա-  
լիս: Նրա կոչկոռված, ալիքապատ դեմքը, վոր շատ  
ուի, զվարթանում եր, պայծառանում, մարմնովն անց-  
նում մի հաճելի դող, մի պահ ալրոտ, խմորոտ ձեռ-

Բայց այդպիսի պահերին լավում եր թորոս աղի  
խոպոտ ձայնը.

— Կարապե՛տ, կնիկով ևս զբաղվա՞ծ, կնի՞կ դառ-  
նալ կուզես, հերի՛ֆ, ամոթ չե՞, կուզես ուրիշներու  
ըերնի ծամո՞ն դասնալ:

Կարապետն խկույն լսում եր, դեմքն ամոթից  
կարմրում, ձեռները կրկին թաթախվում եյին ալբաջըի  
մեջ ու նորից կպչում առորյա աշխատանքին:

Վորքան թղթադրսմն ընկնում եր, այսքան դրամի  
ընդհատակյա առետուրն ավելի սաստկանում, շահա-  
վետ եր գատնում: Մարդիկ հարստանում կամ սնան-  
կանում եյին հանկարծակի, ու թորոս աղան ականա-  
տես եր այդ վերելքին կամ վայրեկքին:

«Այս ինչ մարզը խիստ վիճակից թղթադրսմը պա-  
հելով, այս ինչն ոդտվեց»:

Ահա հաճախորդների խոստկցության սովորական  
նյութը, ու սրճարանի կիսալույսում՝ գլուխներն իրա-  
րու կուցած, լայնապիշ կամ կիսախուփ աչքերով՝  
փափառմ եյին: Մեկի դեմքը ճառագալթում եր դրամի  
առետրից լսով ողովելու համար, մյուսը նստել մտա-  
խոհ, շարունակ վշշում եր ու հառաջում, վոր լավ  
հոտառություն կամ ձկունություն չի ունեցել:

Բայց թորոս աղի, ինչպես նաև հաճախորդների  
աստղն սկսեց թեքվել: Քաղաքական դեպքերը փոփոխ-  
վում եյին զլիսալույս: Ուսու զորքն արագորեն նա-  
հանջում եր Անդրկավակասից: Լուր արածվեց, թե  
թուրքերը գալիս են: Հաճախորդների մեջ վրկոց ըն-  
կալ: Նրանց դեմքերին սարսափ եր իջել մահվան  
ստվերի պես: Հայրապետ աղան այնպես եր զողո-  
զում, վոր կարծես զաշույնի սուր ծայրին եր նստել:  
Իսկ Մարտիրոս աղան զլուխը կորցրած՝ փախչելու  
մասին եր հոգում:

Թորոս աղան պահարանից հանեց Պոլսից բերած դեղին կոճակներով բաճկոնակն ու ֆեսը:

— Կհաղնեմ սա բաճկոնակը, Փեսը փառավորապես կծածկեմ գլխիս, կիանդնեմ սրճարանիս դռանը և կըսեմ. «Բարով», հաղար բարով յեկաք, աչքիս-ունքիս վրա տեղ ունեք, սուրճ կուղքը անուշ անել, յիս սուլթանի ամենախոնարհ ծառան եմ:

«Ոսմանի եմ ման, Ոսմանի» (սամանցի յեմ, սամանցի) ...

Սակայն թուրքերը չմտան թիֆլիս և աղքարնակ-հաճախորդները նորից սկսեցին ավելանալ, ու վորքան չառ սուրճ ծախվեր և դրամի առկտուրն աշխուժանար, թորոս աղի տրամադրությունն այնքան կբարձրանար:

— Աշխարքս սկսեց խաղաղվել, աղբարս, ինչաղւահ լավ կըլլա...

Մի անդամ նրա մոտ յեկան յերկարածիթ կոչիկ-ներով յերկու յերիտասարդ և դրամ պահանջեցին ճա-կառում կովող հայ կամավորների համար:

— Աղբարս, ամոթ չըլլա հարցնել, դուքսովքե՞ր եք,

— Հարցրեց թորոս աղան խլստ մտահոդ:

— Մենք Դաշնակցության կողմից ենք, — հարս-րարեցին յերիտասարդները հաղարս և վճռական չեց-

— Ախըր յես ալ դաշնակցական եմ, ինչո՞ւ ահ-հանդսություն կպատճառեք:

— Ճակատ կղնա՞ք աղդի համար կովելու:

— Վոչ, աղջարս, թեև աղդը չատ կսիրեմ ու կը-պաշտեմ, բայց հրացան գործածել չգիտեմ:

— Թիկունքային աշխատանքներ կարո՞ղ եք կա-տարել:

— Այս տեսակ բաներ ալ չեմ կրնար ընել:

— Ուրեմն գրամ պետք է տաք:

— Դրամ չունեմ, աղբարս, ալիշվերիչ կա՞ , վոր գրամ ունենամ:

Սակայն յերիտասարդներն սպառնացին, և թորոս աղան, ահարեկ, մի պահ տատանալեց, ծանր գործի լծված մարդու նման գլուխը քորեց, ժիլետի զրացնից դողդողալով և բազմից յերկմտալով յերկու վոսկի հանեց ու վճարելով ճամբու գրամ: Ազա ճեռներով կո-ծեց ծնկները, արտասուքն աչքերին սարսափահար կանչեց.

— Ունեցածս վերջին սև վարան տարան, տարա՞ն, վա՞յ աման ...

— Վա՞յ աման, տարա՞ն ... կրկնեց կովի աչքերով նայող կարապետը, վորի դեմքն արտահայտում եր սարսափ ու ահարեկում:

Մի ուրիշ անդամ սրճարան մտան մի քանի վրացի պաշտոնյա, վրացերեն եյին խոսում և սպառնում բիւտ ճայներով:

— Աղբարս, աս մարդիկ ո՞վքեր են, լեզունից չեմ հասկնար:

Թորոս աղի աղաչական գիմումին լեզու իմացող մի հաճախորդ արձագանքեց և թարդմանեց պաշտօ-նյաների խոսքերը:

— Սրանք ուսլրավայից են, թորոս աղա :

— Մի խմացեք, ի սեր աստծո, ինչ կուզեն ինձմեն,  
ինչ կհրամայեն, վոր դառնամ:

— Սրանք մենչեւիկներ են, տուրք են պահանջում:

— Յես ալ մենչեւիկ եմ, մենչեւիկ, աստծու սիրուն,  
բայք իրենց:

Պաշտոնյաները ծիծաղեցին, գրեցին ինչ վոր  
թօռղթ, ալին թորոս աղին և մեկնեցին: Թղթում մատ-  
նանշված եր, վոր այսքան որվա ընթացքում յերկու  
հարյուր ոռութիւն վուկով պետք է վճարել քաղաքապե-  
տարանին:

Թորոս աղան գլուխը բոնեց և վողնու պես կոլու-  
վելով սասց.

— Զըսի՞ք իրենց, վոր փարտ մը չունիմ, փորտ  
մը, վոր յես ալ իրենցմեն յեմ, մենչեւիկ, չըսի՞ք հա-  
սւա . . .

Նոյնպիսի հուսահատական շարժումներ դորձեց  
և վախուկ ճիչեր արձակեց նաև Կարապետը, վոր մէծ  
յեղոր յետեր կանդնած նրա խրովիլակն եր թվում:

Այսուհետեւ հաճախակի դարձավ կառավարության  
հետապնդում. մի որ սրճարանն ուշ փակելու համար  
տուգանք, մյուս որը սրճարանի վարձը ժամանակին  
շվճարելու: Վերջապես ամեն որ թորոս աղան ահա-  
րկում եր, վախից գեմքն ավելի ու ավելի յեր ակռա-  
վում, խորշոմներով ծածկվում:

— Աղքար, աս ի՞նչ տեսակ յերկիր է, չեն թողուր,  
վոր մարդ հանդիստ ալիշվերից ընե, դրամ աշխատե . . .

Կառավարությունը կարգադրեց յեկլորներին հե-  
ռահանալ թիֆլիսից: Թորոս աղան, վորպես պոլուցի,  
հրաման ստացավ մեկնելու և հուսարեկ՝ Կարապետի

Հետ ոկտեց պատրաստվել ճամբա ընկնելու գեղի Պո-  
լիս: Սրճարանի կահ-կարասիքը հավաքում եր վաճա-  
ռելու համար և իր ծանոթներին դառնորեն գանդաս-  
վում.

— Գործերնիս թարս զնաց, պատառ մը հաց եցինք  
աշխատում, այն ալ հարամ ըրին:

Բայց շուառվ քաղաքում իրարանցում ընկառլ, ծա-  
նոթները հայտնեցին, վոր թորոս աղան հանդիստ մնա,  
նոր իշխանություն և գալիս:

— Ո՞վքեր են եդ յեկողները, դրամ, առեսուր սի-  
րող մարդի՞կ են, — հետաքրքրվեց նա:

— Դրանք բոլշևիկներ են, կարմիրներ, — պա-  
տասխանեցին ծանոթները:

— Կարմի՞ր, — բացականչեց թորոս աղան աչքերը  
հոռթելով, զարմացյած, — ըսել կուզեք կարմիր գույնն  
ալելի՞ կսիրեն կամ գուցե պետք է կարմի՞ր հազնվել,  
առ մարդոց տչքին աղեկ յերենալու համար: Պոլս  
մեջն ալ այգպես է, ֆես կգործածեն, վոր տաճիկներու  
աչքին լավ յերենան . . .

Աակայն վոչ վոք իր ծանոթներից չկարողացավ  
ճշորին բացատրել, թե ո՞վքեր եյն յեկողները:

Մի առավոտ թորոս աղան նկատեց, թե ինչպես  
ժողովուրդը փողոցն է թափվել և շատերի գեմքին ու-  
րախ ժպիտ կա, նոյնիսկ իրենց բլացարարուհին գըլ-  
խին կարմիր ժապավեն կապած, կանգնել ե մայթին ու  
ժպում է:

Թորոս աղան թրքական Փեսը դրեց գլխին  
և դուրս գալով փողոց՝ կանգնեց սրճարանի դռանը.  
առաջ չդնաց, վոր ով գիտե, չմինի մի վատ բան պատա-

Հի : Նրա յետեւ կարապետն եր կանդնել, մոխրավուն  
գողնցոցվ, գեմքին և զլիի մաղերին այրափոչի, շա-  
պիկի թեհերը քշտած :

Ահա շարք առ շարք անցան կարմիր բանակալին-  
ները կարմիր գրոշներով, հախուսն, գնձագին յերգե-  
րով : Նրանցից մի քանիսը նայեցին ֆեսով կանգնած  
մարդուն, վորի թուխ, խորշումած գեմքը՝ ֆեսի կար-  
մրավուն ֆոնի տակ՝ խորհրդավոր արտահայտություն-  
եր ստացել : Կարմիր բանակայինները նայում եյին,  
ծիծաղում և արագորեն անցնում :

Թորոս աղան շատ գոհ մնաց, վոր կարողացավ  
աչքի զարնվել, նույնիսկ զվարճություն պատճառել,  
և յերբ կարապետի հետ վերագրածավ սրճարան, ձեռ-  
ներն իրար շփելով ուրախաճայն կանչեց .

— Նալաթ չար սատանին, գործերնիս աջող կեր-  
թա, յալլա՛հ յալլա՛հ...

— Յալլա՛հ, յալլա՛հ, — խոպոտ ձայնով արձա-  
գանքեց կարապետը և սկսեց կապոցները քանդել ու  
սրճարանը կարգի բերել նորից :

Մի քանի որ հաճախորդ համարյա թե չունեցայ-  
թորոս աղան, թթվեց, ձեռները կցեց իրար, գեմքին  
նկարեց տիրություն և անդործ կանգնած բուժետի  
մոտ փնթինթաց .

— Աղբար, աս կարմիրներն ալ ողուտ չոսիին, ա-  
լիշվերէ չկա, ինչ պիսի ըլլա, չգիտեմ . . .  
շետպհետե հաճախորդները հավաքվեցին և սրճա-  
րանում կրկն տիրեց ծուփ ու աղմուկ : Նարդու և գո-  
չխկալ :

Ուրոնն աղան աշխատժացնվ, վոգեռորդից և ուրախ  
թպիտով վողջունելով հաճախորդներին, ասաց .

— Աղբար, աս կարմիրներ ըսածդ լավ բաներ են  
յեղեր, խաղաղություն սիրող մաքդիկ են յեղեր, թող  
ասոված նրանց յերկար կյանք տա :

— Հե վերջը նայինք, թորոս ացա, հե շուտ և  
նրանց մասին կարծիք հայտնել, — հայտարարեց Մար-  
տիրոս աղան :

— Վերջը վո՞րն ե, ջանը՛մ, մարդիկ հեջ բան մը  
չեն ըսեր, ամեն մարդ իր առետուրին ե :

Ահ բիրժալի կյանքը վերսկսվեց նոր թափուլ : Սըր-  
ճարանում վոգեռորություն ընկավ : Մարդիկ շտապ-  
շտապ ներս ու զուբս եյին անում անութների տակ  
թղթադրամների մեծ ու փոքր կապոցներ : Սեղանների  
վրա հաճախ բյահում եյին բոների կույտեր, վորոնք  
հաշվում եյին և լցվում սրանրա գբականը : Որեցոր,  
ժամեժամ զները փոփոխվում եյին : Թորոս աղան թէ  
իր փայտաժինն եր ստանում յուրաքանչյուր գոր-  
ծառքից և թե ինքն եր մասնակցում առետուրին : Նա  
ամենից շատ վոսկի յեր սիրում և նրա կայունությանը  
հայտառում :

— Բնձի վոսկի տլեք, — ասում եր, — մհացած-  
ները հե՛չ :

Ենք բերած վսակիները պահում եր կրպանում,  
և յերբ կարապետը վորեւ գործով գնում եր շուկա կամ  
ուրիշ տեղ, մտնում եր ներքնասենյակը և իրեն միայն  
հայտնի գաղտնաբանում թագյնելով, մտմտում .

«Թող կարապետը չիմանա, թոչունի խելք ունի,  
ով գիտե ինչեր կարող են պատահել . վերջապես յես  
չե՞մ վաստակած գրամները չե՞ն» :

Տեսնում եր, թե ինչպես չայլապես աղան և ուշ  
րիշները բոները վայրուտայի և վայրուտան բոների  
վերածելով բավական զբամ են վասնակում։ Նըս ու-  
ղեղում ցցվեց մի համառ միտք, հախուռն կերպով  
փորձել բախտը, թե չի՝ «կուտը կուտի վրա ավելցնե-  
լով բան դուրս չի գտ, բախտերնիս միանգամեն փոր-  
ձել ե պետք...», մտածում եր Թորոս աղան յեւան-  
դուն կերպով խառնվելով գրամափոխության գործառ-  
քին։

Ժամ առ ժամ փոփոխվող դրամի կուրսը զարձրել  
եր նրան ջղային, անհամբեր։ Հաճախորդներին սուրբ  
մատուցանելը մոռացել եր, թողել կարապետին, իսկ  
ինքը ման եր գալիս սեղանների շուրջը, թղթադրամ  
եր հավաքում ու հանձնում։ Հաց ուտելը նույնիսկ մո-  
ռացել եր, ժամերով քաղց չեր զգում։ Միտքը լարված  
մեքենայի պես աշխատում եր, հաշվում, միլիոններ  
թվում։ Շարունակ խորհրդակցում եր միջնորդների  
(մակեր) հետ։ Յերբ ծանոթ մակերը սրճարանն եր  
մտնում, Թորոս աղան անմիջապես մոտենում եր նր-  
ան։

— Աղքարս, ըստ տեսնեմ դուրսը դեղինը (վոսկին)  
վո՞րքան արժե, կիշեա՞ս, թէ՞ կրարձրանա։ Բո՞ւ, կա-  
զաքեմ։

— Հըմ, յերեկի շատ վոսկի ունես, Թորոս աղա,  
յերբ այլքան անհանգստանում ես, — հարցնում եյին  
կատակով մակերները։

— Աղքարս, հեք վոչիլ մալ չունիմ, լոկ ինթերեսի  
(հետաքրքրության) համար կհարցնեմ, ուրիշ վոչին։

Սակայն մակլերների սուր աչքերից չեր վրիպուտէ  
նրա հոգու ալեկոծությունը, ծանր ապրումները, մտա-  
հողությունը՝ յերբ վոսկին ընկնում եր, և ուրախու-  
թյունը, յերբ բարձրանում, կամ ընդհակառակը։ Յեվ  
յերբ այս կամ այն լուրը նրա վրա ծանր ապավորու-  
թյուն եր գործում, նրան միսիթարում եյին, հույսեր  
տալիս։

— Այս բոլորը ժամանակավոր բաներ են, Թորոս  
աղա, չուտով, շատ չուտով լավ կլինի։

«Վաղը տեսնենք, վաղն արդյոք ինչ կըլլա...,  
մտմտում եր ինքն իբրեն Թորոս աղան և զիշերներն ան-  
քուն չըջմովիկի պես վեր եր կենում անկողնից, հաղ-  
նում Պոլսից բերան ենթերին, չըջում եր սրճարանում,  
մեծ ապահուց գիտում փողոցը, ուր թագավորում եր  
լուռթյունը, վոր յերբեմն-յերբեմն խղվում եր անց-  
նող կառքի անխիշների գղրդյունից կամ չըջող գիշերա-  
պահների սույլերից։ Կանգնում եր դատարկ սեղան-  
ների մոտ, ընկնում խոր մաքերի ծովը, միլիոնների  
հասնող թղթադրամները հաշվում կամ վոսկիները,  
վորոնց գեղին, հրեզեն վայլը հուրհուրատում, եր  
մութի մեջ և խտում, չըցնում աչքերը։

Ապա պատկերվում եյին վոսկու չեղեր և հարո-  
տանալու անհուն ծարավը նրան վոգերում եր, գեմ-  
քին իջնում բերկրալից ժպիտ, բերանից թոշում եյին  
անմեկնելի ըրչյուններ։ Հետո նորից անհետանում եր  
ժպիտը, թթվում գեմքը, մարմինն ի վեր սողոսկում  
մի ցուրտ սարսուռ, շրթունքները դողդողում եյին և  
հյուսում հառաջանքի խոպոտ ձայներ։ Այդ ձայներից,  
յերեմն, յեղբայրը զարթնում եր։

«ի՞նչի՞ համար և մտածում՝ արդյոք ավրաբս, խեղճաղբարս...» — մտածում եր ինքն իրեն կարապետրել նորից ընկղմում խոր քնի մեջ:

Յերեկները սրճարանում թորոս աղան մեքենայար եր շարժվում: Յերեմն սուրճի փոխարեն թեյ կամ գոմինո յեր տալիս հաճախողդներին, վորոնք զարմանում եյին և նույնիսկ նեղանում այդպիսի աչք ծակող անուշադրության համար:

— Մի նեղանար, աղաս, — արդարանում եր թորոս աղան ընկնված ձայնով, — ժամանակները սաստիկ գեցցեր են, նալոգները շատցեր, առուտուր չկա, գործերնիս թարս կերթան, ասանկ ժամանակ մարդուն ներքը գլխուն կմնա:

Մի յերեկո սրճարան յեկան Զեկայի գործակալները և մանրամասն խուզարկեցին: Հաճախորդներից շատերն իրենց մոտ յեղած արժեթղթերը կամ վոսկին սպահեցին սեղանների տակ նախապես պատրաստված հատուկ ծածկարաններում: Հայրապետ աղան թաշկինակի մեջ փաթաթած մի քանի վոսկին ճարպիկուրեն սպահելով, առողջուն դեմք ընդունեց և սկսեց թղթատել մի հին լրագիր, իրեն թե ընթերցանությամբ ե զբաղված: Խուզարկության զոհ դնացին միայն յերկու-յերեք նորեկներ, վորոնք տարկալին անփորձ լինելով, սրճարանի գաղտնիքներին ծանոթ չեյին:

Թորոս աղան սարսափից քիչ մնաց սառել՝ մնար տեղն ու տեղը...

Այնուհետև սկսիկ չափաղանց խիստ հայածանք աև բիրժայի և առհասարակ դրամի առևտուրով զբաղ-

վողների դեմ: Այդ գրությունն ավելի ազգեց չուկայի վրա և այլ ևս արժեթուղթ ճարելը չափաղանց դժվարացավ:

Ծանոթ մակլերներից վոմանք ծուղակն եյին ընկել: Մյուսները նստել եյին տուն և դռւրս չեյին գալիս: Յեվ յերը պատահաբար մի ծանոթ մակլերը ուրածարանն եր մտնում, թորոս աղան իրկույն բանում եր նրան, ներքնասենյակը տանում և ականջին կամացուկ չննջում.

— Վոսկի չունի՞ս, աղջարս, ուրիշ մը շատ խընդրեց, պետք ե տամ, մարդկային պարտականություն մը...

Մակլերը գլուխը թոթափում եր և ծիծաղում:

— Ի՞նչ վոսկի, թորոս աղա, ճրագով ման գաս, չի ճարպում:

— Ա՛, ա՛... կանչում եր թորոս աղան և ձեռներով գլուխը բռնում:

Մակլերները հետաքրքրվում եյին, թե ինչո՞ւ թորոս աղան այդքան մտահոգված ե:

— Վոչինչ, ջանրմ, ուրիշներու դերդն եմ, մտահոգությունն անոր համար ալ ե, վոր լավ ժամանակներն անցան, յերկու-յերեք նորեկներ, վորոնք տարկալին անփորձ լինելով, սրճարանի գաղտնիքներին ծանոթ չեյին:

Վատ կերակրվելուց և անհանգիստ մնալուց նիշարել եր, գունատվել. անջուր մնացած ծառի պես կծկվում, չորանում եր: Ծանոթները զարմանքով տեսնում եյին նըս դեմքի փոփոխությունը:

— Դեմքդ ինչի՞ յե նման, թորոս աղա, այդքան եւ նիշարե՞ն, արդյոք հիվանդ չէ՞ս:

Թողոսս աղան պատասխանի փոխարեն հառաջում  
եր և վորմե բան պատրիակելով փակում խոսակցու-  
թյունը :

Յեղավ ժամանակ, յերբ վոսկին իսկե չճարվեց,  
իսկ մակերները շատ հազվադյում ելին յերեում :

— Աս ու՞ր եք, աղբար, բարի լուր մը չկա՞,  
հարցնում եր թողոսս աղան, յերբ պատահմամբ յերեում  
եր նրանցից մեկն ու մեկը :

— Զեկան հետեւում ե, Զեկա՞ն...  
— Ա՛խ, Զեկա՞ն, Զեկա՞ն...

Մըմում եր թողոսս աղան հուսահատորեն շարժե-  
լով դլուխը :

Մի առավոտ վաղ կանգնել եր սրճարանի մեջտեղը,  
ուրիշականի պես, հայելու մեջ դիտում, թե ինչպես քի-  
րել, վոսկացած, կեռ քիթն անհամաշափորեն յերկա-  
սեկ, ցցվել ե դեմքին, այսուկըները ներս են ընկել,  
քնությունից ուռած աչքերին, վորոնց մեջ քարացել եր  
դեղնավուն մի ցոլք: Կանգնել եր արձանի պես և մտա-  
ծում :

Կարապետը քլթքլթացող ինքնայեռը դրեց սեղա-  
նին, աթուները կարգի բերեց և յեղբոր կողքից շատ  
զգույշ անցնելով՝ սկսեց սեղանները մաքրել:

Ահա մեկ-մեկ ներս մտան հաճախորդները: Հայ-  
րապետ աղան թեղրիչը ձեռքին, կոկորդի գեղձերը  
թողոսս աղան հեռացավ հայելու մոտից և դնաց ներք-  
նասենյակը լվացվելու:

Շուտով սրճարանը կիսով չափ լցվեց, սկսվեց աշ-  
խուժ խոսակցություն, նարգիլեյի զլզուց և գոմինոյի  
ու նարդու չխչխկոց :

Ներս մտավ լրագիրը ձեռքին մի ծանոթ մակեր  
և բարձրաձայն հայտարարեց :

— Այսորվա լրագիրը կարդացի՞ք, լոեցի՞ք նո-  
րությունը :

Վոչ վոք դեռ այնորվա լրագիրը չեր կարդացել,  
իսկ թողոսս աղան իսկի չեր կարդում: Սրճարանում  
տիրեց լուսթյուն: Թողոսս աղան ներքնասենյակից  
դուրս յեկավ, սրբիչն ուսերին գցած, վոսկոր քիթը  
յերկարեց և սպասեց.

— Հրաման կա, վոր բոները վերանում են և նրանց  
փոխարեն նոր թղթաղբամ ե գործի դրվում:

Թողոսս աղան ձեռքն ակամա կրծքին տարավ, հեն-  
մեց բուֆետին, աչքերին տիրեց մուժ ու մասախուզ:

— Ուրեմն, այլ ևս բոները վոչ մի արժեք չունե՞ն.  
— Հարցրեց հաճախորդներից մեկը:

— Վոչ մի արժեք, կարելի յե գործածել միայն  
վորպես հառարակ թուղթ, — պատասխանեց մակերը  
վճռական շեշտով:

— Ա՛, ա՞...

Լավեց մի խուլ խոխոց և մեկն ամբողջ մարմնով  
սեղմվեց բուֆետի պահարանին:

— Ինձ մոտ առակին յերկու-յերեք վոսկու բոն  
կա, — ասաց Մարտիրոս աղան տիրագեմ:

— Իսկ յես մի հատ բոն չունեմ, մի հատ, — բա-  
ցականչեց ուրախ-ուրախ հայրապետ աղան և ուզում  
եր ելի մի քանի զլարթ հայտարարություններ անել,

բայց հանդիսէց իրեն հառած յերկու խոչոր, լայնա-  
պիշ աչքերի, վորոնք շատ նման է յին սպանդանոց տար-  
վող կենդանու աչքերին: Առա այդ աչքերն իջան, հա-  
վասարվեցին բուֆետի սեղանին, հետո ավելի ներքի-  
իջան, և այն մարդը, վոր քիչ առաջ հենվել եր պահա-  
ռանին, այլ ես չեր յետեռում:

Հայրապետ աղան վազեց վեպի վար իջնող աչքե-  
սր և հանգիստեց թորոս աղին չողած սպահարանի և սե-  
ղանի միջև, աչքերը չուած, դեմքը գունատ, մեռելո-  
տում էր, մկանները զողդողում էյին լարերի պես, բերանը  
բոզոց:

— Թորոս աղա, այդ ի՞նչ պատահեց, թորոս ա-  
ղա...

Արաթաթախ ձեռներով կարապետը վազեց և ա-  
պուշ կարած աչքերով սկսեց նայել: Հաճախորդները  
չը լապատեցին թորոս աղային, սիրտ տվին, ոգնեցին  
վեր կենալ, ջուր ցանեցին ճակատին, քունքերին, ի-  
դուր: Ինչպես աշնան սառցահար տերև թալկացել եր  
թորոս աղան, զողդողում, կոտրովում: Նրան բարձ-  
րացրին մի քանի հոգով, տարան ներքնասենյակը և  
օդեցին ճոճուան թախտին: Ուղարկեցին բժշկի յետից,  
բայց տակալին բժիշկը չեկած, թորոս աղան վախ-  
ճանմեց առանց խոռքի ու ծպառնի:

— Ի՞նչո՞ւ այդպես յեղալ, — հարցնում էյին իրար  
հաճախորդները:

— Յերեկի շատ բոն ուներ... հայտարարեց Հայ-  
րապետ աղան իր փոքրիկ, սոսողուն աչքերն ել ավելի  
փոքրացնելով:

Մակայն վոչ վոք չկարողացավ ձշտորեն բացատրել  
այդ անհակնելալ մահվան պատճառը: Բժիշկը քննեց և  
հայտնեց, վոր սրտի պայթյունից ե: Մինչ Կարապետը  
դառնորեն հեկեկալով, ձեռների խմորները մաքրելով  
հավաստիացնում եր, վոր իր հանգուցյալ յեղբայրը  
սրտի հիվանդություն յերբեք չի ունեցել և այդ մասին  
գործե դժգոհություն չի հայտնել:

Մի ամսից հետո Կարապետն սկսեց դատարկել  
որձարանը, վորովհետեւ այնտեղ պիտի հիմնեյին բան-  
վորական № ... կոռուպերատիվը: Յերբ բեռնակիրները  
ներքնասենյակի պահարանը չարժեցին, ներքել, տախ-  
ականիածի վրա մի բացվածք յերեաց, վորտեղ պահ-  
ված եր մի մեծ պարկ լիքը վրացական բոնիրով:

Կարապետը զլուտիր շարժեց և աչքերը ճոռթած՝  
սկսեց քրքրել միլիարդների հասնող բոները...

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՐՍԱՅՑՈՒՄ

Անդուրծների մի յերկար հերթ բոլորին եր տախունակյա միջնորմի մոտ : Յեկել ելին վերացուցակադրվելու կամ ուղում ելին սոսուգել ; թէ, արդյոք, մի վորեւ տեղից աշխատավոր ձեռքի պահանջ չկա՞ :

Միջնորմից այն կողմը, կարմիր սովարաթղթով ծածկված զբասեղանի մոտ նստել եր ցուցակադրողունին, կապույտ շրջազգեստով մի նիհար աղջկ, դրում եր ու խաժ աչքերը; վորոնց մեջ նստել եր մի լուրջ, խոհուն միտք, մերթ ընդ մերթ հառում սպասողներին, զանազան հարցեր տալիս: Վոմանց հարցաթերթ եր հանձնում, վոր պատասխանեն, կամ գրքույիներն եր ստուգում ու ստորագրում, վոմանց ել — ամենահին ցուցակադրվողներին — մի վոքրիկ տամսակով ուղարկում եր այն հիմնարկություն կամ զործարան, վորեղից աշխատավորի պահանջ կար :

Յեկ հերթ կանգնողներից ամեն մեկն անհամբեր սովառում եր, թէ վերջապես յե՞րբ և վո՞րտեղ պիտի ստանա վորեւ զործ: Նրանց մեջ կային տարրեր խովի և տարիքի մարդիկ, վոմանք մաշված, խունացած շորերով, և այնպիսիները, վորոնց սկսպում կոչիկները, պուղըայած յերեսներն ու ներկած ըթունքները ցույց ելին տալիս, վոր այնքան ել վատ որի չեն...

Ցուցակադրողունին ինեւ ամենքի հետ միատեսակ եր վարդում, բայց սոսանձին ուշադրությամբ մտուդում եր նրանց սոցիալական դրությունը:

Հերթը կամաց-կամաց փոքրացավ: Ամենավերջինը — միջահասակ, քառասունն անց մի կին, լայնեղք դիմարկով, ցուցակադրողուն ուշադրությունը դրավեց. վերջինս մի համառ հայացք ձգեց նրան և դրիչը մտաների արանքում վոլորելով մտմտաց:

«Մի՞թե չճանաչեց ինձ»...

Խնդրատուն, սակայն, խսկալես չճանաչեց, գոնեայդպին ելին ցույց տալիս նրա դեմքի մոայլ գեհըր, խոկ ամոթից խոնարհված աչքերը մատնում ելին; Վոր իրենց տիրոջը խիստ անհաճո յե կանգնել այդ անծանթ վայրը:

Ցուցակադրողունին սկսեց զանազան հարցեր տալ: Պարզվեց, վոր խնդրատու կինը անդորձ և, վատ պայմաններում, տաշջին անդամն և ցուցակադրվում Աշխատանքի բորսայում, խնդրում և մի վորեւ աշխատանք, ատանձին մասնագիտություն չունի: Խոկ այն հարցին, թէ սոցիալական ի՞նչ դրության մեջ և գտնվել անցյալում, խնդրատուն յերկմահց, չկարողացավ անմիջապես պատասխանել:

— Յես կդրեմ, վոր գուք հարուստ կալվածատեր Եւխանի կին եք յեղել, համաձայն չե՞ք, — սասաց ցուցակադրողունին ու շեշտակի նայեց խնդրատուի ըլվոթված դեմքին:

— Յես... յես... մի՞թե ճանաչում եք ինձ, — կմկմաց խնդրատուն զարմացած և վախեցած, վոր իրեն ճանաչում ենք և այդ կարող եք բաշասական ազդե-

յություն ունենալ գործի աջողության համար (վորով-չետե առաջին հերթին աշխատանք տրվում եր աշխատավորական ծագում և անցյալ ունեցողներին) :

— Հրմ, գուք կնյառ Անդրոնիկովի կին թամարա Նիկոլաևնան չե՞ք:

— Այս, — հետով և հաղիվ լսելի փսփսուկով պատասխանեց խեղբատում ու շարունակեց. — Բայց թե են ժամանակներն անցան, մեր բոլոր կարլածները վերցրին, մի քանի տարի յե, վոր տան ունեցած-չունեցածը, կահարասիքն եյինք ծախում ու սպառում, ամուսինս մահացավ, մնացել ենք յես ու պառավ տալս, խեղճ ենք, ուզում եմ աշխատանքի մտնել...

— Իսկ ի՞նչ զործ տանք ձեղ, — ասաց ցուցակադրողուհին մեղմ ձայնով. — Պաստերյակային աշխատանքներ չեք կարող, վորովչետե անփորձ եք, զործանայինը դժվար է և ծանր ձեղ համար, ամենահարմարը վորեւ հիմնարկության մեջ ծառայողներին թեյ ու նախաճաշիկ մատուցանելն է...

Թամարա Նիկոլաևնան զլուխն ավելի խոնարհեց, դեմքն ամբողջ ներկվեց կարմիրով: Նախկին այդ մեծահարուստ իշխանուհին, տասնյակ ձեռք զանազան ձեի ու ճաշակի թանգարժեք շորեր ուսեցող, կյանքը կեր ու խումբ, պարահանդեսների մեջ անցկացնող կինը՝ այսոր կանգնել է այսեղ, վիզը ծուռ, անողնական, ու պիտի դնա աշխատանքի, վոր կարողանա ասլուի, այն ել ինչ աշխատանք, այնպիսին, վոր աղախին-ներն են անում, լսված բան ե...

Բայց վորովից է ճանաչում իրեն այդ աղջիկը, արդյոք վորեւ տեղ չի՞ հանդիպել նրան. աչքերի տա-

կով մի պահ նայեց ուշադրությամբ, մի բան, վոր գեռ չեր արել: Դիտեց այդ նիհար աղջկա հանդարս դեմքը, պարանոցի փոքրիկ, կարմիր խալը, և ո՞վ զարմանք ու սարսափ, ո՞վ լինի այդ աղջկը. — Եր ու իր նախկին աղախինը, Նինա՛ն.

— Հը՞ , ճանաչեցի՞ք վերջապես, յես Նինան եմ, ձեր նախկին սպասուհին... — Հայտարարեց ցուցակադրողուհին սառնությամբ:

Տեր-աստված, վո՞րտեղից-վորտեղ. այդ այն աղջկն եր, վոր մի տասնյակ տարի առաջ ծառայում եր իր տանը, ու ինքն որ ու գիշեր ճղավելով-բղավելով անինա բանեցնում եր նրան, վերջն ել մի չնչին պատճուով շղրսեց վորոց: Յեկ յերբ Նինան իր աշխատավարձը պահանջեց, թամարա Նիկոլաևնան վոտքը գետնին խորելով կանչեց սպասական, թե՝ ի՞նչ վարձ, ի՞նչ բան, ուտեցրել, խորեցրել եմ, հիմքի փող ել ես ուզո՞ւմ, աղախի ճուտ, — կանչեց, ու դուռը շրիկալեն փակեց նրա վրա:

Յեկ այդ աղջկին այժմ իրեն գործ և տալու: Ի՞նչ սարսափի...

— Զարմանում ե՞ք, չե՞ , — ասաց Նինան ժպտալով, — հիշո՞ւմ եք ինչպես վորոց շղրսեցիք ինձ քաղցած, անապատան...

Հիշում ե, վո՞նց չի հիշում թամարա Նիկոլաևնան... Սակայն, յերանի թե քաղցից մեսներ ու այս տեղ չգար, յերանի թե առաստաղը վուլ գար ու ամեն ինչ տակալին աներ, վոր վոչ վոք չտեսնի իրեն այդ վորմելի վիճակում: Ի՞նչ ամոթ, ի՞նչ խայտառակություն... Արցունքի կաթիլները հակաքվել, արծաթի

ողես ողապղում ելին աչքերում և ահա, վորտեղ վոր ե, դուրս պիտի ժայթքեն հորդահոս, ծնկները ծալվում են, մթնում ե շուրջը, խառնակվում: Այս փոքրիկ միջնորդը, վոր իրեն բաժանում է Նինայից, առաստաղի մեծ ջահը, վոր վոսկեղոծ թերեն արձակած փալիլում է արեի ցուրքերի տակ, Լենինի մեծագիր նկարը, վոր Նինայի գլխավերել պատին փակած, սուր աչքերով մեջ ու գառնում մեժ ու մատախուղ...

— Սակայն լավ վոր նախկին սե որերն անցան, — շարունակեց մեղմիկ խոսել Նինան, գլորվեցին հավի- տենականության դիրիը և չեն դառնալու: Այժմ դուք ել ինձ պես հասարակ մահկանացու մարդ եք դառել, ձեր վոտքովը յեկել, աշխատանք եք խնդրում, և ձեզ հետ մենք պիտի վարվենք վոչ այնպես, ինչպես դուք այն ժամանակ, վոչ, հասկանում եք, այնպես չենք վար-

իսկ ի՞նչպես ե խոսում այդ մի ժամանակվա խեղճ ու կրակ աղջկելը, ինչպիսի՞ կծու խոսքեր և ձայնի հանդարտ ու մեղմ շեշտ, հեղնում ե արդյոք... Մինչ- դեռ թամարա Նիկոլաենան կարծում եր, վոր ահա վեր կկենա Նինան ու մի ուժդին ապտակ տալով իրեն, կանչի ցանկուտ.

«Կորի՞ր աչքիցս, անամոթ, դո՞ւ, վոր մի ժամա- նակ իշխանուհի ելիր, մեղ նմաններին անասունի տեղ իսկ չելիր հաշվում, քո չնիկը հաղար անդամ ալելի պատիվ ու հարդանք եր վայելում, քան մենք... «Քեզպեսներին վոչ միայն աշխատանք չենք տա, այլ վոտն անդամ կկտրենք այստեղից...

Սպասում եր թամարա Նիկոլաենան գլխահակ, խաչած խեցգետինի պես կարմիր, ձեռ ու վոտը դոդ ընկած...

— Կաշիատեմ ձեզ համար գործ ձարել, անցեք մի կամ յերկու ամսոց, — ասաց Նինան և սկսեց խոսել ու- րեւ ինպրատուի հետ:

Թամարա Նիկոլաենան իր ներկայությունն այլևս ավելուրդ համարելով, գողդողուն քայլերով հեռացավ:

\*\*\*

— Ի՞նչ, իմ նախկին աղախինը, եղ անտուն, անա- նուն քածն ինձ պիտի գործ տա՞ . չե մի, քաղցած կսատ- կեմ, բայց ել չեմ դիմի նրան... — բղավելով ու կան- չելով, գնդակի պես տուն ընկալ թամարա Նիկոլաե- նան:

Սենյակի անկյունում չորացած ուռենու պես կծկ- ված նատալիա իվանովնան — թամարա Նիկոլաենայի տալլը — խլատաց ինչպես ծերացած զջիկ, սե գլխա- չորն ուղղեց և աղեկտոր ձայնով բացականչեց.

— Ի՞նչ և պատահել, քա՞ , ի՞նչ...

Յեվ առանց պատասխանի սպասելու, կարծելով թե մինչեւ այժմ պատահածներից ել ավելի վատ բան և պատահել, սկսեց հեկեկալ: Ու մի պահ տախ ու հար- ուը, յերկու պատկառելի իշխանուհիները, ձենք-ձենի տված, հեկեկում ելին ծնողներից պատժված փոքրիկ յերեխաների նման:

Հարսն ավելի շուտ հանդարավեց . ընկղմելով բաղ- մոցի մեջ, սուր ձայնով ճչաց .

— ինձ ասում՝ են՝ գնա աղախնության արա, թեյ բաժանիր սրան-նրան, և ո՞վ է ասում, ո՞վ...

Տալը սիրտ առավ, յերբ տեսավ, վոր հարսն ել չի լալիս :

— ի՞նչ են ասում, ո՞վ է ասում...

— են, են մեք նախկին աղախինը, Նինա յե, ինչ զահրումար, հիմի նա յե իշխանուհի դառել, կարգադրություններ անում...

— Նինա՞ն, Նինա՞ն... Հըմ, են փսէնքոտ աղջի՞ն, վորին դուրս արիր կնյաղ Մելիքովին դուռն ուշ բաց անելուն համար, — ասաց տալը սագի նման դլուխը տմտմբացնելով, զլխաչորի միջից քիթն յերկարեց և ցույց տվեց մի մատ թուշ ունեցող թառամած դեմքը :

— Բա՛ս, նա յե աշխատանքների ուղարկում, նա՛...

— Ա՛խ, տեր Հիսուս Քրիստոս, փրկե՛, աղատե՛ ժեղ չարքերից ու սատանաներից...

Իրիկնապահին կոչկակարն յեկառի և թամարա Նիկոլաևնայի համար կարած կոչիկների դրամը սրահանչեց, քիչ ճետո նույն պահանջով ներկայացավ նաև նալթավաճառը : Թամարա Նիկոլաևնան ինդրեց յերկու որ ել սպասել և նրանց ճանապարհ զնելուց ճետո, աշքը փոքրիկ սենյակի կահկարասիներին, բացականչեց.

— Հայելապատ պահարանը մնաց միայն, են ել ծախենք, հաղիվ պարտքերը տանք :

— Իսկ մենք անոթիքադցած զկոտանք...

— Հըմ, ուղում ես զնամ սրան-նրան ծառայություն անեմ, վոր դու քաղցած չմնաս, հա՞... — գոռաց թամարա Նիկոլաևնան բարկաճայթ աչքերը վո-

լորելով տալով վրա : Վերջինս փոշմանելով իր առածը՝ սմբեց մնաց տեղն ու տեղը :

Մի քանի որ չանցած՝ թամարա Նիկոլաևնան հանգստացել, խոսում եր Աշխատանքի բորսայի և այն մասին, թե յերբ վերջառես մի աշխատանք կդանի, վոր կարողանան պարտքերից ազատվել և ապրել :

Տալը քաջալերվելով հարսի խոսակցության մեջ՝ ձեկից, ասաց :

— Կնենա Բեգթաբեկովնան արդեն դործ և ձարել, ձեռարվեստի խանութումն և աշխատում : Հիմի աշխարհն ետենց և, ինչ արած...

Հարսը բարկացավ և ջղայնորեն կանչեց .

— Բա՛ ի՞նչ անի, բա քեզ նման սենյակի մի անկունում շատախոս կաչաղակի պես կչկչամ...

\*\*\*

«Վոչինչ, աշխարհն եսպես չի մնա, ախըր. մի որ կփոխի, են ժամանակը կտեսնենք, թե ով ում աղախնելություն կանի... — մտքառում եր թամարա Նիկոլաևնան, յերբ Աշխատանքի բորսայից ուղեռորդեց մատնանված հիմնարկությունը՝ բուֆետում աշխատելու:

Յերբ սպասարկույի ճերմակ գոզնոցը կապեց և ձեռքին բոնած մատուցարանով՝ սկսեց թեյ բաժանել ծառայողներին, նրա ամբողջ մարմինը փշաքաղվեց, տաք քրաբինքով թրջվեց գեմքը : Յեվ նա դողլողալով, ինչպես թեաթափ թուզուն, առաջ անցավ : Ծնդհանուր գլուխունը նրան թվաց, թե ամենքը ճանաչում են կործերնին թողած իրեն են նայում, մեղենագրուհին երն իրար ականջն ի վար փափառով, բոթրոթելով,

ժողովում են և ասում, թէ՝ տեսէ՞ք, Թամարա Նիկո-  
լաևան վոնց և աղախին գտնել...

Կարծես բոլորը խոսք մեկ արած՝ ծաղրում են ի-  
րեն, հեղիում...

«Վա՛յ, ի՞նչ ամոթ, կալվածատեր իշխան Անդրե-  
նիկովի կինը, բազմաթիվ ծառաների և աղախինների  
տերը, այժմ աղախի՞ն, հա՛, հա՛»...

Գլուխը պառույտ եր գալիս, աչքերը մթնում ելին:  
Մասուցանը դրեց զրասեղանի վրա և թաշկինակով  
սրբեց ծովացող քրտինքը:

Մառայողները մոտեցան և մեմի բաժակ թեյ  
վերցնելով գնացին իրենց գործին, և նա նկատեց, թե  
ինչպես ամենքն իրենց աշխատանքովն են զբաղված,  
վոչ վոք չի նայում իր կողմը, վոչ վոք... Ու քիչ առ-  
ողջլա պատկերը թվաց մի խարնւսիկ յերազ, մղա-  
վանջային տեսիլք...

Թամարա Նիկոլաևան աղատ չունչ քաշեց և զա-  
տարկ մասուցանով հեռացավ, և յերբ յերկրորդ ան-  
դամ վերադարձավ գրասենյակ թեյ բաժանելու, այս  
անդամ ալելի համարձակ դիտեց շուրջը, հաստատա-  
պես համոզվեց, վոր վոչ վոք վոչ նայում ե, վոչ ծի-  
ծաղրում:

Առմ ինչ բան, թէ ով ե թեյ բաժանում:

Բայց ահա մի ծանոթ տիկին բարեկց և ժողովով  
պատց.

— Լա՛վ ե, աշխատանք եք գտել, տիկին...

Թամարա Նիկոլաևայի դեմքը փայլատակեց, աշ-  
քերը խնարճվեցին ամոթաչար:

— Ե՛ս, ինչ արած, ժամանակներ... մքմնջաց նա-  
շառաչելով;

— Կվարժվեք, վոչինչ, բոլորս ել աշխատում ենք,  
այսուրական բան... յեղափակեց տիկինը:

«Ոսկորական բան...» ակամա կրկնեց Թամարա  
Նիկոլաևան և թեյի գատարկված բաժակները դուրս  
տարափ:



Ժամանակը սահեց, ինչպես սահում են բոլոր ժա-  
մանակները և կյանքն ել ժամանակի թեկերին սահելով  
առաջ եր գնում:

Մի անդամ Նինան դործով այցելեց այն հիմնար-  
կությունը, վորտեղ ծառայում եր Թամարա Նիկուահ-  
նան:

Միջանցքում դեմն յելավ իր նախկին տիրուհին,  
ճեղմարկ գողնոցով, մատուցարանը ձեռքին:

— Հր, ի՞նչպես եք, աժմատանքի վարժվեցի՞ք, —  
հարցրեց Նինան մի պահ կանգ առնելով:

— Սկզբում իրաս դժվար եր թվում, այժմ զատել  
և սովորական բան, — պատասխանեց Թամարա Նիկո-  
լաևան առանց վորեւ գիծ փոխելու դեմքին:

— Լա՛վ, ուրախ եմ, — ասաց Նինան և հեռանա-  
լիս իր վրա զգաց նախկին տիրուհու աչքերը, վորոնց  
մեջ սակայն մի թունոտ ու ցասկոտ փայլ կար...

Ապա նկատեց, թե ինչպես Թամարա Նիկոլաևան  
առաջ անցավ դեպի բուֆետ, վորպեսզի ծառայողներին  
թեյ տանի:

1927թ.

## ՅԵՆԹԱԲԱԺՆԻ ՎԱՐԻՉԸ

Սերգեյ Նիկուտիչ Վարլամովը քաղղործկոմի բաղդիմի յենթաբաժիններից մեկի վարիչն եր և նրան ճանաչում ելին վսրպես պատվական մարզ :

Այդ պաշտոնը վարելիս նա վոչ վոքի չի գիրայուրել կամ ծառայությունից զրկել : Սակայն, սխալ կենի ասել, վոր նրա որով վորեն պաշտոնյա աթուազուրկ չի յեղել : Այս՝ շատ-շատերն են պաշտոնազուրկ յեղել կամ նորերը հրամիրվել, բայց վոչ Վարլամովի կարդադրությամբ : Հարց ե ծագում, թե ի՞նչպես առանց նրա վորոշման կարող եր մեկը պաշտոնի հրամիրվել, մյուսն արտաքամիշել, յերբ նա մի ամբողջ հիմնարկության, միքանի հարյուր աշխատավորի գլուխն եր :

Այս հարցին շատ հեշտությամբ կարելի յէ պատասխանել, յեթէ ընթերցողը մի փոքրիկ նեղություն հանձն առներ մտնել քաղղործկոմի ընդարձակ չենքը՝ վորոնելու Վարլամովին : Զուր տեղը պիտի վնարելիք նրա ընդունարանը. այլպիսին նա չի ունեցել յերբեք : Յերբ մտնելիք ընդհանուր դրասենյակը, նրան կդանելիք մտքուր հաղողած, զանգուր մաղերը լավ սանրած, զվին ուլայած փողկապ, մի վորեն անկյունում դործալարի կամ այս ու այն զբաղբաւհու զբասեղանի մոտ նստած, թղթերի կույտն առաջին, սրա-նրա հետ խոսելիս :

Զեղ տեսնելով, խոնարհարար պիտի ժպտար և, ըստ սովորության, պիտի կանգներ, մտերմորեն թոթափիեր ձեր ձեռքը, առաջարկեր նստել, առողջության կամ յեղանակի մասին հարցներ և բարեկամական ժըսիտն յերեսին անփոփոխ պիտի հայտարարեր համդի-սավոր կերպով .

— Արդյոք ինչո՞վ կարող եմ ծառայել ձեզ . . .

Այդ բոլորից գուրք խկույն կհանգելիք այն յեղբակացության, վոր ձեր գործը գտնվում և մի լավ, աղնիվ մարզու ձեռքին և լիովին ապահովում ելիք նրա աջող լուծմանը : Հաճախ ել շատ անհարմար ելիք դպում ձեզ, յերբ պաշտոնով ձեզանից շատ ավելի բարձրաստիճան այդ մարդու՝ այդպիս խոնարհվում, հաճելիորեն ժըստում ե . . . Յեւ ակտմա մեծ բավականություն ելիք րդպում այն մտքից, վոր մեր հիմնարկների գլուխն կանգնած են այդպիսի մատչելի, լավ մարդիկ :

Կղեկուցելիք ձեր գործի մասին, նա ուշադրությամբ կլսեր, մատը քոնչքին՝ խորհրդավոր արտահայտություն կտար գեմքին, վորի վրա կդանելիք ձեր ասածների համապատասխան արտահայտությունը : Յերբ անախորդ բան եր ձեր պատմածը — ոռնիկը կրծատելու կամ ձեղ վոնե բանով գրկելու մասին, տիրում եր, լայն, կնճռապատ ճակատն ել ավելի ակոսվում, հոնքին ամփոփում ելին, հայտնելու համար ցավակցություն : Իսկ յեթ լավ բան եր լսում, ձեր ոռնիկի հավելման կամ ուրիշ աջողության մասին, ժպտում եր, մանկական ուրախությամբ լցվում :

Այդ եր պատմառը, վոր շատերը, հենց այնպես, վարլամովին տեսնելու համար, գալիս զրույց ելին ա-

Նում, նրա հետ բաժանում իրենց ուրախությունն ու վիշտը. և դժու համար եր, վոր հիմնարկության մեջ այն կարծիքն ունելին; վոր Սերգեյ Նիկիտիչ Վարդամովը շատ ու շատ եր ծանրաբեռնված աշխատանքնեւ րոց...

Խոսում, վերջացնում ելիք ձեր գործի մասին, նա մի քանի վայրկան խորհրդավոր լսություն եր պահում, լուրջ դեմք ընդունում — մտածում եր յերեխ, ասկա սիրալիք կերպով ձեր ձեռքը թոթափելով, առում.

— Միամիտ մնացեք, լավ կլինի:

— Լավ, կնայենք...

Իսկ յեթե դժվարություն եր հարուցվում, վեր վեր եր քաշում ուսերը, խղճանում.

— Յեղբայր, յես ել ձեզ նման պատշինուի մարդ եմ, այսոր կամ, վաղը վոչ. դժվար ե, յեղբայր, դըժվար, բայց ինչ արած, ձեր խաթրու պիտի աշխատենք կատարել ձեր ինդիբը...

Իսկի վոչ վոր իր կյանքումը չի լսել, վոր դիմեն Սերգեյ Նիկիտիչին և ժխտական պատասխան ստանան:

«Վո՞չ» բառը նրա գրասենյակալին աշխարհից իսպան վարդած եր, բայց հաղիկ թե մի քանիսը լինեն, վոր կարողանան ապացուցել, վոր իրենց դործը Սերգեյ Նիկիտիչն եր գլուխ բերել:

Յուրաքանչյուր քիչ թե շատ կարեոր հարցի համար զիմում եր բաժնի վարիչին կամ նրա տեղակալին և նրանց կարգադրությունն անծպառն կիրառում: Ավելի հասարակ հարցերի մասին խորհրդակցում եր

դործավարի կամ գրասենյակի քարտուղարի հետ: Ելքանք վճռական դեր ելին խաղում խնդիրների լուծման մեջ և Վարդամովը յեղբակացությունը հայտնում եր խնդրասութիւն: Յեթե անհաճո բան եր հայտնում, հանցանքի մեջ բոնված մարդու շփոթությամբ, աչքերը խոնարհած, ասում եր.

— Ներեցե՛ք, ինձանից չեր կախված, գիտեք, մեր վարիչը, դործավարը... Գիտե՛ք, յես մեղավոր չեմ, հավատացե՛ք...

Յեկ հազար-հազար ներողություն ինդրելով, խնդրասութիւն առաջնորդում եր մինչեւ գուռը՝ մի վերըն հուռ ժպիտ չորրեկելով նրան:

Իսկ յեթե պատասխանը դրական լիներ խնդրասութիւն համար, Վարդամովն ուրախանում եր, յերեխայի պես ցնծում, բռնում եր խնդրասութիւնները, պինդ սեղմում եր և հայտարարում հանդիսավոր կերպով.

— Յեղա՛վ, կարգադրեցի, յեթե իմանաք վորքան դժվարություններ եմ հաղթահարել, և բռլորը ձեր խաթրու: Դժվար եր յեղբայր, ուրիշ մարդ իմ տեղը լիներ, յերբեք չպիտի կարողանար նման ծանր դործը դլուխ բերել...

Այսպես ասելով, նա ավելի ու ավելի յեր մերձենում խնդրասութիւն, բերանը մոտեցնում նրա ականջին և հաղիկ լսելի ձայնով ասում.

— Մեր վարիչին հաղիկ հաղ կարողացա համոզել, շատ դժվար եր, շատ...

Յերբ մի գորեե կարգադրություն եր լինում և այդ կարգադրությունը պետք եր հաղորդել ավյալ անձնագորության, Վարդամովը շատ կամացուկ, գրեթե փափառով, հայտնում եր.

— Գիտե՞ք, արդեն հրամանը յեղել է, հարցը  
վճռվել-պրծել, բայց սուր, մարդ չխմանա՛...

Վարլամովը բոլոր ծառայողներին գովում եր իրենց  
յերեսին, բայց յերբ այս կամ այն ծառայողը դալիս,  
բողոքում եր մյուսի դեմ, նա առանց խնդիրը մանրա-  
ժան քննելով՝ հայտարարում եր.

— Ե՛ս, սիրելիս, յես վաղուց դիտելի, վոր այդ  
մարդն անչործք է, չի դանվում իր կոչման բարձրու-  
թյան վրա:

«Անսիրու աշխատող չա՛տ աշխարքի յերեսին...  
Եռյն խոսքերը նա ասում եր նույնապես այն մար-  
դուն, վորի դեմ բողոքել եին: Այսպիսով, վոչ վոք  
հրանից դժոնչ չեր հեռանում, թեև զիմողներից մեծ  
ժամը չեր ստանում բավարար լուծումն իր հարցի:

Յեթե քաղզործկոմի արխիվից վերցնելիք ու կար-  
գայիք Վարլամովի հաշվետու զեկույցներն իր աշխա-  
տակիցների և ընդհանրապես իր զլիավորած հիմնարկի  
աշխատանքների մասին, պիտի ապշեցիք այն յեռուն և  
անթերի աշխատանքի համար, վոր տարել են նրանք:  
Առջ մի սպակասություն, ամենայն ինչ կատարյալ ե յե-  
ղել նրա հիմնարկության մեջ...

Սերգեյ Նիկիտիչը չատ լավ եր ճանաչում քաղզործ-  
կոմի մեծ ու փոքր սպաշտույաներին, ուսումնասիրել  
նրանց դիբքն ու կապերը: «Կապը» մանավանդ, այ-  
սինքն ծանոթություն ու բարեկամություն բարձրաս-  
տիճան ծառայողների հետ՝ վճռական դեր եր խաղում  
իր վերաբերմունքի մեջ: Այդ եր պտաճառը, վոր մի  
որ, յերբ նրա մոտ գործով ներկայացավ քաղաքապատ-  
կան Նյուրանոցի ծառան, Վարլամովը տեսնելով նրա

լուրջ, սակաւած դեմքը, ճաշակավոր, մաքուր հաղուս-  
տը, մի վորեե կարեոր սպաշտույա կարծեց, իսկույն  
տեղից վեր յելավ, հլու ժպիտն յերեսին, զլուխը խա-  
նարհելով բարեեց և հրավիրեց նստել:

Հյուրանոցի ծառան անակնկալի մատնվելով այդ  
չունելիած ու չլսված ընդունելությունից, կարկամեց  
և յերկու-յերեք բոպե չկարողացավ խոսել: Սերգեյ Նի-  
կիտիչը, վոր խոնարհ ժպիտով սպասում եր նրան,  
սաց.

— Արդյոք ինչո՞վ կարող եմ ծառայել ձեզ...

— Ներկցեք, գո՞ւք եք ընկեր Վարլամովը, — հա-  
վել կարողացավ հարցնել ինդրատուն:

— Այս՝ ինչո՞վ կարող եմ ծառայել ձեւ...

— Յես, յես, գիտե՞ք Նյուրանոցի ծառան եմ...

— Ծառա՞ն, զարմացած կրկնեց Սերգեյ Նիկիտիչը  
և խոկոյն կորավ նրա դեմքի հանդիսավորությունը.  
ընդունեց վես, իշխանական արտահայտություն: Այցե-  
լուին կարձ ու կտրուկ պատասխան տալով, ճամբու  
դրեց և մրժմբթաց ինքնիրեն:

«Ախմախն յեկել, դուք ժամանակ և խլում»...

\*\*\*

Մի տարի առաջ, յերբ Բանգյուղտեսչության մաս-  
նակցությամբ քաղզործկոմի բոլոր բաժինները վերա-  
կազմության և բարեփոխության յենթարկվեցին, Սեր-  
գեյ Նիկիտիչ Վարլամովին ամեն որ կարող ելիք տեսնել  
քաղզործկոմի միջանցքներում կամ սանդուխի աստի-  
ճաններին կանգնած, տիսուր դեմքով, պղտոր աչքերով,  
թափթփաված: Ամեն անդամ, վոր հանդիպում եր ից

ծանոթներին ու նախկին ծառայողներին, ստիպում եր նրանց մի պահ կանգ տանել և լսել հետեւալ դառն զանզառը.

— Յեղբա՛յր, կյանքումս վոչ վոքի խաթրը չեմ կոտրել, չեմ ասել, չեմ հայսոյել, պաշտոնից չեմ զրկել: Ամեն որ կանոնավոր կերպով հաճախել եմ պաշտոնավայրս և բարեխղճորեն կատարել բոլոր պարագանություններս: Զգիտեմ, ել ինչ մեղքիս համար ինձ կրծտեցին, ես որը պցեցին...

1927 թ.

## ՄԱՍՆԱԳԵՏԸ

### I

— Բա ի՞նչի ընդունակ ես, ինչի...

Գոռում եր ամին անգամ Արուսյակը ամուսնու յերեսին, բարկությամբ լի տչքերը վոլորելով: Զգայնությունից նրա գեղեցիկ գեմքը շառագունում եր, նուանպես կարմրում:

Ամուսինը, նախկին առետրական Սեղբակ Միքայելյանը, վազուց անգործ եր մնացել ու չեր իմանում ինչ անի. վորեե մասնագիտություն չուներ, վոր կարողանար զբաղվել, իսկ պետական հիմնարկներում տեղ չեյին տալիս նրան: Տան յեղած-չեղածը ծախել կիրել եյին և կարիքը ահավոր գազանի պես չանկում եր նրանց գուռը:

Արուսյակը, վոր առաջ հիանալի կյանք եր վարում, լավ ուտում ու հագնվում, քեֆից, թատրոնից յետ չեր մնում, այժմ նսաել եր տանը. շորերը հնացել, մաշվել եյին, մողայից վազուց յետ ընկել: Նա սաստիկ դժգոհ եր, վոր ամուսինն այլիս ընդունակ չ' առաջվա պես իրեն կերակրել գուգել...

— Վաճառականի հետ ամուսնացա, կարծեցի ւավ կլինի կյանքս, բայց արի տես, վոր ամենավատ որն եմ ընկել: Յերեկվա գյագա-գյուղեքի կանայք վոնց են հագնվում ու քեֆ քաշում... իմ մարդը նըստել ե տանը, պարապ-սարապ, անպետքացել է:

Այսպես անցնում ելին ամիսներ, տարիներ ու կող դժգոհությունն ավելի ու ավելի յեր սառուկանում: Ամռանու հեղինակությունը բոլորովին ընկեր իինը նրան համարում եր աշխարհի համար առավետքացած, ժանդուած մի իր Յեզ, յեր Միքայելյանն հաճախակի կրկնվող վեճերի ժամանակ հշեցրացականչում եր իրենց անցկացրած լավ որերը, Արուսյակը

— Յու ասա հիմի լավ լինի: Ռոբիների ապրուստին ու հագուստին նայիր, վոնց են աշխարքը վայելում, վոնց .. Մեր հարեանի կինը քանի՞ ձեռք կրեպահշին շոր ունի, վիկորիազուլպաներ, պապզուն կոշիկներ... Բա նա ինձանեց ավելի՞ սիրուն ե, մի թիզկես բոյին մտիկ տուր ու ճշճան լեզվին: Միբառ յերկու կտօր և լինում, յեր տեսնում եմ նրա կոտըրտիլը, հայելու մոտ շուռ ու մոռն գուլը:

— Հիմի ժամանակը նրանն ե, ոկտոք և նա վայելի:

— Ժամանակը, հըմ ժամանակը, հսկես ասելով կյանքս մաշվեց: Մեղավորը դու յես, դու, վոչ թե ժամանակը, Զեռքիցդ բան չի գալիս, մեղքը ժամանակի վրա յես զցաւիմ:

Ամենորյա այս տրառւնջները լսելով, ամուսինը կծկում, խեղճանում եր, իրեն խիստ մեղապարտ զգում կող մոտ կարծես սոսկալի հանցանք եր գործել ու չեր իմանում, վոնց արդարանա:

Ուր դիմել, ով իրեն գործ կտա և բնչ գործ: Մտածում եր, մտածում ու չեր կարողանում մի յելք գտնել:

2

Մի գիշեր նրանք հրավիրվեցին իրենց ազգականներից մեկի առնախմբության, վորաեղ հյուրերի շարքում գանվում եր քաղաքի տուտրա-արդյունաբերական հիմնարկներից մեկի վարիչը, վորին առանձին հարգանքով ելին վերաբերվում:

Նրան անվանում ելին Սերգեյ Միխայլովիչ:

Մոտ քառասուն տարեկան, միջահասակ, վոչ այնքան համակրելի գեմքով, բայց ժիր ու աշխուժ մտրդ եր: Ծանոթանալով Միքայելյաններին, առանձին հաճոյքով խոսքի բոնվեց տիկին Արուսյակի հետ:

Թեհ սենյակում պարում ելին, ծափ տալիս, ծիծաղում և լուլորի գեմքին ուրախ ժայիռ եր փայլում, բայց Սեղրակ Միքայելյանը լուռ եր, մաքերի մեջ սուզված, մոտածում եր իր անցյալ կյանքի, խանութի, տուտրի մասին և հոգին ծածկվել եր տիբության մշուշով:

«Հեյ գիտի ժամանակ, ինչ որեր ելին, փող եր, վոր գալիս եր, գետի պես հոսում: Իսկ հիմի, հիմի զրպանումը մկներ են պար զալիս, կնկան ել չի կարողանում խոսք հասկացնել, են որին և հասել...»

Նրա միգամած աշքերն ընկան գեմ առ զեմը նստած կող վրա, վոր յեսանգով զրուցում եր Սերգեյ Միխայլովիչի հետ: վերջինս քահ-քահ ծիծաղում եր, յերեսում եր՝ բավական հետաքրքիր նյութի մասին ելին խոսում: ուզեց մոտ զնալ, ինքն ել մասնակցել նրանց խոսակցության, բայց սիրա չարավ: Թող խոսեն, ինչ կա վոր, Արուսյակն այնպիսի կին ե, վոր թույլ չի տա ավելորդ բաների մասին խոսել...

Հանկարծ նրա մեջ ձագեց մի հոր միտք և աւքերը փայլեցին ուրախությունից:

«Յեթե այդ մարդն իր հիմնարկում մի վորեն պաշտոն սարքի իրեն համար...»

Զեռները շփեց ուրախությունից - և շատ զոհ մնաց, վոր կինը կարողանում է այլպես զբաւեցնել պատկառելի անձնավորությանը...

### 3

Մյուս որը Սեղմակ Միքայելանն իր ազգականի հետ զնաց Սերգեյ Միխայլովիչի մոտ պաշտօն խընդուռ:

Սերգեյ Միխայլովիչը սիւով ընդունեց նրանց և հայտնեց.

— Դժբախարար, իմ հիմնարկում մի այն հաշվառմի տեղ կա:

Իսկ Միքայելանը հաշվառմությունից գաղաքար անգամ չունեցի:

Յեվ նրանք փոր-փոշման յետ դարձան:

Տանը, Արուսյակը սրտապրոֆ սպասում էր, վոր ամուսինը վերջապես պաշտօն կստանա և իրենց զրությունը կը բարելավվի, բայց, յերբ տեսավ մարդու գլուխոր յետ գառնալը, ջզայնացած բացականչեց.

— Ի՞նչ մարդ ես, վոր հաշվելն անգամ չգիտես, ինչ մարդ:

— Հաշվելու բան չի, այ կնիկ, մասնագիտություն և պիտք, վոր չունեմ:

— Դե, դու իսկի բան չես իմանում, իսկի, — նորից ձաց կինը, մի քանի բռպե լուռ մնաց և շարունակեց.

— Թող ասեցիր հաշվառմությունը հասկանուած, կմտնեցիր ծառայության, սկզբում քիչ-քիչ յոլականեցիր, ապա կառվորեցիր այդ արհեստը:

Ամուսինն ընկավ մտատանջության մեջ:

Կինը մի նոր զյուտ անոցի պիս աշխուժով վեր յելավ՝ հագնվեց և շարժվելով դեպի դուռը, ասաց.

— Հիմի յես զնամ փորձեմ, բարքի աջողվի, ով կիտի:

— Լավ կինի, յեթե աջողվի, — պատախանեց ամուսինը, թերահավատությամբ թափ տալով ձեռները:

— Դու հաշբերան մարդ ես իսուել չգիտես, քեզով բանի տեղ կգնի վոր...

### 4

Հիմնարկի վարիչն Արուսյակին ընդունեց շատ սիրալիր, հրավիրեց կարինետը և ծառային հրամայեց կանգնել գոան մոտ և այցելուներին հայտնել, վոր վարիչը ժողով ունի, չի կարող ընդունել:

Սերգեյ Միխայլովիչը գրավեց իր փ փուկ թիկնաթոռը և հրավիրեց տիկնոջը նստել:

Արուսյակը հայտնեց իր խնդիրքը:

— Ամենայն սիրավ կկատարեցի ձեր խնդիրքը, բայց համապատասխան պաշտօն չկա, իսկ ձեր ամուսինը հաշվառմանություն չի իմանում:

— Զգիտեմ, ինչ ուզում եք արեք, բայց պիտք ե մի կերպ տեղավորել ամուսնուս, այլիս ապրելու հնարակորություն չկա, — ինչդեց Արուսյակը և իր սկ, իս շոր աշքերը մի պահ կենտրոնացըրեց վարիչի վրա. այդ աշքերն այնքան գրավիչ ելին և այնքան ազդու,

վոր Սերգեյ Միխայլովիչի մարմինը սրսփաց անուշ  
սարսուսով:

— Դժբախտարար, միայն հաշվապահի պահանջ  
կա, ուրիշ ազատ տեղ առայժմ չունեմ:

— Յեթե ցանկանաք՝ մի կերպ կտեղավորեք, յե  
թե միայն ցանկանաք:

— Լավ, յեթե դուք լինեցիք իմ տեղը, կանելիք  
այդ բանը:

— Ինչու չե, պետք ե միայն մանել մարդկանց  
դրության մեջ:

— Յեթե վոչ մասնագետի պաշտոն տամ, չե՞ վոր  
կարող են պատասխանատվության յենթարկել ինձ:  
Ուզում եք, վոր ինձ ձեր պատճառով այսուղից  
քշե՞ն:

Սրուսյակը լուս եր և չեր իմանում ինչ աս:

«Սատանան տանի, ինչ լավիկն ե, զժվեցնելու  
չափ լավիկ...» մտմտաց Սերգեյ Միխայլովիչը և վեր  
կենալով՝ մի քանի անգամ յետ ու առաջ քայլեց կա-  
րինետում և մոտենալով գեղի տիկինը, իր հուրհան  
աչքերը բնեռեց նրան:

— Հըմ, ինչ եք ասում, տիկին, ուզում եք վը-  
տանգի՝ յենթարկիմ ձեր պատճառով, իսկ յես ի՞նչ  
շահ ունեմ դրա համար...

Սրուսյակը, աչքերը խոնարհած, մատներով խա-  
ղում եր զրասեղանի վրա դարսված թղթերի համ:

— Հըմ, ի՞նչ եք ասում...

— Յես ի՞նչ զիտեմ, դուք ասեք, յես ձեզ լսում  
եմ, կամաց, զրեթե շշուկով պատասխանաց Սրուսյա-  
կը՝ նագելիորեն ժպանով:

— Լավ, ձեր ինդիքքը կկատարեմ, բայց դուք  
ել... գիտեք ելի...

Սերգեյ Միխայլովիչը թերվեց տիկնոջ կողմը և իր  
իրավագությունը, հուրհարուն աչքերը մոտեցրեց նրան:

— Սերգեյ Միխայլովիչ, ի՞նչ եք անում, յեթե  
հանկարծ մեկը ներս մտնի՞ զսղեցեք ձեզ, առաջ Յըրու-  
սակը և թեթե հրելով նրան, վեր յելով և շփոթված  
նայեց գեղի դիւռը:

Ծառան դուռը կամացուկ բաց արակ և հայտ-  
նեց, վոր մի քանի մարդ յեկել կարեռը գործով, ու-  
զում են տեսնել վարիչին:

— Թող յերկու բողի սպասեն, — զոռաց Սերգեյ  
Միխայլովիչը և իսկույն վերագառնալով իր աելքը,  
պաշտոնական գիրք ընդունեց:

— Վաղը յերեկոյան յես ազատ եմ, յեկեք և  
ակումբը՝ կիսունք...

— Իսկ ամսանուս ուղարկեմ:

— Աւզարկեցեք...

Սրուսյակն արագորեն դուրս յելակ հիմնարկու-  
թյունից, դեմքը կարմրած ու խաշված:

## 5.

«Տես, ինչ տիսորժակներ ունի եդ աղվեսը, ինչ  
պայմաններ ե առաջարկում...»

Մասձում եր ճանապարհին Սրուսյակը մաքերի-  
մեջ սուզված: Քայլում եր դանդաղ, մի կարեռը խլո-  
զիր վճռող մարդու մտահոգությամբ:

Մի պահ կանգ առավ, աչքերը բոցկառուն բեկ-  
ուելով մի կետի:

«Հըմ, անիծածը, ինչեր ե առաջարկում...»

Յեկ ձեռները բոռնցքք դառած՝ սպառնացին ի՞նչ-  
վոր մեկը:

Բայց շուտով աչքերի բոցը մարեց և դեմքի սպառնալից արտահայտությունն անցավ:

«Ե՞ն, ինչ արած, մինչև յերբ այսպես ապրել, մեղավոր եմ, վոր ամուսինս անպետք ե. բա, այսպես ջահել-ջահել մաշվեմ գնամ, առանց որ ու արև տեսնելու. »»

Կրկին սկսեց քայլել և այս անգամ մտածում եր միայն այն մասին, վոր շուտով գարձյալ ունենալու յե լավ շորեր, նոր գլխարկ, պսպղուն կոշիկներ, անուշաբույր ու ծանելիք և հաճախելու յե թատրոն, ոպերա...»

Այս միտքը վեր սլացնում, ալրեցնում եր նրան:

— Տեսմը, վոնց սարքեցի, — ձայնեց Սրուսյակն սրազորեն նիրս մտնելով և հանելով զլխարկն ու ձեռնոցները:

Ամուսինը բերանը ճոռթած, ատրակուսանքով նայում եր նրան:

— Ելի յես, թե չե, դու խոժ կնիկ ես, քո ձեռքից բան չի գալիս:

— Վժնց սարքեցիր, այ կին, պատմիր տեսնեմ

— Վժնց, խոսեցի, համոզեցի և քեզ նշանակել տվի հաշվապահ..»

— Հաշվապահ, — բացականչեց ամուսինը զարմացած, — բա յես հաշվապահությունից բան հասկանում եմ:

— Կաշխատես, կսովորես, վոչինչ, յեթե միայն խելք ունենաս:

Ամբողջ գիշերը Սեղբակ Միքայելյանը համարյա չքնց. մի կողքից մյուս կողքին շուռ գալով, շարունակ մտածում եր, թե ինչպես պիտի աշխատի հիմ-

նարկության մեջ և զարմանում եր այդ անսովոսելի հաջողության համար:

6

Յերբ տուփոտը Միքայելյանը ներկայացավ, Սերգեյ Միխայլովիչը մի տոմսակով ուղարկեց նրան հաշվապահական լաժմանը:

Գլխավոր հաշվապահը տվեց նրան առանձին գրասեղան, հաշվեհամրիչ և հաշվեմատյանը բերելով ա. աջարկեց սուսպի հաշիվները, հետո հարցրեց.

— Դուք հաշվապահություն վրատեղ եք սովորել:

— Համարյա թե չեմ սովորել — կմկմաց Միքայելյանը, անհարմար զրության մեջ դգալով իրեն:

— Բա, ինչպես են ձեզ հրավիրել մեզ մասնակիտ աշխատակից և պետք, — զարմացավ զլխավու հաշվապահը:

Բայց Միքայելյանը լուռ մնաց:

Գլխավոր հաշվապահը, ինչ վոր մրթմրթալով քթի տակ, գնաց վարիչի մոտ:

Միքայելյանը սրտատրոփ սպասում եր, վոր կը-քշեն իրեն, բայց կատարվեց հակառակը:

Գլխավոր հաշվապահը վերադարձավ զլխիկոր, նստեց իր տեղու և փնթփնթաց ինքնիրեն:

— Յեղբայր, չեմ հասկանում. Ինչ են մտածում, վոյ մասնագետի նշանակել են և պահանջում են, վոր վարձեցնենք, տուած քաշենք, քիչ խաթարալա կար, մեկն ել ավելացրին...

Միքայելյանն այնպես ցույց տվեց, վոր իրեն չի վերաբերում այդ զժգոհությունը: Գլուխը. ծոսծ հաշվեմատյանի վրա՝ թերթում եր առանց բան հասկանալու:

իսկ շուրջը՝ լնդարձակ զրասենյակում՝ մի տառնյակ հաշվապահ, մերենայի պիս աշխատում եյին համբիչի վրա չիջխկացնելով:

7.

Միքայելյանը կանոնավոր կերպով գնում եր ծառայության, ստուգում եր հաշվեմատյանները, վարութիրկին վերստուգում եյին մյուս հաշվապահների կողմից և ոռճիկը ստանում եր ամսական հարյուր հիսուն սուրելի...

Հաշվապահական բաժնում բոլորն ել դիտեցին, վոր նա հաշվապահ չեւ և հեռավոր զարգափար անդամ շունի այդ ստորաբնօգում, բայց վոչ վոք չեր համարձակում ծպտուն հանել և, յեր կրկին անգամ ստուշում եյին նրա ստուգած հաշիվները, բավականանում եյին միայն նրանով, վոր զարմանք ու զայրույթ եյին հայտնում իրենց ստքում:

Հիմնարկի վարիչի խորհրդով նա մտավ հաշվատպահական միամյա կուրսերը, Յերեկոները զնում եր այնաեղ, իսկ իինը՝ հարգնված ու զուգված զուրս եր զարիս զբոսանք:

Հետզհետե նրանց զբությունը լավացավ, Արուսյակի ցանկությունը կատարվեց, նա ձեռք բերեց նոր շորեր, նոր գլխարկ, փայլուն կոշէկներ և վոչ մի զվարճությունից յետ չեր մնում:

Մի քանի նոյամ ծանոթները Միքայելյանին հայտնեցին վոր Արուսյակին հաճախ տեսնում են Սերգեյ Միքայելովիչի հետ զանազան տեղեր զբու-

Արուսյակը չըսցասեց,

— Այս, զբունել եմ, բարեկում և, մտանում ե

սկսում ե խոսել հետո, ի՞նչ կա վոր, բա մերժեմ, ամոթ չի, ուզում ես թշնամացնել նրան: Ի՞նչ բամբասոզ ընկերներ ունես, Սեղբակ, զու յել ականջ ես գնում նրանց, մի կտոր հաց ե ընկել ձեռքու, աչք են տնկել ուզում են եղ ել խելեւ... իսկ զու վժնց ես նրանց լսում, այ մարդ, մինչեւ հիմա ինձ չճանաչեցիր, վոր սրանրա ասեակոսեյին ականջ ես կախում:

Կնոջ պատճառաբանությունները համոզիչ եյին և Միքայելյանը ծանոթների ասածներն ընդունեց վորպես բամբասոզ կամ զավադություն:

«Յեթե իր հիմնարկի վարիչը մոտենում, խոսում ե Արուսյակի հետ, ավելի լավ իրեն համար, կնշանակե ինքը կարող և ավելի ապահով զգալ իրեն պաշտոնում:

8

Մի առրի հետո Միքայելյանն արդեն վորոշ մասնագիտություն և փորձառություն եր ձեռք բերել հաշվապահական գործում և մյուս հաշվապահներից վոչ պակաս և տությամբ կարողանում եր ստուգել հաշիվները:

Սակայն, չնայած դրան, այժմ հիմնարկում ավելի վատ եյին վարդում նրա հետ: Հիմնարկի վարիչն ել առաջվա սիրտլիք ժեր բարեկում ընդ հակառակը, նրան հանդիպելիս զլուխը շուռ եր տալիս կամ չտեսնելուն զնում:

Իսկ գլխավոր հաշվապահը, վոր նրան վոչ մի նկատողություն չեր արել մինչեւ այժմ, սկսել եր զանազան սիրտլներ բոնել և ծերուկ կաչաղակի պես կչկչալ:

«Արդյոք ի՞նչ պատահեց...» մտածում եր Միքա-

յելյանն ահ ու դողով բռնված ու չեր կարողանում  
հասկանալ բանի եյությունը:

Ծանոթներն այլիս չեյին ասում, վոր կնոջը տե-  
սել են Սերգեյ Միխայլովիչի հետ զբոսնելիս, ընդհա-  
կառակը, այս անգամ մի ուրիշի անունն եյին տալիս,  
մի բոլորովին անծանոթ մարդու, վորին նույնիսկ  
ցույց տվին հեռվից: Դա մի բոլորովին ջահել. յերկա-  
րածիտ կոշիկներով մարդ եր և, յերբ նա հարցըրեց կնո-  
ջը, թե եղ ի՞նչ մարդ ե, վորի հետ ման և զալիս, կի-  
նը նեղացավ, արհամարհական արտահայտություն  
տվեց գեճքին և ձայնեց.

— Յես քեզ չեմ առել, վոր իմ բանին մի խառ-  
նըվի. ես ով ե, են ով. ի՞նչ յեղավ, գերիդ եմ դառել  
վոր շարունակ հսկում ես և յետիցս ընկած՝ չես թող-  
նում, վոր ազատ շունչ առնեմ: Եսքան ժամանակ յես  
քեզ եղափի հարցեր տվել եմ:

— Յես մւմ հետ եմ զբոսնել, վոր իրավունք ու-  
նենաս հարցնել:

— Ում հետ ել. վոր ման գաս. իրավունք չու-  
նեմ հարցնել, վորովհետեւ քեզ վրա վստահ եմ, ուռ յել  
պետք ե այդպիս լինես իմ հանդեպ:

Ամուսինը բարվոք համարեց լոել, վորովհետեւ  
լավ գիտեր, վոր կինը լեզվի տակ մնացող պտուղը  
չի: Յեթի ինքը տասն ասի նա հարյուրը կպատաս-  
խանի և յերբեք չի զիջի դիրքերը:

Սակայն նրանց մեջ վեճը կրկին բորբոքվեց,  
յերբ մի որ ամուսինը խիստ ճնշված ու զլիիկոր վե-  
րադարձավ տուն: Այդ որը զլիսավոր հաշվապահը  
հայտնել եր, վոր հիմնարկի վարիչը կարգադրել ե

նրան կրճատել և յերբ ինքը բորբոքել և այդ ապորի  
նի կրճատման դեմ, պատասխանել են.

«Դուք մասնագետ հաշվապահ չեք, իսկ հիմնարկի  
համար այդպիսին ե պետք.»

— Հ'ըմ, մի տարի առաջ, յերբ վոչինչ չգիտեյի,  
մասնագետ եյի համարվում, իսկ հիմա, յերբ վարժ-  
վել, հմտացել եմ, ասում են մասնագետ չես.. ես ի՞նչ  
րան ե, սա պատճառաբանություն ե.

Կանչում, գոռզուում եր Միքայելյանը և Հղայ-  
նությամբ յետ ու առաջ քայլում սենյակում:

Արուսյակը լուս եր և կարծես այդ լուրը նրա  
վրա վոչ մի տակավորություն չթողեց:

— Դու արի, այ կին, վաղը գնա Սերգեյ Մի-  
խայլովիչի մոտ և խնդրիր, վոր ինձ վերընդունի իմ  
պաշտօնում, — ասաց ամուսինը մոտենալով Արուսյա-  
կին:

— Յես այլես նրա մոտ չեմ գնա ու չեմ խնդրի,  
նու ի՞նչ մարդ ե, վոր գնամ ու խնդրեմ, — պատասխա-  
նեց Արուսյակը, աչքերը փայլեցնելով չարախինդ:

— Մինչե այժմ հրաշալի մարդ եր, հիմա հան-  
կարծ վատացավ:

— Դու թնդ եղ անատամ քաֆթաոին, յես քեզ  
ուրիշ հիմնարկում պաշտօն կճարեմ, ավելի լով  
պաշտօն...

Միքայելյանը տարակուսանքով նայում եր կը-  
նոջն ու չեր իմանում ի՞նչ ասի:

## Ա Թ Ռ Ո Ւ Ը

— Հետաքրքիր մարդիկ շատ կան աշխարքում .  
վոֆանք նրանցից իրենց գույնը մի քանի անգամ են  
փոխում կյանքի ընթացքում , վոմանք ել մոռանում են  
ամեն ինչ , յերբ տաք աթոռի վրա յեն նստում և ա-  
թոռն ամբողջովին փոխում ե նրանց նկարագիրը : Այս  
վերջինների չարքին ե պատկանում ահա Ս . . . ն , վորի  
հետ ծանոթացար քիչ առաջ և , վորի մասին պիտի  
պատմեմ քեզ , — ասաց ընկերս , յերբ մենք տեղափոր-  
վեցինք ակումբի այգում և պահանջեցինք յերկու շի:  
գարեջուր :

— Այո՛ , — շարունակեց ընկերս արմունկները դր-  
նելով սեղանի վրա և դեմքը գետի ինձ մոտեցնելով , —  
այդ անձնավորությունն իսկապես վոր հետաքրքիր և  
և մեր աշխարքումը նման մարդիկ շատ ու շատ կը-  
գտնես . . .

«Դրա հետ յես ծանոթացա թիֆլիսում՝ 17 թվի  
սկզբներին : Թափառում եր անդորձ , ավելի ճիշտ կը-  
լինի ասել , չեյի իմանում ի՞նչ գործով եր զբաղվում :  
Ուշադրությունս գրավում եյին նրա խելք դատողու-  
թյունները մարդկանց և աշխարհի գործերի մասին :  
Լավ եր խոսում , սիրում եր զբականությունը և այդ  
բնագավառում լայն տեղեկություններ ուներ : Մէ

իսոսքով , ի՞մ խելքին մոտ մարդ եր , ի՞մ բնագլորու-  
թյունն ել խոմ գիտես , վոր մեկին հավանեցի , կժամեր-  
մանամ հետոր և բան չեմ խնայի նրան :

«Այն ժամանակ յես ապրում եյի բավական ան-  
նպաստ պայմաններում , վոչ կարգին բնակարան ու-  
նայի , վոչ կարգին դորձ : Ապրում եյի ծայրերը մի  
կերպ իրար բերելով , վոչ կուշտ եյի , վոչ բոլորովին  
մոլած : Այդպես անցնում եյին որերը : Յերեկոները  
նա զայլիս եր ինձ մոտ , միասին թեյում և դուրս եյինք  
գալիս զրունելու : Յերկոնեքս ել քաղաքական միենույն  
հույզերով եյինք առգործված , դժգոհ եյինք տիրող  
կարգերից և աչքներս դեպի հյուսիս՝ սպասում եյինք  
ինչ վոր բանի , վորը թեհե անորոշ եր մեզ համար ,  
բայց լավ եր թվում , հուսագրիչ . . .

«Բայտ յերեռութիւն , Ս . . . ն զտնվում եր չափազանց  
ծանր պայմաններում , վորովհետեւ շարունակ դժգո-  
հում եր կյանքից . լինում եյին որեր , յերբ նա մր-  
հում եր քաղցած և յես մանակից եյի դարձնում ի՞մ  
աղքատիկ ճաշին : Հաճախ ստիպված եմ յեղել դես-  
ղեն ընկնել , այս կամ այն ծանոթից վող վերցնել ,  
վոր կարողանամ ոգնել նրան : Այո՛ , նրա համար վո-  
չինչ չեմ խնայել , վոչինչ . . .

«Լավ եմ հիշում , թե ինչպես ձմեռային մի ցուրտ  
գիշեր , յերբ յես վերմակիս մեջ պլամած աշխատում  
եյի տաքանալ և քնել , պատուհանս թխկացրին , յերբ  
ցուրտ նայեցի , ինչ տեսնեմ , ցրտից բոլորովին սա-  
ռած , վողոցում դողդողում եր : Իմ հարցին՝ թե ին-  
չո՞ւ յե այս ուշ գիշերին դուրս յեկել , հաղիլ արտա-  
սուքը զսպելով հայտնեց , վոր տեղ չունի գիշերելու . . .

իսկույն ներս չբայիրեցի և իմ փոքրիկ սհնյակում,  
իմ թախտի վրա տեղ տվի նրան:

«Այդպես եյին այդ որերը:

«Այդպես սահեց ժամանակը և խոշոր փոփոխու-

թյուններ տեղի ունեցան մեր քաղաքում: Թեև քաղա-  
քական կյանքը փոխվեց, բայց իմ կյանքի մեջ փո-  
փոխությունն այն յեղալ, վոր յես մի համեստ պաշ-  
տոն ձեռք բերի և մինչեւ այժմ ել մնում եմ այդ պաշ-  
տոնում: Զգիտեմ ինչի՞ն վերադրել, ճակատազրի՞ն,  
թե՞ իմ սահմանափակ ընդունակություններին, յես  
դիկ բարձրացան կյանքի աստիճաններն ի վեր, ու-  
ժնացի միւնույն կետին, և հույս ել չկացին, բայց յես  
կետն ինձ շարժի առաջ:

«Այդպես պատահեց ինձ հետ, իսկ թե Ս...ն ինչ  
յեղալ, այդ և հետաքրքիրը: Նա անհարուցավ և նրա  
մասին յերկար ժամանակ բան չիմացա: Զարմանալի  
անհանգստություն եր պատում ինձ, յերբ վերհեռում  
եյի նրան, կարծես հարազատ յեղբայրս լիներ:

«Քաղաքական դեպքերը, նոր կյանքն ու կենցա-  
ղը կամաց-կամաց ավլում-սրբում ելին հինը, անցյա-  
լի հուշ դարձնում հին որերն ու դեմքերը:

«Որերի այս դիմապառույս հորձանքում մարդու ա-  
կամա կտրվում ե անցյալից և միրճվում, մերգում  
և նոր, առորյա կյանքի մեջ: Բայց յերբ կրկին ես հան-  
դիպում հին, մտերիմ դեմքերի, անցյալը նորից բարձ-  
րանում ե մոխիրներից և իո մոայլ կամ լուսավոր ե-  
քը վառում առաջ:

«Այդպես պատահեց ինձ, յերբ մի որ քաղաքի  
գլխավոր փողոցում հանդիպեցի Ս...ին: Փոխվել եւ,  
ավելի թարմացել ու լցվել, հադին կանոնավոր չոր  
կար, վայելուչ տեսք ուներ ու լուրջ: Չնայած, վոր  
յես ուրախ ճիշերով մոտեցա ու պատրաստ եյի գիրկո  
առնել վողջապուրելու համար նրան, կարծես վաղուց  
անհետացած հարազատ յեղբորս եյի հանդիպում,  
բայց... մնացի ստուած, յերբ նրա գեմքի անկյունում  
կախված գտա միայն մի փոքրիկ, պաղ ժպիտ...

«Ու մենք միայն բավականացանք իրար ձեռքը  
սեղմելով:

«Քեֆս ու առողջությունս հարցըեց, և ապա հե-  
ռացավ, ասելով:

— Շոտարում եմ, ուրիշ անդամ կխռունք...

«Ու նույն կխատ ժպիտը շրթունքների արան-  
քում պահելով՝ առաջ անցավ և ծածկվեց բազմության  
մեջ:

«Կարծես քնից արթնացած, աչքերս բանալով, նոր  
եյի գիտում շուրջս, սոսուգելու համար՝ նա՞ յեր, թե  
մի ուրիշ, սոսար մարդ, նա՞, այն մտերիմ լնկե՞րս...

«Մինչեւ հիմա վո՞րտեղ եր, ի՞նչ եր շինում այժմ,  
ինչո՞ւ այդպես վերաբերելց հետո... Ահա բազմաթիվ  
հարցեր, վորոնք կրծում եյին ուղեղս, բայց մնում  
անպատճառան:

«Յերկրորդ անգամ նրան տեսա ավտոմոբիլում  
հստած, թթվապանակը թեկին տակ, մեն-մենակ բակ-  
մել, այնպես եր նայում շուրջը, վոր կարծես իշխում  
եր բոլորի վրա, աշխարքն ամբողջ իրեն եյին տվել:  
Նկատեց ինձ արդյոք, հայտնի չե, բայց յես այնպիսի

ունեղ եյի կանգնել, այնքան մոտիկ նրա սթոյին, վոր աչքեցը չեյի կարող վրիպել: Ե՞ս, ի՞նչ արած, ո՞վ դիտե մարդն ինչ տաքուկ տեղ է ընկել, վոր այլիս կարիք չունի մեղ նման հասարակ մահկանացուներիոնկատելու... ի՞նչ արած:

«Յերրորդ անգամ պատահեցի նրան փողոցում: մեկի հետ անցնում եր, յերկարաճիտ, պապղուն կոչիկներ եր հաղել, քայլում եր ինքնաշխատ, հաղթոքին: իմ սովորական զբոսանքո եյի կատարում: Սպազմանք, նա թեե տեսալ ինձ, բայց չբարեկց: Գունա ինչ եր մտածում այդ վայրկյանին, թերես այս քան շատ ու շատ հարցեր կային կուտակված նրա ուղղում, վոր խիստ զբաղված եր... Սակայն փաստն նում են շատերը, վորոնք քեզ չեն ծանաչում և դու նրանց այնքան ես հետաքրքրում, վորքան փողոցի վորեն իր կարող ե հետաքրքրել:

«Նրա մասին տեղեկություններ հավաքեցի. պարզ վեց, վոր անցել եր կուտակցության շարքերը և վարում եր պատասխանառու պաշտոն: Նրա գլխավորած հիմնարկի մեջ ծառայում եր իմ ծանոթներից մեկը. վորն ինձ պատմեց զարմանալի և միաժամանակ անախորժ բաներ նրաներ նրա մասին, թե ինչպես այդ հիմնարկն այցելողներն որերով հելթ են կանգնում ու չեն կարեն, ժողովների ժամանակ խիստ անբարտավաճ:

Ճառայողները վախենում են նրա մոտ ծպտուն հանել: Լավ ե վարվում նրանց հետ, ովքեր քծնում են, զլուխ խոնարհում և ստորագրաց պատվում են նրա շուրջը, Բայց ամենից հետաքրքիրն այն եր, վոր Ս...ն իր գրասենյակում կարծես թե ջոկովի գեղեցկուհիներ կը հավաքել — մեքենագրուհի կամ արձանագրուհի:

«Թե ինչ ե կատարվում գուրսը, այս կամ այն մեռքենագրուհու տանը, ինչ քեֆեր, որդիաներ են սարքվում, այդ արգեն խիստ գալանի յե պահվում և ծառայողներից շատ քչերը զիտենք...»

«Յեվ այս պատմողը շատ խնդրեց, վոր լսածներս վոչ մեկին չհայտնիմ, վորովհետեւ յեթե իմացվի, կարող ե նա տուժել, Ս...ն մի ըստեյում կշպրտի նրան փողոց:

«Իհարկե, յես հավատացրի նրան, վոր վոչ վոքի բան չեմ ասելու, բայց այդ ամենը շատ ճնշող եյին, անսպասելի և անհավատալի:

«Ահա թե ինչ ե անում աթուր, — մտածում եյի յես ու զզվանքով հիշում նրա անունը:

«Մի որ ել լրագրում նորություն կարդացի Ս...ի մասին, վոր բյուրոկրատիվմի և այլ խոյտառակ արարքների համար նրան վարել են կուտակցությունից և ծառայությունից: Սյուրու և՛ ուրախացրեց, և՛ տիրություն պատճառեց ինձ. ուրախացրեց, վոր նա ընկել ե բարձունքից, տիրեցրեց՝ վոր անարժան մարդ և յեղել... Սակայն հետաքրքիր եր տեսնել նրան այժմ, բարձունքից ընկնելուց հետո, և յես հանդիպնեցի նրան գտրձյալ փողոցում. ձեռները շարպարի զըր-

պանում, գլխիկով ման եր գալիս, դիմքն սուանց սուփելու, գունատ...

«Ինձ տեսնելով, շփոթվեց, մի վայրկյան ինդացավ, չգիտեր ինչ անելը։ Յևս սովորական բարես տվի ու անցա։ Հաղիվ յերկու-յերեք քայլ ելի արել, յեր մեկը բանեց թևս և գժգույն աչքերով նայեց ինձ։

«Եյտ նա յեր։

— Ա՛, բարե, ի՞նչպես ես.

— Ե՛հ, կամ ելի՛, ապրուժ եմ, — պատասխանեց և քայլելիս հավասարվելով, ուղեկցեց ինձ։

— Ելի նույն տեղումն ես պաշտօնավարում։

— ԶԵ՛, — կմկմաց շփոթված, — հիմի աղատ քառացի յեմ, անդործների թիվն ավելացրել եմ մեկով։

— Վա՛, ետ վո՞նց յեղալ, — հարցրի զարմացած ցույց տալով, վոր վո՞չինչ չզիտեմ նրան հեռացնելու մասին։

— Վո՞նց, ես աշխարքումն ամեն ինչ կարող է պատահել, այսոր վերեն ես, վաղը ներքե, ես անիծած աշխարքի բանն եղպես ե...

— Բայց, յեթե վերել շատ և տաքացնում ու դուռողացնում մարդուն, պետք եներքե բերել նրան. զու շատ լավ և ես աշխարքում...

«Իմ խոսքերը դյուր չեկան Ս...ին և նա տհաճությամբ չարժեց դլուխը»։

Սեղանակից ընկերու մի քանի ըստե լուռ մնաց և դատարկեց զարեջրով լիքը բաժակը։

— Հետո՞, բա հետո ի՞նչ յեղալ, — հարցրի յևս անհամբել։

— Ինչ պիտի լիներ, — շարունակեց նա, — հետաքրքիր ե, յեթե զու լինելիք իմ տեղը, կարո՞ղ եյիր Ե...ի նման մարզու հետ զարձալ մտերմանալ, գարձյալ ողնության ձեռք մեկնել։

— Բոլորպիին, կթքեցի այդպէսի մարդու վրա և կհեռանայի։

— Յերեակայի՛ր, զոր յես աշխատես չվարվեցի։ Հիմի նա ելի առաջվա պես զնում — դալիս ե մոսս, թեյում հետո, նեղ ժամանակն ելի ողնում եմ նրան, միիթարում...

Նրա աչքերը լի եյին անկեղծության ժպիտով և յես սիրու չարի հակածառել։

1928 թ.

## ՀՆԻՑ ՆՈՐԸ

Մեծ իրարանցում եր ընկել բանվոր Սարգսի տառը: Իրերը գուրս եյին բերում, թոթափում եյին, փաշիներից մաքրում:

Զորսհարկանի շինության տակ, մեջքը կոացած, կեսը հողում, նստել եր նրա կիսամութ նկուղը, վոր յերկու վոքքիկ լուսամուտ-աչքերի միջով հաղիվ եր կարողանում լույս աշխարհը տեսնել: Լույսի շողերը դոզդուղում, ինչ վոր բանից վախճանելով ներս եյին բնկնում ու մնում կիւածամբին: Մասախուղը պայքարում եր համառորեն նրանց դեմ և յետ ու յետ վանում:

Դեմառդեմն աժդահա-աժդահա կանոնել եր պարսպանման մի պատ, կանգնել եր արբորջ հասակով և արգելք հանդիսանում արեին ներքե նայելու:

Վերին հարկերի պատշամբներից ամեն անզամ ավելուցքի լաթեր եյին թոթափում կամ կեղաջուր թափում, ու Սարգսի նկուղի առաջ շարունակ թաց եր, անմաքուր:

Ահա այդ կիսամութ վորջից Սարգսի բնտանիքը ոլիսի փոխադրվեր նոր կառուցված բանվորական տունը:

Սարգսի հայրը, յոթանանամյա Սիմոնը, կուղիկ մարմնով, սպիտակամաղ, դեմքին հաղար ու մի կըն-

ձիո, մարած աչքերով մարդ, վոր հաղիվ եր շարժ-գում, և վորի վասները նկուղի խոնավությունից ծան-սացել, շատ անզամ հրաժարվում եյին ծառայել նր-բան, այժմ ձեռ ու վոր եր ընկել, աշխուժացել եր ու յեսանդով լցվել: Իրեն պես պատաված կնոջ հետ փո-չեթաթախ հին կապերար գուրս տարավ: Իսկ հարսր, Սարգսի կինը, թեյի բաժակները և ուրիշ մանր-ջունիք երերն եր գասավորում զամբյուգի մեջ:

— Մի խիլ անզամ չմոռանաք հա՛, վոր ել յետ չդաւանանք վերցնելու, ել չեմ ուզում տեսնել ես անի-ձած տունը, — ասում էր Սիմոնը:

— Ա՛յ մարդ, եստեղ ենք մնծագել ու կյանք մա-չել, եսպես շուտ մոռանա՞նք, — պատասխանեց պա-սովր:

— Թող անիծվի՛ են կյանքը, վոր մաշից առանց որ ու արե տեսնելու...

Սպրանքատար կառքը յեկալ գղրդակով ու կանգ-նեց գուան առաջ: Միջից գուրս դասկեց Սարգսը և արագությամբ բոլոր իրերը տեղակորեց նրա վրա:

Ծեր Սիմոնը մի անգամ ու մանրազննին զիտեց նկուղի գատարկ անկյունները, և ամբողջ ընտանիքը կտաքի հետ միասին շարժվեց առաջ:

Նոր տունը գտնվում եր քաղաքի բանվորական թաղամասում: Կարմիր կղմինդրով կառուցված մի փոքրիկ շինություն եր չորս սենյակով, վորոնցից յեր-կուսը հատկացրել եյին Սարգսի բոտանիքին: Յերկու լուսավոր, հիանալի սենյակ, նոր ներկված, պսպղուն հատակով և սպիտակածեկի պատերով:

Կարծես յերազի մեջ յինեյին բնտանիքի բոլոր ան-դամները, յերբ նոր բնտակարանը մտան:

— Պա՛հ, Ես ինչ տեղ ե, Եսպէսի տեղ մի ժամա-  
նակ զանգին մարդիկն եյին կենում, մենք ո՞ւր...

— Ես խոմ մի աշխարք բան և հավքում, ենքո՞ւ  
լեն ու բոյ ե.

— Ել խաղեյինի ազախինը կեղտուա ամելը վերեից  
չի թոթափի մեր դլիին...

Կահ-կարասիքը սհրս բերին: Ի՞նչ ունելին վոր,  
մի պահարան, մի յերկու փոքրիկ սովուկ, մի դար ու  
փոս, սեւցած սեղան, մի յերկածյա հաստրակ մահ-  
ձակալ յերիտասարդ ամուսինների համար և յերկու  
ճաճռան թախոտ՝ ծերերի:

Այդ բոլորը հազիվ մի սենյակ կահավորեր:

— Ի՞նչ վեշ ունեմ, վոր սենյակները լցնեմ, —  
տրոնջաց հարսր:

— Վոչինչ, Սաթո ջան, իդ ել կունենանք. Հմի  
հլա սրանցով յոլա զնանք, տեղավորվենք, հետո ամեն  
բան լալ կլինի, — սիրո ավեց Սարգիսը, վոր թըս-  
տունի թեթեռությամբ կնոջն եր ոզնում կահ-կարա-  
սիքը սենյակներում տեղավորելու համար:

Ծերուկ Սիմոնի աչքը խտառում եր նոր բնակարա-  
նէ մաքրությունն ու պայծառությունը:

— Ես խոմ գրախտ տեղ ե, մեր ազա Մաթոսը մե-  
նակ ես տեսակ ոթախներ ուներ:

Մտմում եր ինքն իրեն և շարունակ մի սենյա-  
կից մյուսն անցնում: Լուսամուտներից դիտում եր այն  
կանաչ տարածությունը, վոր փովել եր իրենց տան  
շուրջը, ուր թավիչի պես խռան եր բուսեւ, իսկ կա-  
պոյտ յերկինքը վերեից կախվել, յուցաղը ում եր իր  
արեշող լանջը:

Ծերունին դուրս յելալ ընդարձակ պատշղամբը և  
կանգնելով կապույտ ներկած ճաղերի մոտ, ձեռքը  
ճակատին՝ նայեց հեռու-հեռու...

Հանկարծ նրան տիրեց մի անասելի տրամություն:  
Աչքերին պատկերվեցին հին որերը, անցյալ կյանքը,  
նոր թողած նկուղը, քանի՛ տարի յեր սովորել այդ մը-  
սայլ վորջում... Մի ամբողջ կյանք: Վերևի հարկում  
աղա հարաւոտները քեֆ եյին անում, իսկ ինքն իր լին-  
տանիքով փոտում եր ներքեռում: Հե՛յ դիդի աշխարհ,  
նա աթ չար սատանին, ինչ որեր եյին...

Իսկ այստեղ բռլորովին ուրիշ ե: Հրե՛ն յերկնքի  
կապույտում պատկերվում և բարձրանիստ բիւրը:  
Արեի շողերն առառողբեն թափել են, վոսկեծովի պես  
հուրհատում են, ջերմացնում չենքը, պատշղամբը,  
սենյակները: Կշտին ուսենին և բարձրանում սաղար-  
թախիտ ու լայնաճյուղ:

Այստեղ գարուն ե, լույս կա, արե ու ջերմու-  
թյուն...

Սիմոնը կարծես նոր եր տեսնում կյանքը, բնու-  
թյան բարիքները: Բնությունն իր գեղեցիկ գոները  
նոր եր բանում նրա աչքերին: Առաջ այս լույսն ու  
պայծառությունը չկար, արևն այսպես հրարձակ ու  
ջերմագին չեր շողում, կյանքը գեղեցկորեն չեր ցըն-  
ծում շուրջը:

Ո՛, մի ամբողջ կյանք եր գուր տեղ մաշել ծերուկ  
Սիմոնը...

— Ի՞նչ ես փիքը անում, ա'յ մարդ, ընչի՛ եղպես  
թթվել, կանգնել ես, յե՛կ, աչքալուս արա, — ասաց  
կինը, տեսնելով ամուսնու մտածկոտ դեմքը:

— Փիքը ևմ անում, ա՛յ պառակ, թե ընչե՞ս մեր  
ումը մաշեցինք են, ևո ամբած հավարնում, զո՞ւր  
տեղ մաշեցինք, — պատասխանեց Սիմոնը, զլուխը  
դմզբացնելով:

— Ե՛, հմի նստեմ ու մտածեմ, թե ես ընչե՞ս ես-  
ովես եր, են ընչե՞ս ենալես, անցածը գնա՞ց...

— ԶԵ՛, — հասաչեց Սիմոնը, — մեր ումը ընչե՞ս  
պիտի մաշվեր, մենք մարդ չեցի՞նք: Յանի մենք եւ-  
րաժունք չունեցի՞նք ես աեսակ տեղ ապրել:

— ԽԵ՛, խե՛, վո՞նց կարայիր, փող ունեցի՞ր, ա-  
նո՞ւն, հարստությո՞ւն...

— Հենց դրս համար ե ջիզրս զալիս Ե՛, թե վո՞նց  
են զանգին հաստավիզները լեն ու բոլ առլունմ եցին,  
քեզ քաշում, փորները տողացնում, իսկ մենք որ ու  
դիշեր բանելով մի կտոր հացի կարոտ քաշում...

1926 թ.

## Ս Ո Ն Ա

### 1.

Մինչեւ սարի դոչի անտառն և իջնում կանաչ գոր-  
դի պես, իսկ փեշերին դյուզի արտերն են վոսկեվոր-  
վում արեկի տակ: Յորենը հասել ե արդեն. պտուղնե-  
րով ծանրացած հասկերն սպասում են մանգազղի:

Չորակում և ըլուրն ի վեր դյուզի տներն են դես-  
ու գեն նստած, կոնակը ժայռերին, թեատրած ծա-  
ռերի հովհարին տակ, խշիշացող ջրերի ափին:

Բլուրներն արեկց շիկնել են, գլուխները խոնար-  
հած բարձրաբերձ սարին՝ շարք-շարք ձգվում են հե-  
ռու-հեռու:

Թուչունները ու կետերի պես հարվում են յերկնքի  
կապույտում կամ փաքրիկ խմբերով իջնում արտերի  
վրա, պահ մանում հասկերի արանքը, չարաձճի ոլո-  
տույտներ գործում ու նորից թեում վեր ու վեր:

Վերջալույսի աղոս ցոլքերն են մարմրում, մթլն-  
շաղն իջնում և բամբակի պես փափուկ, աներն ու ժայ-  
ռերը սեանում են, ձեռքն ու գույները փոխվում, ա-  
նորոշ կույսերի վերածվում:

Յերկինքը թանտքի զույն սոտացած՝ նախշվում և  
աստղերով, իր լանջը հպում ըլուրների կատարներին  
ու մնում այդպես:

Գյուղի մոտ մի կով և աղիողորժ բառաչում, յեւ նախըց յետ մնալով կորցրել և ճամբեն։ Հեռուներից լավում և շահ հաջոցի մի թույլ ճայն, գյուղի մյուս ծայրից մի ուրիշ շուն ել յեռանդով արձագանքում եւ։

Արտերի միջից սպիտակ ճանապարհն և ոճապը տույտ իջնում։ Ամբողջ որը հանդում աշխատելուց հետո Մուշեղը վերադառնում է տուն։

Ճանապարհը փեյինոտ է, քիչ առաջ նախիրն և անցել խոսի բազմաթիվ ծզուներ կան թափթված այս ու այն կողմ, սայլի անիվների ակոսներն են յերիում իրար խաչաձեւ ու ծուռ ու մուռ։

Գյուղի մոտ խնձորենու այդիներն են ձգվում, վորոնք իջնում են մինչև ձորում աղմկող վտակը։ Պտուղներով ծանրացած ծառերը կանգնել են թե-թերի և մութ սովերներ դցել ճանապարհին։

Սոնան աղբյուրիցն և գալիս։ Ահա նրա արեխաշդեմքը, հասած խնձորի պես կայտառ ու կարմիր այտերը։

Մուշեղը սիրալիր բարեեց, Սոնան ժպտաց, քայլերն արագացրեց և հեռացավ։

«Վա՛հ, ինչ լավն և շահ աղջիկը...» Հասաչեց Մուշեղը և հուզմունքից դողլողաց։ Ծանր խնդիր վճռող մարդու նման դեմքն ամփոփվեց, քայլերը դանդաղեցին, չըշապատն ամբողջ անդունացավ, մշուշերն արագացրեց և հեռացավ։

Սոնան Բեղինենց Արշակի աղջիկն է։

Մի ժամանակ Արշակը Մուշեղենց մոտ բատրակ էր։ Այդ այն ժամանակն էր, յերբ տակալին վողի էր

Մուշեղի Հայրը, յերբ թագավորը թախտից չեր ընկել, գյուղում քյովավա կար, իր հայրն ել գյուղի ամենից զոռքան՝ բեղերը սրած, աժդահա մարդ, տունը մեր մալ - տալար։

Մուշեղը վաղուց եր աչքը դցել Սոնային, յերբ ինքը զեռ շարտ չահել եր, ճայնը նոր եր խոսկոտել, ու թուխ, արեհար գեմքին պատանեկության կրակը վասպում։ Յերբ Սոնան, մի անուշիկ, թմրիկ աղջիկ գաւիս եր իրենց տուն հորը մոտ, Մուշեղը պահում եր նրա ճամբան ու խոսքի բռնվում նրա հետ։

— Սոնա, — ասում եր Մուշեղն իր հրարորդ աչքերը կենորոնացնելով նրա վրա, — յես քեզ պիտի առնեմ, գու անուշ աղջիկ ես...

Սոնայի այտերը կարմրում եյին, ամոթից աչքերը խոնարհվում և նա վախչում եր գոմը մաքրող հոր մոտ։

Յերբ պտուղները հասնում եյին ու խնձորը վոսկեվորվում եր կանաչ տերեների արանքում, Մուշեղը Սոնային տանում եր իրենց այդին և խնձոր քաղում նրա համար։

Այդպես գլորվեցին որերը համրիչի հատիկների պես, յերբ մի անգամ աշխատանքը թերի կատարելու համար Մուշեղի հայրը կովեց Արշակի հետ և նրան դուրս արակ։ Այդ որվանից ել կորվեց Սոնայի վոտքը։

Մուշեղը մեծանում եր ու թեե հիշում եր Սոնային ու քաշում նրա կարոտը, բայց խույս եր տալիս նրանից, ամաչում եր գեղամիջում կամ աղբյուրի մոտ խոսքի բռնվել նրա հետ, ինքը զոռքա Մոսինի տղան, գյուղի են ունեորը, վո՞նց խոսի իր նախկին բատրակի աղջկա հետ։

Յուսաջ փոքր ելին, զեռ քիչ ելին տարրեշուում չարն ու բարին, Սոնայի հայրն իրենց մոտ եր աշխատում, են վախուը ուրիշ բան եր:

Հիմի Մուշեղի պատվին չեր վայելում...

Երբ նրա շրթունքներն աղվամազով բոլորովին սևացան, հայրը պատկեց նրան: Հարկան գյուղից աղձիկ բերին, իրենց տան հալասար, մի ունեոր ընտանիքից:

ՅԵՂ Մուշեղը մոռացավ Սոնային:

Ժամանակը փոխվեց, հայրը մահացավ, նոր իշխանություն, նոր մարդիկ յեկան գյուղը, կյանքը տակն ու վրա յեղալ:

Քյանիբները մարդամեջ անցան և գյուղն ու նրա զործերը կամաց կամաց առին իրենց ձեռքը:

Այժմ Մուշեղի նախկին բատրակ Արշակը գյուղի խորհրդի նախագահն ե, իսկ Սոնան գեղի ամենից ակտիվ կանանցից մեկը: Հարկերը նշանակելու, վարելա՛ հողերը բաժանելու և գյուղական մյուս հարցերում մեծ գեր են խաղում նրանք:

Մուշեղի ասողը թեքվել ե, հողարաժանման ժամանակ վաս հողեր տվին, հարկերն ել շատ են նշանակում, քյանիբները ծուռ աչքով են նայում նրան:

«ՅԵՐԵԿ Սոնային առնեյի, հիմի ինձ ձեռք տվող չեր րի, Սոնայի ավին գեղավետի նախագահը յես ել նրա փեռեն, գտակս ծուռ ման կզայի գեղամեջումը և աչքիս վրա ունք կա ասողը չեր ըլի...»

«Ախմա՛խ, ախմա՛խ... վշշում եր ինքնիրեն Մուշեղը և դիսին վայ տալիս:

«Մոնան համ լովին ա, համ ել խոսքը կտրուն, աշխարքը հիմի նրանց ա, իմ կնիկն ըլեր, վոր աժե՞ր...

Մուշեղի հոգուց մի խոր հառաջանք անցավ, ու մշուշփած աչքերին նորից պատկերվեց ճանապարհի վոշին:

Աստղերը ժողովում ելին արծաթ աչքերով, լույսի նուրբ շերտեր ցանցնում յերկնքի լամփին:

Ալլիները հարկեցին մութի մեջ: Տների շարքն սկսվեց հողի մեջ պալած:

Ահա ե իր տունը, ինչպես մի մութ սովեր: Բակի անկյունում հորթն եր բառաշում կտրուտալից հայացքներ նեսելով իրենից քիչ հեռու կանգնած մոր կողմբ: Գոմշի ձարդը խրտնոծ վաղվղում եր բակի յերկայնքն ի վար, գետնին շատ աված գեցինը հոտոսում, նորածիլ պողերը քսում գերաններին, արճիկ տալիս խենթի պես:

Ճրադի ուղու լույսը հաղիվ եր սովորում խըր-ձիթում: Մուշեղը ներս մտավ, նոտեց թախտի վրա, արխալուղի ոճիքը գեն արավ, կոնակը թեք կերպով հենեց պատին, բեղարած վոտներն յերկարեց հանգրստանալու:

Մթնշաղի մեջ պատկերվեց նրա լայն, արեա-ձբադի աղոս լույսը հաղիվ եր սովորում խըր-հուսափած վիզը:

Մայրը նոր թխած հացեր բերավ գարսեց սեղանին: Կինը, Համեստը, ճաշի համար պատրաստած ուտեղեն բերեց, կորեկից պատրաստաված աղուր, խաչած գետնախնձոր, կանաչեղին:

Մուշեղի հայացքը մի պահ բեկեռվեց կնոջ վրա։  
Փոքրիկ մարմին ուներ նա, բարակ-մարակ, դիմքը  
ժեղսամոմի պես զգույն։

«Հեյ վա՞ս, —մտմտաց Մուշեղն ինքնիրեն, —  
կոնելումս արջի չտի ույժ, ձեռներս երկաթ, մալ-  
տավարս բոլ, որ ու դիշեր բանում եմ, չեմ բեղարում,  
տոն եմ գալի՛ են լուրիկ-մնջիկ կնիկն և զեմս յել-  
նում, վոնց վոր փիզը փորը քաշած վետացած հալ...»

«Բա են մեկելլ, Սոնեն, կրակ ու բոց ա, հասած  
խնձորի պես ա, խոսքն ու իրավունքն ել իրան ա...»

«Ախմախ Մուշեղ, վո՞նց ձեսիցդ բաց թողիր...»

Յեյ կինչ այնպի՛ս տահըի թվաց նրան, այնպի՛ս  
ստարոտի ու խղճուկ...»

Շտապով ճաշեց Մուշեղը, միանգամից մի քանի  
հաց կերավ։ Առա վարչից խմեց աղբյուրից նոր բեր-  
ված սառնորակ ջուրը, սրբեց թրջված բեղերը և զնաց  
սալտրին աչք տալու։

Յերեկոյան շուտ քննցին։ Յերբ Մուշեղը վերմակի  
հովը վերցրեց պառկելու, զամեստն անկողնումն եր  
արգեն։ Նա իգուր սպառեց, վոր ամուսինը դրկե իրեն,  
համբույրներով թրջե այրված թշերը, սակայն մարդը  
յերեսը հակառակ կողմը ըրծեց և սկսեց խոմբալ...»

Թող Համեստը կծկվի անկողնի մի անկյուն, մաշ-  
վի ու մղղնի, աչքերից խույս տա քունը, ու մնան ար-  
թուն հաղարակոր մտքեր, այրող ու չար մտքեր...»

## 2.

Համեստը չեր կարողանում Մուշեղի աշխատանքը  
կիսել այնպես, ինչպես դյուզի մյուս հարսներն եյին  
ողնում իրենց ամուսիններին։ Ֆիզիքապես ուժեղ, ժիր

ու շարժուն յերիտասարդին շատ դժվար եր ատրել այդ  
անկենդան աղջկա հետ և զրա համար ել նըանց ամուս-  
նական կյանքը հետզհետեւ պղտորվեց, մանավանդ,  
յերբ յերեխա չունեցան և ժամանակներն ու պայման-  
ները փոփոխվելով ավելի ևս կարիք զգացվեց աշխա-  
տող ձեռքի։

«Հսմէստը չըեր ե, —ասում եյին դյուզի կանայք,  
—մեջը թույլ, կոնելումն ուժի կոսր չկա, վո՞նց կա-  
րա երեխա ծնել...»

Ու յերիտասարդի սիրող կառնանում եր, յերբ  
տեսնում եր դյուզի մյուս հարսներին առույզ ու ժիր,  
ամեն մեկը փոքրիկ յերեխաներով շրջապատված, ժըպ  
տուն ու շարժուն։

Մուշեղի մայրն ել հավան չեր հարսին, վոչ դորձն  
եր հավանում, վոչ շարժ ու ձեւ։

«Հենց իմանաս չունչը պնչից դուրս ե գալի՛ են-  
պես և շարժվում, ել ինչ հարս, վոր չըեր ե, անսպառզ։  
Խեղճ երեխաս բախտը չբանեց։ Ուրիշների տանը մի  
քանիսն են ճլվում, իմ տանը մեկն ել չկա, վոր վրեն  
նայեմ ուրախանում։ Ոջախս մեռելատան և նման...»

Այդ բոլորը դիտեր համեստը և ահ ու գողով եր  
անցկացնում իր որը։ Ուտելին ու խմելը կարգին չեր,  
գուն ու գաղաք չուներ, մաշվում եր՝ աչքը միշտ հո-  
րանց տուն։

Հորանց գյուղն ել բակական հեռու, գնալ-գալն  
ուշուշ եր լինում։

Վերջին ժամանակներն ել Մուշեղը հակառակի  
պես հաճախ եր պատահում Սոնային։ Կարծես թե Սո-  
նան ճամբա յեր պահում նրան, վոր ողատահի, ցույց

տա ի՞ս գեղեցկությունը, վոր հիմա նա ել բատրակ Արշակի աղջիկը չի, վորին Մուշեղը մի ժամանակ լսյեղ չեր անում զեղամիջում հանդիսել, հիմի թող Մուշեղն երի, պատուալի, վոր պատկվեց համեստի նման չորացած—վետացած աղջկա հետ, մթամ թե իրեն պես զանդինի աղջիկն առավ, հիմի թող վայ տա զլիին...

Արեւ յերկնքից կրակե ասեղներ եր ցանում վար: Բզեղները գես-դեն եյին վազվզում մեծ հաճույքով վայելու արեկ չերմությունը: Յերկնքը միացել եր անտառների կանաչին և դարձել կապույտ մշուշ: Հընձած արտերում կաքալներն եյին յերամով շրջում ցորենի հատիկները պաղելու համար:

Գլախն ծիրանեգույն շոր փաթաթած, ու մազերի փնջերը ճոթերից առկախ, Սոնան ուտելիք եր տանում հնձորների համար:

Մուշեղն ել, վոր իր արտն եր գնում, հանդիսեց նրան հանդերի ճամբին:

— Սոնա՛, ինձ մոռացել ես, միտքդ ել չես զցում հեչ, — ասաց Մուշեղը կարելով նրա ճամբան:

— Մոռանալու կամ միտք զցելու ինչ հաշիվ ունիմ, դու ուրիշ մարդ, յես ուրիշ, — պատասխանեց Սոնան և փորձեց առաջ անցնել:

— Մոնա քիչ, քեզ ասելիք ունեմ:

— Ինչ պիտի ասես վոր, բա մի ժամանակ, յերբ զեղի զոռբան եյիր, բանչեղակա քաղցր չեյիր խոսում հետո:

— Են վախտն ուրիշ եր, Սոնա, հիմի ուրիշ, հիմի յես քյասիբացել եմ, դու զոռբա դառել:

— Հա՛, հա՛, — ծիծաղեց աղջիկը ցույց տալով իր ձերմակ ատամները, — քյասիբացել ես վո՞նց չե, զոռբա Մոսինի աղեն քյա՞սիր, որական քանի՞ գլուխ տավար ես դուրս բերում հանդ, քանի՞ լծկան անասուն, քանի՞ վոչչար... թիվ ու հաշիվ կա՞, հըմ, քյասիբացել ա խեղճը...

— Հիմի եղքան չկա, Սոնա՛, աչքիդ եղակն ա երեկում, անունս ելել ա, համա մեյդանումը բան չկա, քո աղիզ արե Սոնա ջան...

— Եղ վո՞ր որվանից քեզ համար Սոնա ջան զառա, բաս կնիկ ունեցող մարդն ուրիշ աղջկա հետ ջանով կիսո՞սի:

— Յես կին ունեմ, դրուստ ա, համա Սոնա ջան, ինչ քեզանից պահեմ աստծուց, աչքս ելի դու յես: Գիշեր-ցերեկ քու մասին եմ մտածում, սերս քեզ եմ զցել, իմ ջիգարն ես դու, Սոնա՛...

Մուշեղի դեմքը դարձավ հնոց դրած սղինձ, աչքերը պատորվեցին հուվունքից, ձեռները դողում եյին, ջանը կրակ եր լնկել այրում եր:

Մինչ Սոնան ժապում եր շարունակ և աչքի տակով նայում: Զգիտես այդ ժպիտը հեղնա՞նք եր արտահայտում, թե ինքնաբավականություն:

— Զե, Սոնա, դրուստ եմ ասում, յես իմ աղիզ արե: Մտել ես սիրոս, հանգիստ ու գաղար չես տալի...

— Բա ամոթ չի՞ կնիկ ունեցող մարդը խալիի աղջկա ճամբեն որը ցերեկով բանել ա, չի թողնում դնա, տեսնողն ինչ կմտածի:

— Հեչ մարդ ել չի տեսնի, Սոնա ջան, փախիլ մի, ո՞ւմ ինչ բան, թե քեզ հետ խոսում եմ:

— Իս քո կնիվկն ինձանից լավը չե՞ , ինչ պական էաբս և Համեստը, — պատասխանեց Սոնան և աչքերը խորամանկորեն գկոցելով ավելացրեց, — հիմի քիզ սպասում ա խեղճը, կարոտդ ա քաշում . . .

Յեկ առանց պատասխանի սպասելու, ճարպիկ վոստյունով թուավ Մուշեղի մոտից և արագությամբ շարունակեց ճանապարհը:

Մուշեղը բավական յերկար նայեց հեռացող աղջլուկան յետեկից, վորի ծիրանեդույն գլամշորը նշմարվում եր գեղնած արտերի արանքում :

«Վահ, տես վո՞նց ա ձեռք առնում , ծաղրում շան աղջլիկը, մթամ թե հեջ բանի նման չի կնիվս, ուզում ա թանգ ծախել իրան, համա յեթե իմը լինե՞ր . . . ե՞իս, յեթե իմը լիներ, ել գլխիս փափախին ծուռ ասող չեր ըլի, սարի պես թիկունքիս կկանգներ, ու ելի են Մուշեղը կլինելի . . .

Յեկ նա հանդարտ առաջ շարժվեց մտքերի ծովում :

### 3.

Երեխա չունեմ, վոր քոմակ անի ինձ, մերս ել պառակել ա, կնիկ ունեմ հեջ բանի պետք չի, չզիտեմ ինչ անեմ, իսկ նալողներն ել զուռում են, հա զոռում, տալիս եմ, տալիս, պլծնում չկա, նալաթ չար սատանին . . .

Տրոնջում եր Մուշեղը իր մոռ ընկերների շրջանում, յերբ նրանք կիրակի որերը հավաքվում ելին գյուղի մեյդանը զրուցելու: Ամեն մեկը նրանցից իր դարձն եր պատմում, բոլորն ել գյուղի նախկին ունեցողներից :

— Դրուստ վոր դժվար ա քո բանը, ախաղեր: Արշակն ել հիմի գեղսավետի նախագահն ա, քո հին բատրակը, քեզ լա՛վ կղզի . . .

— Հիմի խոսքը նրանց ա, մերը գնա՞ց . . .

Մուշեղը տուն եր գալիս հողնած, բարկացած, ու իր հերսը թափում եր կնոջ վրա: Մի բան պակաս լիներ, կովերն ուշ կթելին, կաթը թափվեր կամ տավարը սոված մհար, կինն եր մեղավոր, նա պիտի դառնար քավության նոխաղ . . .

Ամուսինն աչքերը լարում եր, բղավում, թքում և ամեն տեսակի հայհոյանքներով ներկում կնոջը: Աչքերը արտասուրով լցված կինը վեր եր կենում, գնում կծկվում եր տան մի անկյուն, թրջված հավի ոկոս ամքում :

Մայրը իգուր իրապում եր վորդուն, թե մեղք է, բավական ե այդտես չարչարի կնկան :

Ու մի անդամ ել, յերբ Մուշեղը հնձում եր իրենց տրախ, մայրը նախաճաշ բերավ և մայր ու վորդին նոսեցին արտի միջում մենակ կանգնած բաղմամյա թթենու տակ նախաճաշելու:

— Այտղա, բավական չե՞ կնկատ դաղիս, խեղճը լալով հալ ու մաշ յշղավ:

Մուշեղը լուռ եր և ախորժակով ծամում եր հացի պատառը :

— Ի՞նչ ես ուզում իմայն անասունից, — շաբունակեց մայրը վրդովված, — սրտովդ չի կնիկդ, ինչ արած, մեր նամուսն ե պիտի քաշենք: Իմ մարզն ինձ չի սիրում, ասում ա կինդ, աչքից զցել ա, ծուռ ա նայում, տրորում: Կամ թե չկամ մեկ ե նրա մոտ: Յերե-

սովու են տալիս, թե չըեր եմ, բաս յես մեղավոր ե՞մ, վոր աստված երեխա չի տալիս... ևալ ա, վոր երեխա չունեմ, կգնամ մեր գեղը, հորս տանը կաշխատեմ, հալբաթ մի կտոր հաց ձեռս կընկնի, կուտեմ, գենջ կաղըեմ, ել մարդուս գելու աչքերի նման հերառա աչքերը չեմ տեսնի: Թող խալիս մեղաղը նրան, վոր կնիկ ա բերում տուն, դաղըը չի իմանում, տանջում ա, ու վերջն ել ճամբրու դնում: Թող խալիսի մոտ խայտառակ ըլի, ասում ա, թե չենպես ումբս մաշվեց, որ ու արև չեմ տեսնում...

— Թող գնա, ձեռիցն ո՞վ ա բոնել, թե ուզում ա, — ասաց Սուշեղը ջղայնացած:

— Ամոթ ա, այ բալամ, վաս ա, թե լավ, մեր արուն ա, պիտի քաշենք, թողնի-գնա, խալիսին ինչ չուղար կտաս, ել գեղ ո՞վ աղջիկ կտա... .

Այս խոսքերը, սակայն, հազիվ լսեց վորդին, վորդին վերջացնելով նախաճաշը, նա վեր եր կացել և մանդաղը ձեռքին անցել աշխատանքի:

Թեև պառավի սիրար շատ եր կոտրվել, վոր յերեխա չունի Համեստը և ուրիշների նման առույդ ուժիր չի, բայց չեր ուզում կոխվ-զալմաղալ գցել տանը և խայտառակ մինել խալիսի մեջ: Տղի ասածն-ասած եր, արածն՝ արած, տամարը ծուռ, ջանով աղա, ինչ ուզեր՝ կաներ, յե՞րբ եր մոր խոսքին մտիկ ամիկ, վոր չիմի մտիկ տար:

Ու վշշալով, հառաչելով նախաճաշի մնացորդները փաթաթեց շորի մեջ և ուղղվեց գեղի տուն:

«Զհանդամը թե գնում ա, լավ ա, թող իր վոտովիր գնա, — մրթմրթում եր Սուշեղն ինքնիրեն՝ մեքենայի

արակությամբ շարժելով մանդաղը և ամեն մի զարկին մի բուռն հասկ պոկելով, — մի բան ել վրեն կտամ, մալից-տալիքարից, հաջաթ չի, թող փասափուտեն հարգաքի գնա, ինչ ուզում ա, թող անի, միայն թե ուեխը շտեսնեմ, թե չե, ախողեր, ել սիրում չեմ, խոմ զոռապի չի... .

«Բա ես ինչ բան ա, վոր ելի սերս գցել եմ Սոնային, որ ու զիշեր սրտում յեռում ա շան աղջիկը, հենց իմանաս թուղթ ու թալիսման են արել, ձեռ ու վոսս կապել... Համա ինքն ել ա ուզում, հա՛, թե չե, ինչի՞ միշտ սաստ ա դալի, ծիծաղում ա, կարմրում, քեֆը գալիս ա, վոր զըից եմ անում հետը... .

«Են որը յես ելի տեսա նրան ջաղացների մոտ. ելի խոսեցի հետը, ամելի սիրով եր, գու կին ունես, ասում ա, կին չունենայիր՝ ուրիշ բան եր... Ուզում ա տուել, վոր, յեթե կնիկդ թողնես, կարող ա գեղ առնեմ... Ախմախ սկիտի ըլի մարդը, գղմի գլուխ պիտի ունենա, վոր չլմանա, թե ինչ և ուզում ասել:

«Հե՛յ, հե՛յ, — հրճվում եր նա ինքնիրեն, ավելի ու ավելի թափի տալով մանդաղի զարկին՝ զեղսափետի նախազահի աղջիկը տունս կրերեմ, տո՛ւնս... թշերդ ուտեմ Սոնս ջան»...

4.

Մի կիրակի Հստեստի հայրն յեկալ աղջկա տեսության: Վերջերս շուշ-շուտ եր զնում-զալիս, վորով-հետեւ լավ զիտեր, վոր իր աղջիկը խորթ արարած և դառել Սուշեղի տանը:

Մի քանի անգամ խրատել ե փեսին, սպառնացել, բայց նա մնացել և անդիջում:

Նըս սիրութ քար ա, ափի ջան, բան չի ողի. քարի միջին հողի կա, նրան վոչ, ինչ ուղում ես ասա, նրա մոտ մեկ է: Ավելի լավ կլինի ինձ սալ-սաղ թաշեն, քան թողնես եստեղ: Ել չեմ կարող դիմանալ...

Աղաչում եր Համեստն իր հորը: Սակայն վերջինս հին որերի մարդ եր, ամոթի-արուոի տեր, նրա համար հետ չեր խալսի բերանն ընկնել, խայտառակվել:

Այս անդամ աղջիկն ալելի կարուեկ դրեց հարցը, թե՝ ափի ջան, յես ել եստեղ մնացողը չեմ, մի ճար արեք, ապատեք ինձ: Ել վո՞նց մնամ, յեր մարդս յես եսովս ա տալիս, թե յես անդեմք բան եմ, յերեխս չեմ կարող բերել, կնկա նման չեմ... ափի՛, լալս եր Համեստը ամոթից գեմքը ծածկելով, — բա ևս ասելու բան ա՞, բա յես մեղավոր ե՞մ, վոր ասոված երեխս չի տալիս... Զե՛, ափի ջան, իմ մարդն ինձ աստելով ասում ա, սերն ուրիշին ա զցել, զեղսավետի նախագահի աղջիկն առողջում, գիշեր-ցերեկ նրա մասին ա մտածում, քնի մեջ նրա անունն ա տալի:

«Յես ինձ կսպանեմ, եղ տեսակ մարդի հետ չեմ ապրի...»

Հայրն ավելի վճռական ու կտրուկ խոսեց գիեսի հետ և այս անդամ վերջինս պարզ կերպով հայտարարեց, վոր լավ կլինի բաժանվեն:

Սակայն Համեստի հայրը կողի ընկալ և եժան դը նով չղիջեց իր գիրքերը: Դես ընկան-դենը, ուրիշներն եւ միջամտեցին և բավական զալմաղալից հետո վճռեցին հարցը:

Մի կով, մի զոմչու ճագ, հինգ վոչխար և քառութ ցորեն տվեց Մուշեղը և ճամբու դրավ Համեստ-

կյուղում մի քանի որվա խսակցության առարկան Մուշեղի ընտանեկան կյանքն եր: Ամենքը քննում, վերուժում, հաստ ու բարակ եյին անում ինպիրը: Մի քանիսը թունդ կերպով հայհոյում եյին Մուշեղին, թե Մուշեղը անհամուս մարդ է, հարամ և այլն նրան աղջիկ տալը; ինչ աղջիկ, վոր գնա նրա տունը անբախտ կլինի, վայ կտա զլիին ու կհեռանա: Մի մասը լոկ քննադատում եր կատարված յերկութը, իսկ Մուշեղի բարեկամներն արդարացնում եյին նրա քայլը՝ պատճառաբանելով կնոջ չըերությունը:

Պառավ նանը տիրել եր և ամոթից չեր իմանում վո՞նց յերեա դյուզամեջը:

Թեև կնոջից բաժանվելը բավական թանգ նստեց Մուշեղին, բայց նա վստահ եր իր ուժերի վրա:

«Լավն են եր, վոր հոգիս ապատեցի, ասում եր նա ինքնիրեն, յարաբ Սոնան ուրախացել ա՞ թե չե: Հիմի ել կնիկ չունեմ, ել խանգարող չկա, հիմի յես ապատ եմ Սոնա ջան, աղատ ինչպես յերկնքի զուշ... Հիմի խոսքը քոնն ա, բախտիս բանալին ձեռքումդ ա, իմ աղիկ արև Սոնա ջան...»

## 5.

Մուշեղը վինտուում եր, վինտուում ու չեր կարողանում պատահել Սոնային, իսկ յեթե հանգիպում եր, զես մոտ չեկած՝ Սոնան փոխում եր ճանապարհը և արագ քայլերով հեռանում:

Մուշեղը չեր կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ առաջ շուտ-շուտ կարող եյին պատահել և խոսել, իսկ հիմա, յերբ ուղում ե սիրտը բաց անել Սոնային, մոտ չի դալիս...

Արդյոք ամաչում է Սոհան : Բա առաջ ինչո՞ւ չել  
ամաչում , չե՞ վոր առաջ Մուշեղի ձեռ ու վոտը կապած  
ել , չե՞ կարելի . հիմի իսո՞ւ Մուշեղն ազատ է , ինչո՞ւ  
պիտի ամաչի Սոհան վոր . . .

Մտածում եր, մտածում Մուշեղը, ու չեր կաբո-  
ղահում պարզել խնդիրը:

Աւղում եր Սոնայի ազգականների հետ խոսել,  
մարդ ուղարկել հոր մոտ, բայց վախենում եր վշաց-  
նել գործը, վորովհետեւ կարող ելին մերժել և առջողջ  
զյուղն իմանալով իր մտադրությունը՝ ծաղրի առար-  
կա պիտի զարձներ նրան :

Գյուղացիներից խմացավ, վոր Սոնան արդեն նշանած է ճարել, Բագվում բանվորություն արած և գյուղվերակարձած չոփուռ Սահակը, վորի հետ Սոնային շատ են տեսել քչիչալին...

Մթամ թե ընկերներին դյուր չեղակալս, վոր Սունան զոռքաների հետ զրույց է անում...  
Ցէլ էն

Յակ են որվանից եւ Սոնան վորխավել եւ, չի ուղում Մուշեղին տեսնել:

Այսպես խոսում ելին և Մուշեղը տանջվում եր,  
չեր իմանում ինչ անի; Ուզում եր պատահել Սոնային  
և անձամբ խոսել հետեւ պարզելու համար բոլոր լսած-  
ները; Զեռները շալվարի գրպան՝ չափում եր գյուղի  
ամբողքը, մալուլ աչքերով շուրջը նայում; Մուայլ  
ամպ եր իջնում հոգուն, յերբ վերաբանում եր ձեռ-

Նունայն : Առաջ ճաշում եր, մոր հետո եր քիչ եր խոսում :  
Երբիկունները նստում եր տան առաջ՝ ձգված հաստ զե-  
րանին, ձեռն յարեսին՝ նայում ինչ վոր տեղ : Հետո  
զալիս եր ու փոփում անկողնի վրա, խոժքում մինչև  
խռածագութ :

Մայրը ձեռները կցում իրար, վշպչում եր ինքն-  
իրեն. «Աչխարքը խարար յեղավ, մեր գործերն ել թարո-  
ւն զնում: Մեր գյուղալլում հողերն առին, նալոց-նալո-  
ղի յետեից զալիս ա, հարսն ել տնից զնաց, եսուեռ  
մնացել ենք բարիշան: Տղես միշտ թթված ա, միտք և  
անում իմ իմեզ, արեսոտ տղեն, մի լավ, զոշախ հարս  
բերեմ, քոմակ անի, ուրախություն դցի տունս»...»

6

Ահասասները գեղնել են աշխան ներկից։ Տերհները  
խցառում են և վողբում իրենց մահը։ Տերհներն իրենց  
դիլքերը լքելով հանձնվում են քամուն, վոր քշում և  
նրանց իր ուղած տեղը։ Արտերի գեղնությունը տեղի  
յե ավել սկին, մի հուժկու ձեռք նրանց յերեսը չանկուել  
և ակոս առ ակոս։

Յերեմի գորշ վերաբկու յե հաղնում յերկնինքը,  
յերեմի ել արեի շատ ցուքերով վսուկեռովում :

Հնձվորների ուլախ յերգը վաղուց հանդակ թշում՝  
ների իրա :

իսկ վերաբերյալ առաջ մտնելու աշխարհում, գլուխ է այս թագածը մասնաւողի մեջ:

Գյուղի աղջիկները կչկչալով անցնում եյին կժեռով բենավորված, բոթբոթով իրար և քրքջում ուշախ:

Մուշեղի ականջին զնդում եյին այդ արծաթյա քրքիջները և նա մռայլվում եր, հոգին ամպերով ծածկվում: Ա՛խ, յեթե Սոնան լիներ այնտեղ, նայեր նրա սեռկ աչքերին, սիրով բաց անե՛ր...

Յանկապատի արանքից ճանապարհը ցույց տվեց իր սմայի, գորչ գեմքը:

Կանաչաղուրկ ծառերը կանգնել եյին վորբացած և նրանց շուրջը մութ սովորներն եյին սովորկում:

Մուշեղը փայտյա ցցերի շուրջը ճյուղերով հյուսեց, հետո դուրս յելավ այլուց՝ ամրացնելով ցախերեց շինված դուռը:

Ծիրանեղույն գլխաշորը պատկերվեց ճանապարհի մթեշաղում և Մուշեղի սիրով խփեց մուրձի պես:

Կողեց Սոնայի ճանապարհը, հուղմուհքից հաղիվ եր շնչում:

— Սոնա, ո՞ւր ես, ա՞յ անաստված, կարստիցդ այլվեցի, ել հալ չմնաց...

Սակայն աղջկա գեմքը մռայլ եր, աչքերը բարկության կրակով այրվում եյին:

— Ել հիմի յես կին չունեմ, վոր պատճառ բոնես, հիմի աղատ կարող եմ խոսել քեզ հետ...

Բայց խոսքը Մուշեղի բերանում կիսատ մնաց: Սոնան ուժգին շարժումով հրեց նրան մի կողմ և ցասկոտ շեշտով ասաց.

— Գնա՞յ, անհամուս, ժամանակի հետ ուզում ես շապիկդ փոխե՞լ, յես զոռբաների հետ գործ չունեմ...

Յեվ արագ քայլերով չարուհակեց ճամբան: Իսկ ի՞ւցիդր գլխին ծանր հարված ստացող մարդու պես շէկվոծ՝ մեխվել մնացել եր տեղն ու տեղը ու չես իմտհում ինչ անի...

1928.

## ԱՐԵՎ ԱՂՋԻԿԸ

Արեկի պես պայծառ աղջիկ եր Մարոն, դեմքին գարնանային թարմություն, քայլում եր թեթև ինչպես զեխյուն ե սահում, աչքերի մեջ միշտ ժպիտ կար, հուրհրան ժպիտ:

Նրանց սեյակն եյի վարձել անսկացնելու համար ամառվա արձակուրդս: Կանաչագեղ բլուրի լանջին, ծառերի արանքում փեթակի պես նստել եր իմ սենյակը բարձր-բարձր սյուների վրա:

Պատշգամբից մի հիանալի տեսարան ե բացվում: Ներքեն ափսեյի պես հովիտն ե, կանաչագեղ հովիտը, վորի միջից անուշ խշոցով հոսում ե լեռնային վտակը՝ արծաթե յերիզի պես պսպղալով ծառերի արանքում: Վերև լեռներն են ձգվում, անտառածածկ լեռները և կապույտ մշուշի պես յերկինքն ե իջնում նրանց վրա ու ինչպես լուսաշաղախ աչք՝ շարունակ քեզ ե հետեւմ ու ժպտում:

Պատշգամբիս տուաջ մի փոքրիկ, մարդաշատ պուրակ, ծառնորով յեղերված, թագկատարած ծառերը կարծես աղոթում են կամ ինչ վոր դյութական մտքից մեխիված՝ սպասում ինչ վոր բանի:

Բլուրն ի վեր վայրի կակաչներ, նարգեսներ և ապրեմ-չապրեմներն են պսպղում, ապրելումն ժապավենի պես ձղվում խոտերի մեջ:

Քիչ հեռու տանտիրոնց քարաշեն տնակն ե, փոքրիկ լուսամուտ-աչքերով, բակում հաստ գերաններ կան դարսած, վորոնց մոտ սպիտակամորթ, ճակատին ու բաշ շունը կողքին թափալել ննջում ե:

Մարոն աղբյուրից մի դույլ ջուր բերավ և յեկալ սենյակս մաքրելու: Նրանց տանը վոչ վոչ չկար: Տղամարդիկ գնացել եյին հանդ, իսկ մայրը կաթ ու ձու յեր տարել յերկույիրեք վերստ հեռու գտնվող բազարում ծախելու:

— Մարհ, այսոր ինչո՞ւ մայրիկիդ հետ չես գնացել բազար:

— Յերբ մորս բեռը շատ ե լինում, գնում եմ չետը այսոր քիչ եր, դրա համար ել չգնացի, — պատասխանեց Մարոն կենսուրախ և թրջելով լաթն սկսեց մաքրել սենյակս:

Հագել եր կապտավուն շրջազգեստ, վորի տակ վետվետում եր նրա լիքը կուրծքը: Բնությունը նրան պարզեց եր մի փարթամ, գեղաշեն մարմին՝ ներդաշնուկ գծերով ու ձևերով:

Նայում եյի նրան հիասքանչ, ինչպես նայում ես տաղանդավոր նկարչի նկարին:

Հենց յեկած որից մենք մտերմացանք իրար հետ և խոսում եյինք ազատ՝ ինչպես վաղեմի ծանոթները.

— Յերբ պիտի մարդու գնաս, արդեն հասունացել ես, Մարհ:

— Հեշ ել չեմ գնա, եսպես ավելի լավ ե, — ասաց նա և վոտով թաց շորը տրոբելով հատակին՝ իր կյանքով ու լույսով լի աչքերը հառեց ինձ վրա:

— Իսկ դու ինչո՞ւ չես պսակվում, քո մասին չես մտածում, իմ դարդն ես քաշում:

Ի՞նչ, յես ծերացել եմ; ինձ ով կտոնի:  
 — Ծերացել ես, խե, խե, —քրքջաց Մարոն լիա-  
 թոք, —քանի տարեկան ես:  
 — Քո կարծիքով քանիսը կլինեմ:  
 — Շատ-շատը քսանհինգ-քսանվեց, չե՞:  
 — Այդքանը հազիվ լինեմ, Մարոն, բա դաշատ չի՞:  
 — Դա շատ լավ տարիք ե, թեև մեր գյուղում եղ  
 հասակի մարդիկ արդեն մեկից-յերկու յերեխա ունեն:  
 — Դրա համար եմ ասում, վոր ծերացել եմ:  
 — Դե վոր եղպիս ե, շուտ պսակվիր, վոր չծե-  
 րանան, —բացականչեց Մարոն և նորից թրջեց շորը:  
 Մի անգուստ սարսուռ սահեց մարմնիս մեջ, բըռ-  
 նեցի նրա թեը և փորձեցի համբուրել: Նա կամացուկ  
 հրեց ինձ մի կողմ և անաց.  
 — Հը՛, եղ ինչեր ես անում, հերս վոր տեսնի  
 կտոր-կտոր կանի քեզ:  
 — Հորիցդ չեմ վախենում, Մարոն, վանոյիցն և մ  
 վախենում միայն, քո սիրելի Վանոյից... —պատաս-  
 խանիցի յես հեգնանքով:  
 Մարոյի աչքերը լրջացան և շողացին չարախինդ:  
 — Բաս ինչ, Վանոն քեզանից դոչադ ե, կարող  
 ե մի ձեռքով քեզ գեաին գլորել:  
 — Հը՛մ, Վանոյիդ շատ ես ուսեցնում, նա ի՞նչ  
 ուժ ունի վոր, ծափ պես վախկոտ, յեթե վրա տամ,  
 ով գիտե մինչև մեր փախչիր...  
 — Հոյ, հոյ, շատ մեծ կարծիք ունես քո մասին,  
 քաղաքացին գյուղացուց ավելի ուժ ունենամ. յես կա-  
 րող եմ քեզ զլորել, ուր մեաց Վանոն:  
 — Դե փորձիր, յեթե կարող ես, ուժդ ցույց  
 տուր մի տեսնեմ:

Ու մոտ գալով պատրաստ կանգնեցի նրա առաջի  
 Մարոն առանց տեղից շարժվելու՝ շեշտակի նա-  
 յում եր ինձ շափյուղա քարերի պես պսպղացնելով  
 աչքերը, վորոնք կամարակապ իջնում ելին ել ավելի  
 շքեղացնելու նրա գեմքի գեղեցիկ գծերը:  
 Մի պահ սպասողական զրություն: Հանկարծ  
 Մարոյի թեհերը փաթաթված զզացի մեջքիս և մի  
 ուժգին հարված ինձ մղեց դեպի թախոը և գլորեց  
 նրա վրա:  
 Սպա լսվեց արծաթահնչյուն քրքիջ, լիաթոք ու  
 յերկարաձիգ...  
 Մարոն եր դա, վոր հաղթանակ տարած զինվորի  
 ոկես, մի քանի քայլ հեռու, ձեսները կողքերին հենած,  
 նայում եռ ինձ ու քըքջում:  
 Յեկ յերբ յես փորձ արի ցատկել դեպի նա,  
 դուրս թռավ սենյակիցս ու փախսավ՝ ինչպիս յեղջեւ-  
 րուն ե փախչում նետահալած...

\* \* \*

Յերեկոյան գյուղի շրջակայքը յուրահատուկ զրավ-  
 չություն ունի: Անտառների կանաչն ավելի յե մթ-  
 նում: Տերեներն անշարժվում են ու դառնում անլու-  
 ծելի առեղծված: Ինչ վոր շշուկներ, անմեկնելի սույ-  
 լեր են լսվում, կարծես թե բնությունը մեղմիվ շըր-  
 շյուններով ու մեղեղիներով պատրաստվում ե նինջիւ:  
 Բլուրներից նախիրն ե իջնում փոշեթաթախ ու  
 հոտաղները ձես են տալիս իրար ամեն կողմից:  
 Տանտիրոջա բակում իրարանցում ե, կովերն են  
 կթում, շներն անգամ ձեռ ու վոտ են ընկել, դես ու

դեն են վազվում, պոչերը շարժելով՝ հողը հոտոտում, քաշշվում, չարաճճի խաղեր սարքում:

Տանտիրուհիս, Մարոյի մայրը, մի բարձրահասակ, բարի աչքերով կին՝ հորթերին դես ու դես և քշում ու խրատում: Հանդից վերադառնում են Մարոյի հայրն ու յեղայրը, հայրը մի աժդահա-դեմ մարդ, յեղանն ուսած, յեղայրը տրեխավոր, ջահել տղա:

Մարոն մի շիշ կաթ և բերում, դնում սեղանիս ու հեռանում խկույն: Զբաղված ե, ժամանակ չունի խոսելու հետո: Մթնշաղի մեջ մի պահ պատկերվում ե նրա գեղանի մարմինն ու կրկին ձուլվում մթնշաղին:

«Վորքմն լավիկն ե այդ աղջիկը...» մտածում եմ ու պոկում մինչև պատշգամբիս ճաղերն իջնող տերեները, պոկում եմ ու տրորելով զցում նիրքե:

Յերկնքի լանջին մի քանի լուսաշող շերտեր կային, վորոնք մարում են և արծաթափայլ աչքերով աստղերը մեղմիվ ժպտում են տերեների արանքում, ասես ընկել են մի սքանչելի, հեքյաթական աշխարհ:

Նստել եմ ու մտորում եմ, հոգուս վրա մի անոռոշ թախիծ ե իջել, մենակ եմ զգում ինձ... Այս, յեթե Մարոն քովս լիներ, բայց նա յերևի զբաղված ե տան գործերով, իսկ յես սիրտ չեմ անում կանչել: Վերեի տան պատշգամբում տնուշ հնչյուններով ոկսեց նվազել կիթարը, տանտիրոջս տան լույսը հանգեց, ծերերը քննեցին, իսկ Մարոն ու յեղայրն իմ պատշգամբի մոտով անցան ու բարձրացան վերև, նվազի կողմը:

Հետո լսվեց կանացի քրքիջ, դա Մարոյի ճայնն եր, այնպես զի՞ւ դյուրեկան... Տղամարդիկ ու կա-

նայք սկսեցին յերգել կիթարի նվազակցությամբ: Այս հեռավոր հովառում, շշուկներով ու շրջյուններով լի այս գիշերում, դա մի հրաշալի համերգ եր, վոր մերթ տիտոր, մերթ ուրախ հնչյուններով ցրվուա եր անտառների մեջ:

Թախիծն ավելի կուտակվեց հոգուս վրա ու մենակությունն իր բովանդակ ուժով ձնշեց ինձ: Մի անսահման ցանկություն զգացի՝ բարձրանալ վերև ու միախառնվել այդ յերգին ու քրքիջին, բայց պառկեցի պատշգամբում զրված թախտին, ձեռքս վորպես բարձ զրի գլխիս տակ, ու նայեցի աստղերին, վորոնք բոլորն ել վողջուննեցին ինձ լույսով ու ժպիտով, և անուշ, դյուրեկան զեփյուռը, վորտեղից վոր ե, թռավ շոյեց զեմքս ու տերենների միջից անելով փախավ գնաց:

Զգիտեմ վորքան ժամանակ անցավ, յերազի մեջ եյի, թե արթուն, ականջիս դիպավ կանացի մի քընքույշ ձայն:

— Վանո՞...

Ու յերկու-յերեք մարդկային ստվեր անհայտացան ծառերի արանքում:

Դա Մարոյի ձայնն եր և այնպես խոր, այնպէս սուր արձագանքեց սրտում: Վեր թռա պառկած տեղից՝ մարմինս սարսուռով պլկված, ականջ զրի բոլոր ձայններին ու հնչյուններին, բայց լուռ եր շուրջու:

Այլսս կիթարը չեր նվազում ու մարել եյին աղջիկների քրքիջները. գյուղը ննջում եր խաղաղ: Միայն առվակն եր չգիտես հում և ինչո՞ւ համար քրքջում հովառում, թերերը շփշփում ու խանգարում համստարած լուսթյունը:

Պառկեցն քննելու, բայց յերկար ժամանակ քունս  
չեր տանում,

\* \*

Պառկել եմ անտառի խորքում կոնակիս վրա, մի  
ծերացած նոճի հովհարին տակ, աչքերս հառել տե-  
րեկների միջից պատկերվող յերկնքին: Արդյոք կմ ա-  
վելի անմեղ հայացք, քան այդ համատարած կա-  
պույտը:

Պառկել եմ ու սպասում Մարոյին, վոր պիտի գա-  
գնանք յելակներ քաղելու:

Շուրջս այնպես խաղաղ ե. վոչ մի տերև չի շարժ-  
վում: Ծառերն արեի վոսկեփրփուր շողերով զգեստա-  
վորվել կանգնել են, միտք են անում կամ ընկել են  
անուրջների գիրկը:

Մի ինչ վոր համապարփակ խաղաղություն ե տի-  
րում, բոլորը խորհրդավոր կերպով սպասում են մի  
ինչ վոր խորհրդավոր բանի:

Յես ել եմ սպասում այս համապարփակ անդոր-  
րության մեջ...

«Հիմա անտառի կանաչ մշուշում կպատկերվի ա-  
րև աղջկա կապույտ շրջադիմութեան...»

Այսպես անցնում են շատ վայրկյաններ:

Շը՞փ, ներքեւ ընկալ մի չորացած ճյուղ, անտա-  
ռը սրսփաց մեղմիվ ու տերեները՝ մատնահարվեցին  
կեփյուրի շունչով:

Ծառերի արանքում պատկերվեց կապույտ շըր-  
ջազգեստը...

Սիրտս բաբախեց ուժգին, կարծես բաբախեցին  
բնության յերակները բյուր, ու բոլորը մեկից դար-

ձյալ լուսթյուն դարձած՝ ունկնդրեցին ինչվոր դյու-  
թական յերաժշություն:

— Քեզ փնտուելով մեռանք, իսկ լու այսուեղ  
նստել ես հանգիստ, — բացականչեց Մարոն մոտ վա-  
զելով և աչքերի հրայրքը թափելով վրաս, -- չես կա-  
լիս յելակներ քաղելու:

— Գնանք, — կանչեցի ուրախությամբ և հետևեցի  
նրան:

Քիչ հեռու, ծառերի արանքում, կանգնել սպա-  
սում եյլն յերկու աղջիկ և վանոն:

«Հըմ, ահա թե ում հետ ե յեկել...» մտմտացի  
ինքս ինձ ու տհաճությամբ ընդունեցի նրա բարեց:

Դա միջահասակ, թիկնեղ, արեառ դեմքով, ա-  
մուր կազմվածքով մի տղա յեր: Հարգանքով եր վար-  
վում հետո և պատրաստ եր կատարել իմ բոլոր հանձ-  
նարարությունները:

Նրա մասին վաղուց եյի լսել գյուղում, վոր միտք  
ունի Մարոյին առնելու...

Մենք շարժվեցինք սարն ի վեր անտառի միջով,  
մեզ դիմավորում եյին վոսկեցող տերեներով քողավոր-  
ված նոճիները՝ փարթառ ու սեգ և նրանց արանքում  
ճիված հասարակ ծառերը, վորոնք իրենց նիհար թե-  
վերը յերկարում եյին արմի շողքը փնտուելու:

Առջեց գնում եր Մարոն, յեղջերույի պես թե-  
թե, արևոտ աղջիկը:

«Ախ, յեթե նա իմը լիներ, իմը...»

Մտածում եյի ինքս ինձ ու նայում կողքիս քայ-  
լող վանոյին, վորին ատում եյի լսեղություն չափ, ա-  
ռանց իմանալու, թե ինչո՞ւ...

«Արդյոք Մարոն սիրում ե, թե դա պատահելու թյան անմեղ զգացմունք ե միայն, վորովհետեւ առանձին համակրանք ե տածում դեպի այդ տղան»:

Ու բարձրանում ենք զարիվելը, անտառին խոմ վերջ ու վախճան չկա, բարձրանում ենք, հայ բարձրանում:

Ներքեց թվում ե, թե ահա շուտով կհասնենք գագաթը, բայց հասնում ենք մի փոքրիկ, հարթ տարածության և նորից աժդահա հասակովը մեր դեմն ե յենում սարը,

Մի մարգածածկ բացատում հանգստանում ենք: Մարոն նստում ե, ավելի շուտ փովում ե կանաչի վրա, լիալուսի պես բոլորակ դեմքը շիկնել ե, իսկ աչքերում այրվում են բոցավառ կրակները ջահելության...

— Հոգնեցի՞ր, — հարցնում ե նա ժպտալով:

Մյուս աղջիկներն ինձ են նայում զննող հայցքներով: Մեկը նրանցից շիկահեր, կապուտաչյա, փոքրիկ աղջիկ ե, մյուսը բարձրահասակ, թուխ յերկար յերեսով:

— Քաղաքացիք շուտ են հոգնում, սարերի ճամբին սովոր չեն, — ասաց վանոն:

Յես գժգոն նայեցի նրան, եղ գյաղեն, եղ, եղ գեղացի գյաղեն...

Քիչ հետո Մարոն վեր ե թռչում ու վազում բացատի յերկայնքն ի վար: Յես հանդարտորեն հետեւում եմ նրանց:

Բացատի մի կողմը բացվում ե անտառածածկ մի շքեղ հովիտ: Իջնում ենք, շատ խորը չե, մի նիհար

առվակ մեղմիվ խոխոջելով ներքեւ ե սահում, խոնավ ու սառն ողը շոշափում ե մեր յերեսները:

— Այստեղ յելակներ շատ կան, — ասում ե ինձ վանոն:

Զեմ պատասխանում, վոչինչ նրա համար, թե բանի տեղ չեմ դնում:

Մեր խումբը ցրվում ե անտառի զանազան կողմերը: Յես ու Մարոն միասին ենք: Քաղած յելակներն ուտում ե, շատ մասը լցնում մի փոքրիկ զամբյուղի մեջ: Բոլորն ել մեծ ու փոքր զամբյուղներ ունեն, իրենց հետ բացի ինձանից:

Յես ոգնում եմ Մարոյին, վորպեսզի նրա զամբյուղը լիքը լինի:

— Մի քանի զամբյուղ վոր ծախեմ, մի զույգ գուլպա կզնեմ, — ասում ե Մարոն:

— Միթե այդքան թանգ են գուլպաները:

— Յես ուզում եմ լավ գուլպաներ ունենալ վիկտորիա տեսակից, — ավելացնում ե նա հպարտ:

— Յես քեզ համար մի զույգ կզնեմ, Մարո...

— Քո զնածը յես չեմ ընդունի, տուր քո սիրած աղջկան...

— Յես դեռ վոչ վոքի չեմ սիրում, վոր նվիրեմ, բայց քեզ համար անպատճառ կզնեմ:

— Ինչո՞ւ ինձ համար, մեր մեջ սար կա, մենք ուրիշ մարդիկ ենք:

— Դու շատ լավն ես, Մարո, քեզ շատ եմ հավանում...

Մարոն կանգնեց ուղիղ, նայեց շուրջը, ընկերները բավական հեռու եյին, աչքերը կասկածով լի կենտրոնացրեց վրաս և ասաց.

— Ետ խոսք ե, լեզվի խաղ, դու ինձ իսկի չես  
կարող սիրել:

— Ինչո՞ւ չեմ կարող, քեզ պես սիրուն աղջիկ,  
չենց սրտովս ես, վոր կաս:

— Եթ, խե...—քըքջաց Մարոն, —լավ ես ձեռք  
առնում, բա քաղաքում պակաս սիրուն աղջիկ կա:

— Ե՞ս, նրանց սիրունությունը կեղծ ե, Մարոն.  
մինչ դու բնականից սիրուն ես, անազարտ սիրուն...

— Ելի գլուխս յեղում ես, իսկ յես հարմար եմ  
քեզ, մտածիր քիչ, —պատասխանեց Մարոն լուրջ կեր-  
պով:

— Ինչո՞ւ հարմար չես:

— Այ, տեսամբ, վոր ճիշտ չես ասում, յես դյու-  
դում մեծացած տպետ, զռեհիկ աղջիկ, բա քեզ հար-  
մար եմ...

— Ե՞ս, Մարո, եղ չի հարցը, տղիտությունը կա-  
րելի յե վերացնել, թող մի վանոն չլիներ, վոնց կը-  
սիրեյիր...

— Վանո՞ն, —տաքացավ նա, —բաս Վանոն ավելի  
հարմար չի, նա ել ինձ նման անուսում, զեղացի  
մարդ.

— Հենց եղ ե, դու նրան շատ ես սիրում, յեթե  
նա չլիներ, ինձ կսիրեյիր, Մարոն...

Նա գլուխը թափահարեց, դեմքի գծերն ամփոփ-  
վեցին, լրջացած աչքերը խոնարհեց և մնաց լուս:

Այլա առաջվա թափն ու աշխուժությունը չու-  
ներ Մարոն: Ցերք արեն իջավ լեռան կռնակը և մենք  
քայլերն ուղղեցինք տուն, ամրող ճանապարհին վոչ  
վոքի հետ չխոսեց, կարծես թե մաքերը գրկել տարել  
ելին նրան ուրիշ տեղ:

Մենք բաժանվեցինք իբարից և սենյակս գալով  
հոգնած մարմինս ձգեցի անկողնիս վրա:

«Միթե այդպիս պետք ե խոսելի նրա հետ...»

Մտածում եյի ու չեյի իմանում, թե ինչո՞ւ աղ-  
պիս խոսեցի...

\* \* \*

Այսոր տոնական որ ե և գյուղացիների մեծ մա-  
սը գանագան ուտելիղներով բեռնված գնացել ե բա-  
ղար: Մարոյինց տանեցիքն ել են գնացել:

Արել գես նոր եր վոսկեծամ զլուխը զուրս հա-  
նել լեռների արանքից և իր վարդագույն շողերը ցան-  
ցնել անտառների վրա, յերբ վեր յելա:

Յեղանակը հիանալի յե: Ամբողջ բնությունը  
ցնծում ե իր հրաշալիքներով: Ապակու պես ջինջ ողն  
այնքան թարմ ե ու զով, վոր լիուլի շնչելով չես կըշ-  
տանում:

Իջա ներքեկի աղբյուրը լվացվելու, սառնորակ  
ջուրը թարմացրեց ինձ և յես ինձ զդացի հզոր ու  
կայտառ:

Զարմանալի կերպով փոխվել են գյուղացիք, մեծ  
սասը լավ հագնված, աղջիկներն ու հարսները մանա-  
վանդ թանգարժեք շորերով զուգված:

«Արդյոք յերբ կվերադառնա բազարից արեստ  
աղջիկը, տեսնես նա ել այսպես զուգվել ե...»

Մտածում եմ և առանձին կարոտ զգում գեղի նա:

Արդյոք սիրում եմ նրան, յես ինչ գիտեմ:

Յեթե այդ պահին կողքիս լինեյին իմ ընկերներն  
ու մոտիկ ծանոթները, դարձյալ նրա կարոտը պիտի  
քաշեյի, արեստ աղջկա կարոտը:

Վերադառնում եմ սենյակս, թեյում եմ ու ձըգչ  
փում թախտիս, ձգվում եմ թախտի վրա ու մտորում:  
Արդյոք նրա մասին չեմ մտորում...

Սրեց բարձրացավ ու նստեց բլուրի ծերին հրե-  
ղին ջանի պես շողջողալով, մի ինչ վոր թռչուն մոտա-  
կա ծառի վրա ճռվողում եր շարունակ, հյուսելով մի  
անուշ դայլայլ և յես լսում եյի նրան, հետեւմ արեի  
հաղթական վերելքին ու մտորում:

Լուսամուտիս մոտ զբնգաց արե աղջկա ձայնը և  
յես վեր թռաւ:

— Ինչ ես մեն-մենակ նստել փեքը անում, յեկ  
գնանք գյուղամիջը ման գանք, — առաջարկում ե Մա-  
րոն զվարթերես:

— Ե՞ն Մարո, յեկ նստիր կողքիս, քիչ խոսենք:  
Զարմանալի կերպով փոխվիլ եր Մարոն: Սպի-  
տակ շրջազգեստ ուներ հազին, վոր համաշափորեն  
նստել եր նրա մարմին, վոտներին լավ գուշ-  
պաներ, մազերը հարդարած գլխին, յերեսին պուրա-  
քսած..., Յերբեք չեյիր կարծի, վոր դա գյուղի աղ-  
ջիկ հի:

— Այսոր շատ գեղեցիկ ես հազնվել, Մարո, — ա-  
սացի վոտքից գլուխ չափելով նրան:

Նա մի նազանի շարժում գործեց և նայեց վոտ-  
ներին, կարծես, ուզում եր ցույց տալ, թե վորքմն  
սաղում են նոր գուլպաները:

— Ես նոր շրջազգեստն ու գուլպաներն այնպէս  
են սազում քեզ, — կրկնեցի գովքս:

— Լավ, շատ մի գովի, թե չե աչքով կտաս, —  
պատասխանեց Մարոն ու նստեց կողքիս:

Յես մեղմիվ զրկեցի նրա իրանը և փորձեցի համ-  
բուրել, բայց նա արագությամբ դուրս թռավ զրկեցս,  
կանգնեց դռան մոտ և լուսափայլ աչքերը հառեց վրաս:  
— Զուր տեղ մի գժվի ինձ համար, միենույն ե,  
կդնաս քաղաք կմոռանաս:

— Ե՞խ, Մարո, լավ չես ճանաչում ինձ:  
— Քաղաքացիք միշտ եղակս են, մի որ սրան  
են սիրում, մյուս որը նրան: Եղանս են քաղաքացիք...  
— Ե՞ն, Մարո ջան, լավ չես ճանաչում ինձ,—  
կրկնեցի յես ու փորձեցի նորից զրկել նրան:

Բայց փախավ ինձնից և ճերմակ թռչունի պես  
թևեց դեպի տուն:

Արդյոք ինչպես պիտի վերջանա այս հրաշալի  
հովկերգությունը...

Գնում եմ գյուղամեջ մի ծանոթ ընտանիքի մոտ  
ճաշելու: Ճաշից հետո գալիս եմ տուն: Տանտիրոջս  
գուռը փակ ե, նստում եմ գեպի սենյակս տանող ճամ-  
բի յեղերքին ընկած հաստ գերանի վրա: Այդ ճանա-  
պարհը մի գեղեցիկ ծառուղի յե, այնտեղից յերեւում ե  
ամբողջ հովիտը:

Որվա պայծառությունը կամաց-կամաց մարում  
ե, լույսերն ու գույները մկուսմ են աղոտնալ: Վեր-  
ջալույսի շողերը մարմրում են, բեկրեկվում, յերկնքի  
յերեսին վարդագույն կամարներ կերտում: Ծառերի  
արանքում ստվերներ են հավաքվում ու կամաց-կա-  
մաց կուտակվում:

Դյուղի կենտրոնից թնդացին ցնծության ձայ-  
ներ, նվազում եյին, շվի ածում:

Ճերմակ թռչունը հայտնվեց ծառերի արանքում,  
յեկավ ու նստեց կողքիս:

— Եղ ինչ յերգ ու պար ե գյուղամիջուս, Մառո, բա դու թողեցիր յեկար:

— Գիտեյի, վոր մենակ ես, զբա համար ել յեկաքեղ մոտ, — պատասխանեց Մարոն քնքշորեն:

Ինձ շատ գյուր յեկավ այդ և չգիտեյի ինչպես շնորհակալություն հայտնեմ:

Այնուհետև մենք խոսեցինք շատ ու շատ բաների մասին: Նա հարցեր եր տալիս քաղաքի, իմ գործերի ու կյանքի մասին, և առանձին հետաքրքրությամբ ու հաճությամբ լսում եր:

Իրիկունն իջավ և մութ վարագույրով ծածկեց ամեն բան: Գյուղամիջի յերգն ու նվազն ավելի ու ավելի աշխուժացան:

Ծառերի արանքում պատկերվեց մի մութ ստվեր: — Հը՛, Վանո, եղ դժւ յես, ինչ ես ուզում, — հարցրեց Մարոն առանց տեղից շարժվելու:

— Յեկել եմ, վոր գնանք գեղամիջ: — Յես չեմ գա, դու կարող ես գնալ, — կարուկ հայտարարեց աղջիկը:

Մութ ստվերը մի պահ կանգնած մնաց և ինձ վրա զգացի նրա աչքերի թունոտ փայլը: Հետո անհետացավ խավարի մեջ:

— Ինչժւ չգնացիր Վանոյի հետ, հիմի նա կնեղանա, — հարցրի յես յերիտասարդի հեռանալուց հետո: — Ինչժւ պիտի գնամ վոր, հրամանատարս ե, ինչ ե:

— Բա, դու ել չես սիրում Վանոյին: Մարոն չարացավ.

— Յերբ եմ սիրել, վոր հիմի սիրեմ, թող գնա իր բանին:

Ապա աչքերի չարությունն անցավ և մի հրայրքուտ ճառագայթ շողաց այնտեղ:

— Իսկ դու խոսք կտամ, վոր չես դավաճանի նորան՝ ում սիրում ես... շնչաց Մարոն մեղմիվ և սըղմիցից ինձ՝ հաղորդելով մի ախորժելի ջերմություն:

Փորձեցի համբուրել նրան, բայց սիրտ չարի, վախենում ելի, վոր ծնողները վորտեղից վոր ե կվերադարձան:

Իսկ զիշերը սահում եր, սույլերով ու շնուկներով և զիշերը:

\*

Թեև դով և հիանալի գիշեր եր, բայց յիս չկարողացա կարողին քնել: Հաղարավոր մտքեր գալիս խոտանակում ելին իրար, չարշարում ուղեղս ու մնում անշանձելի:

Առավոտ վաղ վեր յելա, գնացի գյուղից դուրս ու շրջազայեցի աննպատակ: Իրիկնապահին, յերբ վերադառնում ելի տուն, գյուղամիջի փոքրիկ հրապարակում հանդիպեցի վանոյին, վոր մի քանի ընկերների կում կանգնած խոսում եր: Նա մուեղին հայացքով ինձ հետ կանգնած խոսում եր: Նա մուեղին հայացքով ինձ հայում և չպատասխանեց բարեիս: Ինչ վոր փըսեր վասաց ընկերների ականջին ու բացորն ել հետաքրքրությամբ զարձան դեսլի ինձ, կարծես քայլերս ելին թյամբ զարձան դեսլի ինձ, կարծես քայլերս ելին հաշվում և նույնիսկ նրանցից մեկը սուլեց յետելիցս, յերբ բավական հնուցա:

Տանտերերս տանն ելին ու սիրալիր բարեկեցին ինձ: Մարոն տանը չեր, ու չգիտես ինչու, գոհ մնացի, վոր բացակայում ե...

Մենյակիս դուռը մակեցի ու պառկեցի քնելու:  
Գիշերը չեյի քնել ամբողջ որն ել թափառել եյի,  
զլուխս ծանրացել եր ու քունը միանգամից վրա տա-  
լով հաղթահարեց ինձ: Յել յես աչքերս բացի միայն  
այն ժամանակ, յերբ արել մոտենում եր լեռան դա-  
դաթին:

Մարոն կաթ ու ձու բերեց: Հագել եր ամենորյա-  
կապտավուն շրջազգեստը:

— Յերեկ ուր եյիր, ամբողջ որը չկայիր տանը,  
հարցրեց նա խոսքի բանվելով հետո:

— Հեջ, գնացել եյի գյուղի շրջակայքը դիտելու:

— Մենակ եյիր գնացել:

— Բա, ուս հետ,—պատասխանեցի յես շեշտակի  
նայելով նրան:

Մարոն կարծես վոշմանեց իր տված հարցից,  
ընկավ յերկմանքի մեջ ու չեր իմանում ինչ ասի:

Յես նրան չբավիրեցի նստել, բայց նա նստեց:

— Զերոնք տանը չե՞ն, ինչ ե:

— Հայրս ու յեղբայրս գնացին արտ, իսկ մայ-  
րիկս բանջարանոցն ե ջրում:

— Քեզ թողել են տնպահն:

Մարոն ժպտաց միայն և վոչինչ չասաց: Հետո  
վեր յելավ, կաթը տաքացրեց և ինձ համար նախաճա-  
շիկ պատրաստեց, բայց նա չմասնակցեց իմ սեղանին,  
առարկելով, վոր կուշտ ե:

Այն որը յես ինձ լուրջ պահեցի և այլես խոսք  
չբացի սիրո մասին, այդ յերեկի նրան գյուր չեկավ,  
վորովհետեւ մի տեսակ չարացած եր յերենում:

\*

\*\*

Գյուղում ընդհանուր հետաքրքրության առարկա

եյի դառել: Կանայքն առանձին ուշաղըությամբ եյին  
նայում ինձ, մատով ցույց տալիս, փսփսում:

Մի անգամ ճաշելու տեղն ինձ հարցրէն, թե որ-  
դյոք ձի՞շտ ե, վոր նշանվել եմ տանտիբոջս աղջկա  
հետ. յերբ ժխտեցի այդ լուրը, հարց տվողները զար-  
մացած իրար յերեսին նայեցին ու չեյին իմանում  
ինչ տակ:

Գյուղում բերնե-բերան խոսում եյին, վոր յես  
նշանվել եմ Մարոյի հետ...

Գյուղը փոքրիկ եր, ամեն ինչ ափաշկարա, տե-  
րեն անգամ շարժվի, բոլորը կիմանան:

Մարոյի ծնողներն ել ավելի հորգանքով եյին վար-  
վում հետո, վոչինչ չեյին խնայում ինձ հաճոյանալու  
համար: Չլինի, հիրավի, ինձ փեսացուի տեղ են գնում:  
Առանձնապես հետաքրքրվում եյին իմ անցյալով ու  
ներկայով, բնակարանիս, ոռձիկիս մասին տեղեկու-  
թյուններ եյին հավաքում...

Այդ բոլորն ազգում եր ինձ վրա, փոխանակ  
կաղզուրկելու՝ մկսում եյի նիհարել: Աւ մի կարեռ,  
ճակատազրական հարց վճռող մարդու նման աշխա-  
տում եյի մենակ մնալ հեռու տեղեր գնալ, վորպեսզի  
կարողանամ լուծել ուղեղումս խոնված հարցերը:

Լավ որերին, նախաճաշից հետո գնում եյի լեռ-  
նային վասակում լողանալու: Վորքան հաճույքով եյի  
կատարում լոգանքն այդ գուլավ զով ջրում: Լողանա-  
լուց հետո պառկում եյի կանաչոտ ափին հանգստա-  
նալու:

Մի անգամ այդպիս պառկել եյի ու ընկել մըտ-  
քերի մեջ, մեկ ել վերեից, լեռան լանջից մի մեծ քար

յեկավ ու շրմաց հենց զլիսիս մոտ, քիչ մեաց զլուխս ջախջախվեր...

Իսկույն վեր թռա, նայեցի շուրջու, լիուան անտառածածկ լանջը, վոչ վոք չկար. ասենք, յեթե մարդ ել լիներ, ծառերի, խոտերի տրանքում կարելի՞ յեր նկատել: Գյուղը բավական հեռու յեր, բլուրի յետեք: Ահա և յերկրորդ քարը, վոր սուրաց կողքիցս և ընկավ ջուրը:

Պարզ եր, վոր ծառերի արանքում պահված մի չար ձեռք ուղղում եր վոչնչացնել ինձ... Վերահաս վըտանգից խուսափող մարդու վճռականությամբ արագորեն շարժվեցի դեպի գյուղը:

Յերեկոյան, յերբ զգուղի կոռպերատիվից կենսասթերք եյի գնում, կոռպերատիվի մոտ Վանոցին տեսա մի քանի ջանել գյուղացիների հետ: Նա այնպէս նայեց ինձ, վոր կարծես ուղղում եր հարձակվել վրաս և տեղնուտեղը խեղղել... Հեռանալիս լսեցի նրա և ընկերների լպիրը հոհոցը:

Ճանապարհին, մի պառավ գյուղացի կին, վորից մի քանի անդամ ճուտ և ուրիշ ոււեկեղեն եյի գնել, կանգնեցրեց ինձ և մի կողմ տանելով՝ խորհրդավոր դադտնիք հայտնող մարդու դգուշությամբ ասաց.

— Զգույշ յեղիր բալա ջան, եստեղ քո զլուխը կուտեն...

Հետո ավելացրեց, վոր իբր Վանոն և իր ընկերները հարմար առիթ են փնտում ինձ մլամակու, իբր Վանոն միտք և ունեցել Մարոյին առնելու, նրանց ծնողները նույնիսկ յերկուստեք հավանություն են ավել, իսկ հիմի աղջիկն ել Վանոցին յերես չի տալիս, աչքը քեզ և զցել իբր դու նրան խոսք ես տվել առնելու, խելքահան արել...

Վերջում խորհուրդ տվեց, վորքան կարելի յեռաւ հեռանալ ես կողմերից:

«Ով զիսե, զուցի փորձում ե ինձ, խոսք քաշում բերանիցս և տանում սրան-նրան»: մտածեցի, ու զրահամար ել բարվոք համարեցի վոչինչ չասել:

Բայց նրա խոսքերն իդուր չեյին: Յես ինքս նախազգում եյի, վոր մի բան պիտի պատահի: Դրա համար ել զգույշ եյի մնում, զյուղից գուրս չեյի գալիս, այլ ևս չեյի լողանում, իսկ իրիկունը շուտ եյի պառկում քնելու:

Բայց զիշերները հանգիստ չեյի քնում, ինչ վոր ստվերներ եյին շարժվում գուրսը, վոտնաձայնի, փըսփաոցի ձեռ եր գալիս: Շները շարունակ անհանգիստ վաղվզում եյին գես ու դեն, հաջում եյին, աղմկում:

Մարոյի հայրը փոխաղրվեց իմ պատշգամբը և զիշերներն այնտեղ եր քնում: Թեև մենք այդ մասին վոչինչ չխոսեցինք, բայց ինձ համար պարզ եր, վոր նրանք գիտեյին ամեն բան և ուղում եյին վտանգի առաջն առնել:

Մարոն ավելի ու ավելի ուշագիր եր դեպի ինձ, ճամբաս եր պահում, ամեն կերպ աշխատում եր հաճեւմի լինել: Վերջերս նրանց տանը շարունակ վիճում եյին, բայց չեյի կարողանում վորոշել, թե բանն ինչո՞ւմն ե: Յերբ գալիս եր մոտս, ինձ թվում եր, թե նա լաց և յեղիւ այնպես խաշմուաված եր դեմքը և խոնավ եյին աչքերը:

«Ինչո՞ւ և լաց լինում այդ արև աղջիկը, արդյոք ինձ համար և լաց լինում»... Մտածում եյի ու միաժամանակ խուսափում հարցնել նրան: Ինչո՞ւ եյի խուսափում, յես ինքս ել չգիտեյի:

Այդ բոլորը, սակայն, ստիպում եյին ինձ կատարել պառավ կնոջ խորհուրդը, վորչափ կարելի յեշուու հեռանալ այդտեղից:

Յեկ փնտուում եյի մի հարմար առիթ:

Առիթը ներկայացավ: Մի որ նամակ ստացա, վոր մայրս հիվանդ և ու շտապ կանչում և ինձ թիգվամաս: Այդ լուրը տհաճելի տպավորություն գործեց տանտերերիս վրա:

Իսկ Մարոն գույնը գցել չեր իմանում ինչ անի...

Իբրև կապելիս յես նրան շարունակ խրախուսում ու նախապատրաստում եյի այն մտքով, վոր կը դիմամ քաղաք ու նորից կվերադառնամ նրան տանելու...

Նրա լուսաթաթախ աչքերից կախվեց արտասուքի յերկու կաթիլ և մարդարիտների պես պսպղաց:

— Ե՞ն, յես զիտեմ, կգնաս ել չես զա, մինչեանգամ կմոռանաս մեր գեղի անունը,—ասում եր նարցունքները սրբելով:

Մինչ յես հավատացնում եյի նրան, վոր այդպիսի լինի...

Մեկնելուս պահին, յերք մնաս բարե ասի Մարոյի մորը և լի ու լի վարձատրելով շնորհակալությունն հայտնեցի նրանց սիրալիր վերաբերմունքի համար, նա համառօրեն նայում եր ինձ ու սպասում, վոր վորեն բան պիտի ասեմ և նա խիստ դժգոհ մնաց, վոր այդ բանը չափեց...

Իսկ Մարոն դիտմամբ, թե ինչպիս, բացակայում եր տնից և յես չկարողացա վերջին մնաս բարե ասել իմ արե աղջկան...

Քաղաքը կրկին կլանեց ինձ իր առորյա հոգսերով և աշխատանքով: Յես ապերախտ գտնվեցի ու չըդատարեցի իմ խոստումը...

Բայց ինչու միանդամից տարչեցի ու խոսք տվի ամուսնանալ նրա հետ... Մեղավորը Մարոն եր, ինչու այդպիս գալար ու պայծառ եր Մարոն, մեկ ել իմ ջահելությունն ու անփորձությունն եյին մեղավոր:

Այդպիս եյի պատճառարանում իրերի զրությունը:

Բայց նա իմ հոգում դրավել եր մի լուսավոր եջ և ինձ շարունակ տանջում եր այն միտքը, թե ինչ յեղափ արե աղջիկը, ո՞վ քաղեց այդ վայրի կակաչը...

Այս բոլորը յես պատմեցի իմ մոտիկ ընկերոջը, վորի հետաքրքրությունն առանձնապես վառվեց և մենք վորոշեցինք մի անգամ այցելել այդ գյուղը:

Մեր վորոշումն ի կատար ածվեց մի քանի տարի հետո միայն և մենք միասին ուղենորվեցինք այնտեղ:

Գյուղը շատ եր փոխվել ու ընդարձակվել, նորանոր շենքեր եյին կառուցվել չորս կողմ լավ մշակված փոքրիկ այդիներ ու բանջարանոցներ կային, խրճիթներցարան կար, ակումբ...

Գյուղի շքեզ բնությունը անջնջելի տպավորություն թողեց ընկերոջն վրա:

Գյուղացի կանանցից իմացա, վոր Մարոն ամուսնացել ե, բայց վոչ վանոյի հետ, վորին զինվոր եյին տարել ու չեր վերադարձել:

Մարոյին տեսա, յերեխան գրկած կանգնել եր աղքայուրի մոտ: Իսկույն ճանաչեց ինձ և հակառակ իմ սպասածին՝ ուրախացավ...

— Յես զիտեյի, վոր կգնաս քաղաք և կմոռանաս ինձ, այդպիս ել յեղափ, —ասաց նա ժպատալով:

— Ե՞ն, Մարո, բայց յես քեզ չեմ մոռացել...

Իմ խոսքերը Մարոն ծիծաղով ընդունեց, վորով հետև նա չհավատաց նրանց անկեղծությանը:

Այն հարցիս, թե ում հետ եւ ամուսնացել և գո՞յն և իր կյանքից, նա այսպիս պատասխանեց:

— Քո գնալուց հետո, շարունակ քո մասին եյի մտածում, ուտելի խմելս մոռացել եյի, զիշերներն ել վատ քնում, այնպիս եյի նիհարել ու մաշվել, վոր դառել եյի անձանաչելի: Ծնողներս ել շարունակ հանդիմանում ու խրատում եյին, վոր մոռանամ քեզ: Յերկար սպասեցի, վոչ գալիս եյիր, վոչ ել լուր կամ նամակ ուղարկում և սիրառ միանգամից կտրվեց... Հետո ամուսնացա մեր գեղի տղաներից մեկի հետ, վոր յերկար տարիներ քաղաքումն եր ապրում ու սովորում, իսկ այժմ մեր գյուղինորհրդի նախագահն եւ շատ-գոն եմ, շատ...

Յերկել դիտմամբ շեշտեց «շատ դո՞ն եմ» խոսքը, վոր ինձ չարացնի:

— Իսկ վանո՞ն, ինչո՞ւ վանոյին չառար:

— Ե՞ն, դա յերկար պատմություն եւ, չարծե գրա մասին խոսել, — ասաց Մարոն խուսափելով հարցիւ պատասխանելուց:

Այժմ Մարոն ավելի յեր փարթամացել ու պայծառացել, բնությունը չեր խնայել վոչ մի գիծ կամ ներկ նրան ավելի շքեղ դարձնելու համար... Այդ գըլ-խապույտ գեղեցկությունն ագահորեն դիտում եր քիչ հեռու կանգնած ընկերս:

— Իսկ դու պսակվեցի՞ր, թե դեռ վնասում ես...

Ժխտական պատասխանս առանձին հաճույքով ընդունեց Մարոն: Ինչո՞ւ ուրախացավ Մարոն, մնաց ինձ համար գաղտնիք:

Ապա մնաս բարկ ասավ և ջերմորեն համբուրելով իր թմբլիկ, կապուտաչուի մանչուկը՝ հեռացավ սիրածեմ մարմինն որորելով նազելիորեն:

Մի պահ տեղն ու տեղը քարացած՝ հիացմունքով նայում ելինք նրան:

— Վորքան հիմարն ես յեղել, վոր ձեռիցդ բաց ես թողել այդ հրաշալիքը. ինչպիս յիրեւում եւ մեշանականությունդ են ժամանակ բարձր աստիճան և ունեցել... — ասաց ընկերս, յերբ զյուղից վերադառնում ելինք:

Ցեվ նրա հանդիմանությունը շատ տեղին եր...

1928 թ.

## Ց Ա Ն Կ

1. — Եղլկար Մինասը
2. — Միլիտոնի Դավիթը
3. — Կայարանում
4. — Ամենահարմարը
5. — Բիբժիկիլը
6. — Եշխատանքի բորսայում
7. — Յենթաբաժնի վարիչը
8. — Մասնագետը
9. — Աթոռը
10. — Հնից նորը
11. — Եռնու
12. — Առև աղջիկը

ՀՀ Ազգային գրադարան



NL0342033

31669